Теперь сержантский состав - люди-канистры. Их невозможно не узнать по звонким голосам. А ну-ка хором, ребята! Жаве-е-ели-и спирт!!! Хорошо!

И уже последними в дворянской колонне плетутся рядовые дворянги. А они-то чего хотят? Послушаем. «Долой бедность и бомжей! Содержимое мусорных баков - законным владельцам!..»

Ого! Ряды демонстрантов сразу построились и обмускулились. Жрецы физической - и только ее! - культуры. Спортсмены независимой Армении! Лозунг их прост: «Ближе, ниже, слабее!»

А вот и они, побрившиеся по случаю водители маршруток. Сегодня - пешком, но с транспарантом: «За 100 драм жизнь отдам!»

Что за аромат? Запахло горюче-смазочными материалами. Так и есть - делегация неопознанных нелетающих бензоколонок. Они похожи на приземлившиеся летающие тарелки и светятся всеми огнями. Несут забытый многими лозунг: «Клянусь папой - 100% бензин!» Отдельной колонной идут слегка понурые папы. Им многое пришлось вынести. А уж мамам...

Идут наши славненькие медработнички - верные служители лечебно-популярного культа «Братья во Шприце». На каждого служителя - три служительницы. «Сестры Там Же» - медсестры! Но особо отметим особо привлекательных особ, номинанток конкурсов: «Мисс Клизма», «Миссис ГиГиена» и «Тикин Поли Шор»... Конечно же, все узнали многочисленных санитарок и радостно вздрогнули.

Ах! Позор моим глазам! Нет, не так. Слава деловым соотечественникам! Ох! Хором приветствуем лиц максимально женского пола. Эх! На марше - жрицы любви. И еще трижды: «Вах!», а местами - «Цавт танем!»

Где первые - за ними и вторые. Имеются в виду представители второй древнейшей профессии. Четвертая СМИрная власть. Как всегда, в первых рядах - политические обозреватели. Им приходится труднее всего. Потому что вся прелесть нашей внутренней политики, весь ее аромат - в ее несоответствии нормам гигиены. А обозревателям надо все это анализировать. А это пахнет... Бредут они усталые. Не знают, куда, не знают, зачем, не знают, не знают, не знают...

Колонна обозревателей плавно продолжается колонной тележурналистов-трансляторов. Эти знают. Потому что им перевели. От них что требуется? Хотя бы приблизительно догадываться о значении терминов, которыми усыпан переведенный текст международной новости. «Вуучим!» - скандируют они.

Да здравствуют лучшие из лучших! Слава спортивным комментаторам! Идут тремя обособленными группами. Потому что нами уважаемый спорт - один, а их - много.

Испанский, итальянский, английский футбольные чемпионаты. «НистеРЛой!» - выкрикивают англичане и томно добавляют: «Зероу-зероу...» Испанцы темпераментнее, они определились: на спортивных майках, надетых поверх дубленок, начертан девиз: «Кто угодно, только не «Реал»! А вот и наша гордость-краса - одиноко бредет, спотыкаясь, иностранец армянского розлива. Ему все неинтересно, ему спать хочется - сейчас и вообще. Он мудр, он знает рост в сантиметрах всех профессиональных футболистов всех

времен и народов. И ему больше ничего неинтересно.

Стараются наши, внезапно многочисленные поп-звезды. Несут радостный слоган: «Наше - для поп-музыки!»

Но уже показались самые серьезные в этот праздник люди - сосредоточенные ряды отечественных буддистов. Идут и медитируют на гастрономические темы: «Оливье - вчерашний день! Буд - вот это да!», «Толма - ладно, но буд - да!», «Бас-турма - естественно, но буд - да!!!»

Ну и, как всегда, на запах съестного тя-

нется национальная интеллигенция. И, как всегда, именно в дни застолий особенно к месту.

Р. С. Внимательный читатель спросит с хитрецей: «А где отечественные олигархи? На демонстрации не ходят? Бреззуют?!» Не бреззуют. Кто в депутатскую колонну пристроился, а некоторые опоздали. Так как глубоко задумались над смыслом собственного транспаранта: «Деньги есть, сила есть, ума... палата!»

Ара БАГДАСАРЯН.

Всеобщее благо и личная корысть



На жаргоне журналистов, олигархи - это крупные бизнесмены, из-за кулис диктующие свою волю министрам и президентам.

Это определение более или менее соответствует представлению Ленина о финансовой олигархии как одной из характеристик «последней стадии капитализма». Но оно довольно далеко от словарного значения этого слова. Даль, например, трактует олигархию как «образ правления, где вся высшая власть - в руках небольшого числа вельмож, знати, олигархов». Согласно Платону, олигархия - это государственное правление, основанное на имущественном цензе: государственные должности имеют право занимать только люди имущие. Платону же принадлежит характеристика олигархии как порочной формы государственного устройства, в котором целью правящих является не всеобщее благо, а личная корысть. Аристотель развил и детализиро-

вал Платона. Исходя из реалий современной ему Эллады, он разделил олигархию (корыстную власть немногих - богатых и знатных) на четыре вида. Они различаются способами формирования правительства (цензовая выборность, кооптация - пополнение какого-либо выборного органа собственным решением, без проведения новых выборов, наследование должностей, самозахват). Олигархи различаются также степенью поляризации (от умеренной до максимальной), разной степенью законности и беззакония (от несправедливого законодательства до полного произвола).

Если современную армянскую систему власти рассматривать через призму классических представлений об олигархии, то она соответствует второму типу олигархии по Аристотелю: к власти допускаются только богатые; имущественная поляризация велика, но еще не максимальна; власть формирует себя сама, фактически способом кооптации; законы есть, но они написаны начальником для пользы начальства. Можно еще добавить, что это второй тип, но с разноразличными отклонениями в сторону первого, «умеренного» типа (власть не полностью самофинансируется, все-таки есть элементы выборности) и в сторону третьего, «династического» типа олигархии (имущественная дифференциация приближается к максимальной, появились элементы наследования власти).

Обычно в качестве олигархов называют десяток имен самых крупных олигархов Армении. Между тем безусловными олигархами у нас являются представители номенклатуры. То есть министры, придворные, наместники президента, губернаторы, мэры, избранные на эти должности благодаря... капиталу и связям. Все они увеличивают свое состояние благодаря участию во власти.

Лев ОГАНЕЗОВ.

ГОЛОСА ИЗ ПРОШЛОГО

Записи стихотворений Севака в исполнении Мгера Мкртчяна, Бабкена Нерсисяна, Владимира Абаджяна, Рачуи Джинанян и других издательский директор «Айренинфо-Артагерса» Варужан Хастур за 1 год снял из национальной фильмотеки и архива отдельных личностей и обработал их, преподнеся поклонникам поэта лазерный диск. Он начинается словом Католикоса Всех Армян Вазгена I, произнесенным во время церемонии панихиды Паруйра Севака. «Церемония длилась более 20 минут. Мы ограничились 5 минутами. Запись проводилась непосредственно в церкви, и качество было не совсем удовлетворительным», - говорит Варужан Хастур. Запись сопровождается духовной музыкой, исполнением песен Лусине Закарян, а также музыкой Тиграна Мансуряна. Все редакторские работы над диском были сделаны кандидатом филологических наук, доцентом Суреном Саакяном. «Я вынес из архивов записи длительностью в 10 часов. Это записи встреч Севака, исполнения «Неумолкаемой колокольни». Однако нашей задачей было вобрать в лазерный диск лирические стихотворения Севака», - отмечает Варужан Хастур.

Этот диск - первый выпуск из серии «Голоса из прошлого». В настоящее время в стадии выпуска находится запись «Гамлета» в исполнении Ваграма Папазяна, которое состоялось в 1954 году.

По заверению В. Хастура, он совместно с Союзом писателей собирается создать литературную студию, целью которой будет сохранение, обработка и выпуск звуковых перл писателей и интеллигентов. «В архивах есть довольно богатые звукозаписи, в частности, записи из спектаклей «Самвел», «Геворк Марзпетуни», - отмечает он. Эти диски, по глубокому убеждению Варужана Хастура, также очень помогут в работе учителям. А школьники смогут слушать их, не отрываясь от своих игр.

По публикации Аревик БАДАЛЯН.

«Джамминг» стучится в дверь



Век такой. Богат не тот, у кого грубая сила или дары недр. Но даже когда сила есть - необходимость ума все равно актуальна. Богатства от природы имеют свойство кончатся... Хотя и не успеют они иссякнуть. Вот-вот придумают чем заменить нефть-газ и прочие, ставшие к тому времени бесполезными, ископаемые. Запасами энергии уже никого не удивишь. Теперь главное - информация! Кто ею владеет в большем объеме, тот и силен. А чтоб обладать информацией, надо уметь ее транспортировать. Потому-то весь мир так дружно сел на иглу мобильной телефонной связи.

В Финляндии и Италии сотовый телефон есть у четырех из пяти жителей. Это включая грудных младенцев и древних стариков. Еще лет пять назад в США на руках (в самом прямом смысле слова) имелось более 150 млн мобильных телефонов. Что сейчас там творится - уму непостижимо! То есть каждый отдельно взятый гражданин этой супердержавы становится индивидуально доступен в любой отдельно взятой точке жизненного пространства. А, между прочим, пространством своих жизненных интересов они считают всю планету.

У меня есть друзья в Бельгии (местная семья, из Еревана), у которых дома четыре (!) мобильного и нет простого проводного домашнего телефона. Потому что содержать обычный очень дорого. А они (друзья мои) в этих самых евро не купаются. Складывается ситуация, когда мобильник там (не только в Бельгии, а в любом развитом государстве) скоро будут выдавать вместо сдачи, когда мелочи нет.

Это в развитых странах, а у нас? У нас пока мало сотовых телефонов. У нас это проблема, и наличие мобильного говорит о высоком статусе обладателя. Но ведь будет же больше. Много больше. Но даже в нынешнем ничтожном количестве «сотки» сильно преобразовали нашу жизнь.

Не могу не рассказать. Мы наловчились посредством мобильного даже... Нет, это стоит описать подробнее. Ереванская свадьба. Все как положено. Невеста в белом подвенечном платье, жених... (о нем потом), родственники с обеих сторон, «БМВ», «Мерседесы» и джипы голосят, букеты цветов, венчание в церкви, все

снимается на несколько видеокамер, очень торжественно и трогательно - рождается новая ячейка общества. Теперь о женихе. Присутствует, конечно, но виртуально. Он по делам в Америке и участвует в торжествах по непрерывно включенному мобильнику! Как в песне поется, все реально и виртуально!

Так вот, прогнозирую. В течение 2005 года плотину прорвет. Номеров станет достаточно, подешевеет их выдача и сами аппараты. И мы ринемся приобретать «сотки». Нация мобилизируется (в данном случае - от слова «мобильник»). Сотовый телефон из средства роскоши наконец-то превратится в инструмент передачи информации. То есть на трель мобильного вся маршрутка (включая не сильно бритого водителя) может хором ответить: «Уже еду!»

Но мир устроен так, что вожделенные пряники чаще всего укомплектованы соответствующими кнутами. Возможно, уже настало время параллельно с покусыванием телефонного монополиста готовиться ко всем сопутствующим последствиям второй волны телефонизации армянского населения. Какие последствия? Пожалуйста.

Дело в том, что сегодня самую большую прибыль приносят не мобильные телефоны, а... борьба с ними. Уж очень они стали мешать нормальному ходу жизни. Первыми начали арабы. В частности, бывший король Иордании Хуссейн. Назойливые трели мешали ему молиться, и американской фирме был заказан аппарат, подавляющий телефоны во всех покоях дворца. Недавно «глушилку» приобрела и царствующая семья Великобритании, где придворные тоже, как оказалось, не особенно берегли покой королев.

Но веяние распространяется по всему миру. Сегодня в Финляндии свыше 70% не против установки «глушилок» в общественных местах. Во Франции положительно ответили на этот вопрос 85% опрошенных. Неудивительно, что министр промышленности Франции Патрик Деведжан (внимание! - наслаждайтесь) подписал указ, разрешающий театрам и кинотеатрам устанавливать «глушилки». А в Австралии и Японии такие законы действуют уже пару лет. По Германии хо-

дят поезда с купе «без телефона», и, заказывая билет, можно сообщить об этом пожелании кассиру. Хочешь поговорить - добро пожаловать в тамбур.

Зарождается новая мощная отрасль в электронике - в мире производят уже десятки тысяч «глушилок». Для этой индустрии появилось даже специальное слово - «джамминг».

А ведь пора и нам озаботиться. Для начала стоит подумать на пару лет вперед. Что будет? В смысле, какие негативные процессы могут происходить? Ведь у нас если есть хоть малейшая возможность чего-нибудь малоприятного, то, увы, оно обязательно произойдет... Потом вернется и произойдет снова.

Так вот, в Армении скоро «глушилки» будут необходимы. Где обязательно их устанавливать? В заведениях культуры - в театрах, кинотеатрах, концертных залах, музеях, а также в церкви и т. д. Когда сценический Гамлет задается извечным вопросом - «алло!» звучит неуместно. Когда верующий беседует с Господом - звонок не к месту. Когда певица берет верхнее «ля» - остальные должны сопереживать ей, а не хвататься за свои трубки. Учебные заведения - школы, институты (у нас и институты не осталось - одни университеты) и... может быть, даже детские сады. Трудно, понимаете, остановить нашего гражданина, дорвавшегося до вожделенной услуги, - он и для ребенка возьмет пару штук! Вопрос из мобильного типа: «Вонцес, апер?!» не способствует усвоению знаний и мешает воспитательному процессу. Транспортные средства - самолеты, поезда и (личная просьба) маршрутки. В самолетах «сотки» мешают переговорам пилотов с диспетчерами, поездами мы практически не пользуемся, а маршрутки... Сказал же, личная просьба.

Ара БАГДАСАРЯН.

P. S. Между прочим, «глушилки» можно покупать готовые, а лучше использовать наши оставшиеся инженерно-технические кадры. И дешевле обойдется, и ребят можно загрузить приличной работой. А потом, кто знает, может, и наладим экспорт «глушилок» в сопредельные страны, богатые энергоносителями, но не технически образованным персоналом.

9. Героиню ринга зовут Тамара-Элен

должна быть многократная обладательница Кубка мира по кикбоксингу, чемпионка России по боксу Лидия Андреева. Но она почему-то отказалась от поединка. В итоге вызов армянки приняла Акимова, которая успела провести 13 боев на профессиональном ринге.

За короткий промежуток времени

Тамара-Элен успела уже получить немало приглашений, с которыми еще не определилась. Ну а самый главный для нее поединок в этом году — бой за звание чемпионки мира, намеченный на июнь в Нью-Йорке.

Грайр НАЗАРЯН.

Барев, Хачатур, барев, Борис!

До сих пор решение братьев Темкиных переселиться насовсем в Армению вызывает непонимание у их знакомых как в родном Питере, так и в Ереване. Людей, не принявших это известие в штыки, Хачатур и Борис перечисляют по пальцам — настоятель армянской церкви в Санкт-Петербурге, консул Армении... В Ереване же этот список и того короче.

«Армяне должны жить в Армении - вот и все!» — так обосновывает свое решение сменить место учебы и жительства старший из братьев-близнецов Хачатур Темкин. Сейчас оба брата — студенты Армянского государственного инженерного университета, куда они перевелись с первого курса Санкт-Петербургского морского технического института (бывший кораблестроительный институт). Студентами из-за рубежа в наших вузах уже никого не удивишь. Но обычно за нашими дипломами едут представители диаспоры, которые после учебы возвращаются на родину и у коих в родословной нет примесей неармянской крови. Темкины же армяне лишь наполовину. Да и то армянкой является их мама, а не отец. Так что, казалось, им прямая дорога жить и учиться в родном Питере. Увы. Решение сменить российскую прописку на армянскую семья принимала не раз. Однажды, году этак в 87-м, семья даже приехала в Ереван, чтобы остаться насовсем, но из-за отсутствия жилья вынуждена была отказаться от мечты. Впрочем, это была мечта лишь мамы: Рузанна Срапян жаждала вернуться на родину едва ли не с первого дня поступления в Ленинградский мединститут. Но встретила свою вторую половину — студента того же вуза Владимира Темкина, — подарила ему дочь и двух очаровательных близняшек, и от задумки вынужденно отказалась аж на... 30 с лишним лет. Однако долгие годы, проведенные на чужбине, не искоренили свойственный ей патриотизм, и это замечательное чувство она передала и своим мальчикам. Вплоть до трех лет ни Хачатур, ни Борис, по их словам, не знали по-русски «ни бельмеса». Гости общались с ними через переводчику-маму. Впрочем, и папа тоже с успехом выполнял эту роль — говорить по-армянски он не научился, но понимал

язык прекрасно. Именно он обучил ребят русскому, незадолго до поступления в школу. Но думали малыши по-армянски, оттого в первых двух четвертях выше троек их отметки по-русскому не поднимались. Да и вплоть до 9 класса отличных отметок по этому предмету у них так и не появилось. А вот знаний армянского прибавилось — его они оттачивали на занятиях в армянской воскресной школе в Питере. Где, кстати, были первыми учениками. Преуспели не только в грамматике, но и в армянской истории, литературе и в остальных предметах. Темкины вообще чрезвычайно толковые ребята — первый семестр обучения на факультете робототехники Хачатур завершил на «отлично», а у Бориса всего одна четверка. Так что в миноробразовании Армении, наверняка, не сожалеем об исключении, сделанном для близнецов, коим был выделен госзаказ в техническом вузе. Обычно закордонные студенты бесплатно обучаются лишь в случае, если поступают на арменоведческие факультеты. К тому же россиян перевели с аналогичного факультета Санкт-Петербургского морского технического института не курсом ниже, а на тот же курс, что делается весьма редко.

С момента переселения в Ереван прошло уже более полугода, но о «содеянном» ребята ничуть не жалеют. И учиться в новом вузе, вопреки предсказаниям армян Питера, не так уж и сложно. И бытовые трудности не так уже страшны, да и квартира в 1 Норкском массиве, отдаленном от центра, их вполне устраивает. Даже тот факт, что мама, прежде работавшая завлабораторией поликлиники Центрального района Санкт-Петербурга, пока не может найти работу, их не настораживает. Свое будущее Темкины видят в Армении. Даже несмотря на то, что оно менее радужное, нежели могло быть в Питере — после окончания тамошнего вуза им светила работа в закрытом предприятии с высокой зарплатой. Но счастье, полагают юноши, не в этом, а в духе родной земли. Так что и жениться парни намерены на армянках, да и будущих детей настроены отдать исключительно в армянскую школу.

Ася ЦАТУРОВА.

Подхалимство и презумпция уважения



В указе Петра I от 9 декабря 1709 года говорится: «Подчиненный перед лицом начальствующим должен иметь вид лихой и придурковатый, дабы разумением своим не смущать начальства».

Если человек очень любит начальство и откровенно свою любовь демонстрирует, значит, чего-нибудь хочет украсть или уже украл. Лизоблюдство заразно и перерастает в идолофобию. Подобная болезнь есть везде, но у нас принимает особо затажные формы с тяжелыми осложнениями. При всех абсолютных монархиях, при дворах всяких Людовиков и Карлов льстецов было предостаточно. Но

Европа уже сотни лет живет при демократии, при которой лесть стала почти бесполезной. А политическая элита нашего общества - в основном выходцы из партии, комсомола и КГБ. То есть из тех структур, где карьеру можно было делать в значительной степени только через подхалимаж.

На самом деле процесс подхалимажа пусть негласно, но поощряется. Ведь подхалим всегда рассчитывает что-нибудь с этого поиметь. В демократических странах, в той же Германии, к примеру, вы можете сколько угодно рисовать, ваять канцлера, писать о нем только положительное - ничего за это вы не получите. Ни привилегий вам не дадут, ни мастерской, ни галереи не откроют, ни должности не повысят. Даже если канцлеру какая-нибудь работа и понравится (люди вообще падки на лесть), у него и власти такой нет - награждать угодивших ему художников и писателей.

Я вовсе не считаю, что президента надо всегда ругать. Действующий глава государства, так же, как и флаг, герб, - это в известной степени символ государства. Поэтому в уважении к президенту ничего

странного нет, только все хорошо в меру. Человек, избранный народом на высший пост, заслуживает того, что я называю презумпцией уважения. Судить же его надо по делам, трезво и зазря не хаять, но и с панегириками не торопиться. А вдохновенные дифирамбы лицу, находившемуся при исполнении служебных обязанностей, я бы расценивал как оскорбление общественной морали и покушение на государственные устои. Подхалимство и чиновничество представляют для общества такую опасность, что им следует уделить специальную статью в Уголовном кодексе. А если это невозможно, то я бы создал специальную общественную комиссию или жюри, которое ежегодно определяло бы преуспевших на почве угождения начальству.

Я подозреваю, что у основной массы взрослых наших соотечественников, большую часть своей жизни проживших в Советском Союзе, отношения с властью просто дикие. Они или испытывают перед властью почти сексуальный восторженный трепет, или, наоборот, ненавидят власть во всех ее проявлениях.

Лев ОГАНЕЗОВ.

ԱՅՍՊԵՍ ԷԼ ԱՊՐՈՒՄ ԵՆՔ

Սկստե՞լ եք, թանկագին քույրեր և եղբայրներ, որ մեր զարմահարաշ երկրում չափազանց շատ են տոները: Դեկտեմբերից մինչև փետրվար մեզանում ոչ ոք փաստորեն չի աշխատում, որովհետև սկսում ենք խմել արդեն կաթոլիկների Օմեդյան տոներին, իսկ հետո երկար ժամանակ երազում ավարտել՝ զոնե բուդդիստական Նոր տարվա նախօրեին: Դեպի խմելը թողնելու վերջնաժամկետը սահուն շարժման ընթացքում ձեռքի տակ են ընկնում քրիստոնեական Նոր տարին, լուսավորչականների Սուրբ ծնունդը, հին Նոր տարին և չինացիների Նոր տարին: Ի դեպ, վիճակագրությունը պնդում է, որ բոլոր տոնական օրերի մեջ հարբեցողության հողի վրա կատարված հանցագործությունների առավելագույն քանակն արձանագրվում է դեկտեմբերի 31-ին և հունվարի 1-ին: Նոր տարուն իմ հայրենակիցները խմում և խփում են առանձնահատուկ ոգևորությամբ: Նախ, անշուշտ, ազդում է եղանակը: Երբ դրսում ցուրտ ձմեռ է, նույնիսկ ընտրության ողջ բազմազանության դեպքում այլընտրանք չկա: Նստեցիր հեռուստացույցի առջև, հարևանիդ հետ մի-մի թաս խմեցիր, կացինը ձեռքիդ տնով մեկ կնոջդ հետևից լարվեցիր, բռնեցիր, կացնահարեցիր, պառկեցիր քնելու: Երկրորդ՝ միշտ էլ ուզում ես նոր տարուն կյանքդ սկզբից սկսել, ազատվել վնասակար սովորություններից ու զգվեցրած ազգականներից: Ինչևէ: Մենք, եթե չեք մոռացել, կանգ առանք չինական Նոր տարվա վրա: Բայց նույնիսկ նախադպրոցականին է պարզ, որ խմելու գործընթացը չինարեն ավարտելն անհնաստ է, քանզի չինացիներից 4 օր հետո վրա է հասնում տղամարդկանց տոները՝ հունվարի 28-ը (Բանակի օր), փետրվարի 23-ը (Կարմիր բանակի օր), հետո Գարնան առաջին օրը, հետո՝ Մարտի 8-ը, հետո՝ Ապրիլի 1-ը, Ապրիլի 7-ը, Տիեզերագնացության օրը, Ապրիլի 24-ը (տոն չէ, իհարկե, բայց Եղեռնի զոհերի հիշատակին խմելը պարտադիր է): Սահուն անցնում ենք մայիս: Դա, ասեն ձեզ, ընդհանրապես մոռացված մայիս է: Լիքը տոներ և բոլորն այնպիսին, որ չխմել պարզապես անհնարին է: Բոլոր երկրների աշխատավորների կենացը խմել պե՞տք է: Բնականաբար: Ռադիոյի ու մամուլի աշխատողների կենացը պե՞տք է: Աբիժայե՜ շ: Հաղթանակի օրվա կենա՞ցը. դա ընդհանրապես քննարկման ենթակա չէ: Անցանք առաջ: Վերջին զանգի կենացը պե՞տք է խմել: Բա ո՞նց, երեխաները մեր ապագան են: Ամփոփապես դրանից հետո Մայիսի 28-ն է, երբ չհարբելը պարզապես մեղք է: Հետո Հունիսի 1-ը՝ երեխաների իրավունքների պաշտպանության օր: Դրանից հե-

տո մենք դանդաղ, զգուշորեն սկսում ենք դուրս գալ տոների անընդմեջ շարանից: Ինչպես ժամանակին բացատրում էր իմ լուսահոգի հարևան Լիպոն (հետո նա մեռավ խրոնիկական ալկոհոլիզմից՝ սուրբ մարդ էր), տոնական կերուխումից արագ դուրս գալ չի կարելի: Դա սրտին վնաս է: Ահա իսկական հայի կենսունակության գաղտնիքը: Լիպոյին առանց արցունքների մայել հնարավոր չէր: Ոտից-գլուխ կապտած, մարդու էլ մնան չէր, կաշի ու ոսկոր, հազիվ էր կանգնում, ոտքն ու ձեռքը չէին ենթարկվում: Բայց միաժամանակ որքան ուշադիր ու հոգատար էր վերաբերվում սեփական առողջությանը: Որքան մտածված ու հաշվեցնկատ էր գործում, որպեսզի իր ազնիվ սիրտը ցնցումներից զերծ պահի: Ուրեմն այսպես, սրտին վնաս չտալու համար, տոներից հետո ամեն ինչ պետք է անել առանց շտապելու: Առաջին աշխատանքային օրը Լիպոն կրճատում էր խմելը մինչև երկու շիշ օղի, երկրորդ օրը՝ մինչև մեկ շիշ, իսկ երրորդ օրը բավարարվում էր ընդամենը երկու լիտր գարեջրով: Օայրահեղ դեպքում՝ երեք: Ու հոյակապ էր զգում իրեն: Սիրտը խփում էր՝ ոնց որ տիեզերագնացի մոտ: Լավ, անցնենք առաջ: Անառը արձակուրդների ժամանակն է: Սոչի-մոչի գնալ ու մարդավարի հանգստանալ մեզ թույլ տալ արդեն չենք կարող: Մնում է ի՞նչը: Ճիշտ է՝ հարևանների հետ խմելը: Հետո կրկին սկսվում է լարված շրջանը՝ Սեպտեմբերի 1, Ուսուցչի օր, Անկախության օր, Թարգմանչաց տոն, Նոյեմբերի 7... Երբ սկսում է թվալ, որ մի քիչ էլ և վերջապես հույսի նշույլ կերևա, աշխատանքային կոլեկտիվը հավաքվում է, որպեսզի նշի քարտուղարուհի Նառայի ծննդյան օրը, որը սահուն անցնում է պսակադրության, նոր գնումը կամ պաշտոնը թրջելուն կամ սիրելի զոքանչի անժամանակ մահվան կապակցությամբ ուրախ թե՛ֆի: Օայրահեղ դեպքում ձեռքի տակ միշտ կա որևէ բանաստեղծի տարեդարձը կամ որևէ ազգային հերոսի վերահուղարկվողումը: Եվ բոլոր այս դեպքերում պարտադիր պետք է խմել: Ցանկալի է՝ շատ: Առանց դրա չի կարելի: Զե՛՛ որ մեզանում ցանկացած տոնի բանաձևը գտել են դեռևս Արգիշտի թագավորի օրոք: Պարզ է՝ երկու անգամ երկուսի պես. խմում ես մի քանի բաժակ ու... Հետո՝ ոնց ստացվի, մերող կլինեք: Այսպես էլ ապրում ենք: Մի իմաստուն մարդ ժամանակին նկատել է, որ անընդհատ ինչ-որ բան տոնել կարող է միայն շատ հարուստ ու երջանիկ ժողովուրդը: Կամ, ընդհակառակը՝ շատ աղքատ ու դժբախտ:

ԴԱՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ «ՀՈՐՈՄ-ՄՈՐՈՎ» ԱՐԻՆ...

Մեկ տարի ուշացումով

Դեկտեմբերի 17-ին Լոռու մարզի առաջին ատյանի վանաձորի դատարանի շենքի պաշտոնական վերաբացման արարողությանը, բնականաբար, իշխանական ազդեցությունից դուրս գտնվող ԶԼՄ-ներ չէին հրավիրվել, և վանաձոր այցելած արդարադատության նախարարի մասնակցությամբ այդ «պատմական» իրադարձությունը ջանասիրաբար լուսաբանում էին այն ԶԼՄ-ները, որոնք ոչ միայն երբևէ չեն անդրադարձել 16 տարի շարունակ տնակներում ծվարած դատարանի հիմնախնդիրներին (պատահական չէ, որ դատարանի նախագահը իր ելույթում տեղին համարեց անտեղյակների համար բացատրել, թե ի՞նչ է նշանակում դատական-տնակներում), այլև՝ վերանորոգվող դատարանի շենքի շինարարության ընթացքին: Իսկ այդ շինությունը, որը սկսվել էր 2002թ. դեկտեմբերին՝ Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ, պետք է ավարտվեր 2003թ. սեպտեմբերին, մինչդեռ, փաստորեն, ավարտվում է 14 ամիս

ուշացումով: Հիշու՞մ եք, ինչպես էր Աժ նախագահը ամբիոնից դատափետուն արդարադատության նախարարին՝ ՀՀ դատարանների շենքերի նորոգման համար նախատեսված ՀԲ գումարները անարդյունավետ ծախսելու և շենքերի շինարարությունը անավարտ թողնելու համար, նախարարն էլ արդարանում էր, թե պատճառը շինանյութերի գների բարձրացումն էր, ցրտաշունչ ձմեռը...: Իսկ հիմա, պարզվում է, կոնկրետ վանաձորի դատարանի շինարարության ուշացման համար մեղավորը շինարարության մի մասն իրականացրած ՍՊԸ-ի ղեկավարն էր, որն ակնհայտ տուգանքի է ենթարկվել ՀԲ-ի կողմից: Թե ովքեր են հանրապետության այլ դատարանների շենքերի վերանորոգման ուշացման մեղավորները, մի առանձին ուսումնասիրության անհրաժեշտություն կզգացվի. թերևս, մեղավորը կրկին շին-ղեկները դուրս կգան... Դատարանին մոտ կանգնած աղբյուրներից տեղեկացանք, որ շենքի վերանորոգ-

ման արարողակարգի ժամանակ հեռուստաօպերատորներից մեկը սայթաքել և... գլորվել է ներսի աստիճաններից: Դեպքն, ինչ խոսք, ոչ միայն ցավալի, այլև՝ առավել քան խորհրդանշական է այն արտացոլում է մարդու իրավունքների պաշտպանության իրական վիճակը հայաստանյան դատարաններում. անկախ նրանից, դատարանը շենքու՞մ է, թե տնակում: Ըստ լուրերի, 1988թ. երկրաշարժից հետո 16 տարի տնակներում աշխատած դատավորների համար այնքան անտվող է եղել եվրոպերանորոգված դատարանին հարմարվելը (դատարանի շենքը հիմա ավելի փառահեղ տեսք ունի, քան խորհրդային տարիներին), որ ՀՀ նախագահն օրերս ստիպված է եղել մայրաքաղաքում նրանց համար հատուկ դասախոսություն կարդալ՝ «Ինչպե՞ս վարվել եվրոգույքի հետ» թեմայով:

Գայանե ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ո՞Վ Է ԱՄԵՆԻՑ ՎԱՏ ԱՊՐՈՒՄ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ



Հավաքվեցին մի անգամ Մարտիրոս Սարյանի հուշարձանին մերձակա պուրակում մի քանի մարդ ու սկսեցին կրքոտ վիճել, թե ո՞վ է ամենից վատ ապրում մեր գարնանահրաշ երկրում. - Ես: Ամենից վատ ես եմ ապրում, - աղաղակեց պղնձագործը Ալավերդուց, - էլ կյանք չունեն: Քսան տարի անցկացրել եմ հալոցի մոտ երկրի համար պղինձ ձուլելով: Էդ պայմաններից փախինքս քարածուխի պես սև ու պինդ է դարձել: Դրանով ծնունդը տուն կարելի է տաքացնել, իսկ ինձ այսօր մի կոպեկ փող չեն տալիս: Այստեղ խոսակցությանը միջամտեց ուսուցիչ-մտավորականը. ճաքած ապակիներով ու կապույտ իզալենտով փաթաթած ունկերով ակնոցն աչքերին, կանացի ծաղկավոր կոֆտայով ու բազմագույն կարկատաններով զինվորական շավվարը հագին. «Իսկ ի՞նչ ես դու՝ ալավերդցի պղնձագործը, ընդհանրապես հասկանում իսկական կարիքից: Տես, տես, նրան աշխատավարձ չեն տալիս: Էլ ո՞նց կլիներ: Ախր այն, ինչպես դու ես ապրում՝ պարզապես երազ է: Հեքիաթ: Դա կոմունիզմ է՝ իր վերին ստադիայում: Ախր

մենք՝ ուսուցիչներս, եթե անգամ երբեմն աշխատավարձ էլ ստանում ենք, միևնույն է, դրանով ոչինչ չենք կարողանում գնել: Դու գոնե փախինքներովդ կարող ես ծնունդ տունդ տաքացնել, իսկ մենք արդեն վաղուց փախինք էլ չունենք: Մարդիկ: Օգնեք, ով ինչով կարող է»: Մտավորականից հետո առաջ եկավ գորշ, ինչ-որ դեղին լաքաներով պատված խալաթ հագած բժիշկը: Նիհար, սոված, ցողունի նման ճոճվում է, ինչպես սարի սմբուլը բաց դաշտում: Բռնվեց նա Սարյանի արձանից, որ չընկնի ու դողացող ձայնով թոթվեց. «Չեղը, թանկագիններս, ոչ թե կյանք է, այլ ինչ-որ արտասահմանյան պրոֆիլակտորիում: Այ, եթե գոնե մի կարճ ժամանակով բժիշկ աշխատեիր, գոնե մի քիչ ուտը ու ձեռք կտրեիր, նոր կհասկանայիր, թե ո՞վ է ամենից վատ ապրում հայոց աշխարհում: Մենք ընդհանրապես չգիտենք, թե ինչ բան է աշխատավարձը, իսկ կերածներս միայն ասպիրին է ու լուծողական»: Այստեղ առաջ եկավ վիրավոր սպան. թևքի վրա արյան կաթիլներ, հետևից արյան հետքը խոտի վրա: Մարդկային ձայնով վայնասուն բարձրացրեց սպան. «Էխ դուք: Ու չե՞ք էլ ամաչում: Դուք, որ ապրում եք ճիտության ու երանության մեջ: Դուք, որ վայելում եք կյանքի ուրախություններն ու ըմբռնումն ու համաշխարհային մշակույթի, արվեստի ու խոհարարության բոլոր նվաճումները: Դուք: Սիբարիտներդ ու էպիկուրականներդ: Գոնե մի անգամ ապրեիր իմ պայ-

մաններում, երբ նույնիսկ քիթդ չես կարող խրամատից դուրս հանել... Չէ, ամենից վատ ես եմ ապրում»: Մարդկանց խմբից դուրս եկավ խորհրդարանի պատգամավորը: Հրավիրեց բոլորի ուշադրությունը, իր մոտ քաշեց չորրորդ խոսափողն ու ասաց. «Քույրեր և եղբայրներ: Մեկ անգամ ևս համոզվեցի, որ դուք բացարձակապես կյանքը չեք ճանաչում: Կյանքի իրական դժվարությունները կարելի է ապրել միայն պատգամավոր լինելով: Ինչ համեմատություն կարող է լինել մարմնական տառապանքների և հոգևոր տառապանքների միջև: Իսկ մշտական ցավը մեր բազմաչարչար ժողովրդի ճակատագրի համար: Այ, դուք մի հերթափոխ կաշխատեք, մի դաս կանցկացնեք, ասպիրին կուտեք, խրամատում կնստեք ու կարող եք ձեր քեֆին հանգիստ քնել: Իսկ մենք...»: Եստեղ պատգամավորը չդիմացավ ու լացեց: Ու բոլորը, ահել ու ջախել, նույնպես չդիմացան ու դառնորեն լաց եղան: Որովհետև նրանք վերջապես հասկացան իրենց կարճ խելքով, թե ով է ամենից վատ ապրում հայոց աշխարհում: Բոլորը շրջապատեցին պատգամավորին. մեկը հացի պատամ է տալիս, մյուսը՝ ածուխի պես սև ու պինդ փախինք, մեկը՝ լուծողական, մեկ ուրիշն էլ պարզապես քացով՝ նրա հաստ քամակին: Ախր, մեր մարդիկ բարի են... Օգնում են, ով ինչով կարող է:

«ՀԱ»

ԱՅՆ, ԻՆՉԸ ՉԻ ԼՈՒՄԱԲԱՆՎԵԼ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԻՑ

ՀՀ նախագահի դեկտեմբերի 18-ի Լոռու մարզ կատարած այցը փոքր ինչ միտքարական էր կենսաթոշակառուների համար: Այդ օրը Վանաձորում սկսեցին բաշխել նոյեմբեր ամսվա թոշակները. սա վերջին մեկ տարվա ընթացքում չլսված դեպք էր, երբ նախորդ ամսվա թոշակները բաշխում են ոչ թե հաջորդ ամսվա 27-28-ին, այլ՝ 10 օր շուտ: Այցի նախօրյակին էլ շտապեցին վերականգնել քաղաքի՝ հինգ օր ջրազրկված կենտրոնական հատվածի ջրամատակարարումը, իսկ երբ գազաֆիկացված որոշ թաղամասերի բնակիչներ, որոնց գազամատակարարումը հերթական անգամ դադարեցվել էր, սկսեցին ըմբոստության նշաններ ցույց տալ՝ բողոքներով անհանգստացնելով գազամատակարարներին, անսպասելիորեն վերականգնվեց նաև նրանց գազամատակարարումը (հետո՞ ինչ, թե հաջորդ օրը կրկին գազամատակարարումը դադարեցվեց):

Չգիտես ինչու, նախագահը մամուլի ասուլիսի ժամանակ, որին ակնդիր եղանք հեռուստատեսությամբ (այն իշխանամետ ԶԼՄ-ների մասնակցությամբ էր), չանդրադարձավ Վանաձորում բնա-

կարանային հիմնախնդրին. մասնավորապես՝ ամրացման ենթակա 70 շենքերի ճակատագրին: Առավել քան յուրօրինակ էր նախագահի կարծիքը Վանաձորի ապօրինաշինությունների վերաբերյալ. ի տարբերություն մայրաքաղաքի ապօրինաշինությունների վերաբերյալ նրա դիրքորոշման, նա Լոռու մարզպետին խորհուրդ չտվեց տանիքներից դիտել քաղաքի տեսքը, այլ՝ ապօրինաշինությունը համարեց... տնտեսական աճի արդյունք: Ուշագրավ էր նաև մարզպետի պահվածքը. ցայսօր նա դեմ էր արտահայտվում Վանաձորի «Տարոն» ծայրամասային թաղամասում քրեակատարողական նոր հիմնարկի կառուցմանը, իսկ հիմա, երբ նախագահը դրական համարեց այդ որոշումը, մարզպետը նույնպես ողջունեց այն՝ դիտելով 250-300 նոր աշխատանքներ ստեղծելու տեսանկյունից:

Ի դեպ, Վանաձորիցիների դժգոհությունն է հարուցել այն, որ «գործարան աշխատեցնելու փոխարեն լողավազան են կառուցում»:

ՄՐՍՈՒՄ ԵՆ, ԲԱՅՑ ԹԵՐԹ ԵՆ ԿԱՐԳՈՒՄ

Անհիշելի ժամանակներից չի ցեռուցվում Լոռու մարզային գրադարանը, որը պատկանում է մշակույթի նախարարությանը: Ի տարբերություն նախորդ տարվա, այս տարի գրադարանը չի ցեռուցվում նույնիսկ փայտով, քանի որ այդքան էլ խրախուսելի չէ փայտե վառարանի օգտագործումը շենքերում: Ըստ այդմ, գրադար-

անի ընթերցասրահի աշխատողներին ու ընթերցողներին չեն փրկում նույնիսկ տաք վերարկուները: Եվ, այդուհանդերձ, ընթերցասրահում չի պակասում ընթերցողների հաճախականությունը, քանի որ ընթերցասրահը, որն ստանում է մի քանի տասնյակ հայաստանյան ու ռուսաստանյան թերթեր ու ամսագրեր, տեղեկություն

ստանալու ամենամատչելի աղբյուր է հանդիսանում: (Հարկ է նկատել, որ մամուլի բաժանորդագրությունը իրականացվել է տեղական բյուջեի միջոցներով, բացառությամբ մի քանի անուն թերթերի ու ամսագրերի, որոնք ուղարկվում են նվիրատվության կարգով):

Գայանե ՀՈՎՍԵԹՅԱՆ

ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԻ ԽԱՎԸ

Ցանկացած հիվանդություն բուժելուց առաջ նախ պետք է փորձել հասկանալ հիվանդության պատճառները: Մեր հասարակության զգալի մասը, որն ամեն օր իշխանությունների կողմից ենթարկվում է բացահայտ ստորացման ու թալանի, որն ամեն օր ստիպված է մտածել իր մի կտոր ցամաք հացի մասին, և որին ամեն օր որևէ օլիգարխի կամ նախարարի քիկնապահ կարող է պարզապես հաճույքի համար տրորել-անցնել, այդպես էլ չի հասկանում այս ամենի պատճառը: Չի հասկանում, թե ովքեր են հիմնական մեղավորները:

Ովքե՞ր են թալանում պետությունն ու ժողովրդին: Միլիոնատերերի այս շերտը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի. բիզնեսմեն-օլիգարխներ և պետական պաշտոնյաներ: Ընդ որում, բիզնեսմեն-օլիգարխներից առանձնապես չարժե մեղանալ: Բիզնեսի օրենքն է այդպիսին. բիզնեսն անընդհատ ձրգտում է ընդլայնվել, ծավալվել, և ցանկացած բիզնեսմենի խնդիրն առավելագույն շահույթ ստանալն է: Այլ հարց է, որ պետությունը պարտավոր է ինչ-որ սահմանափակումներ դնել և մրցակցություն ապահովել, բայց չի անում: Գիշտ հակառակը՝ Քոչարյանն անում է ամեն ինչ, որպեսզի մրցակցություն չլինի, և իր գրպանի «բիզնեսմենները» մենաշնորհներ ունենան: Օրինակ, եթե վառելիքի ներկրման ուղորտում մենաշնորհ չլիներ, բենզինը կարծե՞նար ոչ թե 6 հազար դրամ, այլ, ասենք, 5 հազար: Իսկ այդ տարբերությունը (որը տարեկան կազմում է մի քանի տասնյակ միլիոն դոլար) ուղղակիորեն թալանվում է ժողովրդից: Եվ մեղավորը ոչ այնքան Միխայիլ Բաղդասարովն է, որքան Քոչարյանը, որը նրան տվել է այդ թալանի հնարավորությունը՝ բնականաբար, ոչ գեղեցիկ այքերի կամ փառահեղ բեղերի համար: Փաստորեն, օլիգարխներն ընդամենը գործիք են, որոնց միջոցով Քոչարյանը կազմակերպում է ժողովրդի կատաղի թալանը:

Շատ ավելի լուրջ պատուհաս են պետական պաշտոնյաները, ովքեր իրենց պաշտոնն ընկալում են որպես հաջողակ բիզնես և ուղղակիորեն թալանում են պետությունը: Սրանք արդեն նույնիսկ ձևականությունների ետևից չեն ընկնում: Ուղղակի թալանում են այն ամենը, ինչը հնարավոր է թալանել: Ասենք՝ որոշում են, որ պետք է Քաջարանի պղնձամուլիբդենային կոմբինատը քյաշ փողով վաճառել, պետության ոսկու պաշարները վերացնել,

տրամվայի գծերը քանդել և որպես մետաղի ջարդոն վաճառել... Այս մարդիկ պարզապես Հայաստանն իրենց հայրենիքը չեն համարում և իրենց ապագան Հայաստանի հետ չեն կապում: Նրանց համար Հայաստանն ընդամենը խոպան է: Ասենք, որևէ անասուն կարող է առավոտյան արթնանալ, գլուխը քորել և որոշել, որ կարելի է երևան մտնող պահեստային զազամուղը քանդել և խողովակները վաճառել պարսիկներին, կամ կարելի է երևանի ուղիղ կենտրոնում մի ամճոռնի «էլիտար» շենք սարքել, կամ որոշել, որ «ապօրինի կառույցների» տերերը պիտի նալոգ մուծեն քաղաքապետարանին...

Իսկ ովքե՞ր են այդ պաշտոնյաները, որտեղի՞ց են ծլում, ի՞նչ քափահիշներով են ընտրվում: Ջարմանալի օրինաչափությամբ, Քոչարյանի օրոք պետական պաշտոններ ստացածների մեջ չկա զոռն մեկը, որը թեկուզ չնչին ավանդ ունենա այս պետության կայացման գործում: Որպես կանոն, նրանց մեծ մասը անկախության կայացման ու ղարաբաղյան պատերազմի ծանր տարիներին կամ Հայաստանից փախած է եղել, կամ քրեական հանցանքի համար նստած է եղել բանտում, կամ որևէ նկուղում գլուխը կախ փող է աշխատել՝ թքած ունենալով անկախության ու ղարաբաղյան պատերազմի վրա: Ջարմանալի է, բայց Քոչարյանի «կադրային բանկում» բոլորը մի մարդու պես համապատասխանում են «մեկի ժուլիկ» բնորոշմանը: Նրանց բոլորին միավորում է մի հատկանիշ՝ անսահման ստորաքաղաքությունն ու փող շինելու անհագ ծարավը: Ընդ որում, սա իսկապես բոլորին է վերաբերում: Այս հարցում բացառություններ չկան: Եզրակացությունը միակն է՝ Քոչարյանը հատուկ ընտրում է ճիշտ այդպիսիներին, որովհետև հանցավոր կապը մարդկանց միջև գոյություն ունեցող ամենամուր կապերից մեկն է:

Հանցագործ պաշտոնյաների հսկայական բանակն այսօր գիտի, որ Քոչարյանի պաշտոնանկության հաջորդ օրը իրենք հայտնվելու են բանտերում կամ առնվազն ստիպված են լինելու վերադարձնել թալանածը: Եվ դա նրանց ստիպում է հավատարիմ մնալ Քոչարյանին ու ատամներով պաշտպանել նրա աթոռը: Այսինքն՝ պետությունն ու ժողովրդին թալանելու իրենց իրավունքը:

Հրայր ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ ՎՐԴՈՎՎԱԾ ԵՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՎԱԾ

Հայ կոմկուսի Վանաձորի քաղկոմում դեկտեմբերի 15-ին տեղի ունեցած մանլո ասուլիսի ժամանակ կոմունիստները վրդովմունք հայտնեցին, որ այդ օրը Վանաձորի Քիմիագործների մշակույթի պալատում պետք է տեղի ունենա համոզիչում Բելոռուսի դեսպանի հետ, սակայն կոմկուսը չի հրավիրել: «Վախեցել են, որ դեսպանի հետ անցանկալի հարց ու պատասխան լինի. դե բելոռուսները մեզանից են, չէ՞», - իշխանությունների «վախի» մասին կարծիք հայտնեց մի կոմունիստ: Ի դեպ, դեսպանի հետ հանդիպման մասին որևէ պաշտոնական հայտարարություն չէր եղել, և հրավիրվել էին միայն պաշ-

տոնական ՁԼՍ-ները, որոնցից մեկը տեղեկացրեց, թե ընդհակառակը, տեղական իշխանությունները վախեցնում են, որ «դառիկ-ճը չլցվի»: «Ինչի՞ չի լցվի, քաղաքապետարանից ու մարզպետարանից կերերն է կլըցնեն», - «խայթեց» կոմունիստներից մեկը: Ի տարբերություն նախորդ ասուլիսների, այս անգամ կոմկուսում տեղական իշխանությունների հասցեին քննադատություն չհնչեց, դրա փոխարեն դիտողություն արվեց ընդդիմադիր կուսակցությունների հասցեին: «ՀԿԿ-ն միայնակ է բարձրացնում այն բոլոր հարցերը, որոնք այսօր կան», - տեղական ընդդիմադիր կուսակցությունների պա-

սիվությունը դատապարտեց ՀԿԿ Վանաձորի քաղկոմի առաջին քարտուղար Անդրանիկ Դուկասյան: «Այսօր միլիոնավոր դոլարներ են գալիս Հայաստան, ինչու՞ մի գործարան չեն աշխատեցնում», - վերջում հնչեց ավանդական հարցը: Ասուլիսի ժամանակ ՁԼՍ-ների ուշադրությունը գրավեց այն, որ կոմկուսի գրասենյակում հայտնվել էր պատի նոր ժամացույց՝ ԽՍՀՄ գերբով:

Գայանե ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ծախում ինք ու ծախվում ինք

Վերջերս կառավարությունը թույլատրել է «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ին աճուրդով վաճառքի հանել 39 էլեկտրաբարձ, 56 ջերմաբարձ, 1334 բեռնատար վագոն, 31 ուղևորատար վագոն: Պաշտոնական ձևակերպմամբ՝ սրանք գտնվում են տեխնիկապես անբավարար վիճակում, սպառել են շահագործման ռեսուրսները և ընդհանրապես համարվում են ավելցուկային ակտիվներ: Հրաշալի ձևակերպում է «ավելցուկային ակտիվ»: Հայաստանի համար ավելցուկային ակտիվ կարելի է համարել ոչ միայն ջերմաբարձերն ու վագոնները, այլև՝ երկաթուղին ընդհանրապես: Ո՞ւմ է պետք հայկական երկաթուղին, երբ նրա ջրոս

ուղղություններից (դեպի Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա և Իրան) օգտագործվում է միայն մեկը, այն էլ՝ կիսով չափ: Պարզապես զարմանք է հարուցում, թե ինչու մինչև հիմա չէին վաճառում մեր երկաթուղուն պատկանող ոչ միայն շոգեբարձերն ու վագոնները, այլ նաև ռելսերը, «շապկները»... Չէ՞ որ ՀՀ արտգործնախարարը արդեն իսկ արձանագրել է, որ Հայաստանը պետք է դեռ մի 100 տարի էլ զարգանա շրջափակման պայմաններում: Իսկ այդքան մետաղն ու փայտը անմիմաստ կթաղել ենք հողի տակ: Գոնե մետաղը կվաճառեինք, իսկ փայտը կօգտագործեինք որպես ձմեռվա վառելիք: 100 տարի չէ, բայց մի երկու տարի յուլ կզմանք:

«Կոչված էինք այսպես չապրել, բայց դադարապարտված ենք ապրել այսպես»

Հետահայաց հարցազրույց Հրանտ Սաթևոսյանի հետ



- Հասարակարգից հասարակարգ անցման շրջանում ո՞րն եք համարում ամենամեծ կորուստը:

- Ուրիշ անգամ արտահայտվել են և բավականին ճշգրիտ բանաձև են գտել. հայ մարդու համար, իմ հայ մարդու համար, ինձ համար մեծագույն կորուստը իմ իմպերիական կարգավիճակի, ստատուսի կորուստն է:

Դա վիթխարի կորուստ են համարում:

Մինչև որ դարձյալ իմ ծայրը կգտնեմ, նորից իմ բարձր ծայրը գտնեմ, իմ երազները դարձյալ գուրգուրեմ, դարձյալ պահանջատիրությունից արդարությանը ապավինելով խոսեմ, դեռ շատ ժամանակ է անցնելու:

Պետք է դառնամ համաշխարհային մշակութային իմպերիայի մի մասը, ոնց որ ասենք թե Նարեկացին էր իր ժամանակ, երբ Իրաքից, Պարսկաստանից մինչև Ապենիններ, մինչև Ատլանտյան օվկիանոս քրիստոնեական մեծ իմպերիայի մարդն էր, քաղաքացին էր, և ծայրը հենց Աստծո հետ էր:

Մինչև համաշխարհի դեմոկրատիայի հետ երբևէ հնարավոր լինի միանալ, և իմ էլ կարգավիճակը հավասարվի են կարգավիճակին, ինչ որ Սովետական երկիրն էր ինձ պարզում, շատ ժամանակ կանցնի: Կարծեմ, իմ սերունդը դա չի տեսնի: Իսկ առայժմ երրորդ կարգի ժողովուրդ ենք և մի քիչ մեր ծայրերով ենք, մի քիչ արդեն մեր ծայրերին ենք եկել, մեր վիճակին ենք եկել:

- Ինչպե՞ս մուտք գործեցինք 21-րդ դար:

- Երկիրը, իհարկե, պարտվեց: Երկրները առհասարակ պարտվում են իդեոլոգիաների պարտությունից հետո, մշակույթների պարտությունից հետո, երկրները, պետությունները զոր ու զորքով գրոհում են, իհարկե, մշակույթների նախնական գրոհումներից հետո: Եվ մի մշակույթը տեղի է տալիս մի այլ մշակույթի, որից հետո հաջորդում է գրոհող երկրի գործերի ներխուժումը:

Մշակութային պարտություն կար էս երկրի մեջ: Արևմուտքի մշակույթի առջև պարտություն: Էդ պռատ Բանի, մշակույթի պարտությունն էր ազատ խոսքի, ազատ արվեստի առջև: Եվ, իհարկե, պետք է դրան հաջորդեր նաև երկրի տնտեսության, բանակի, զինական ուժի, մի խոսքով՝ երկրի պարտությունը: Ահա:

Սպառնալից մշակույթի երկիրը, այնուամենայնիվ, նոր հազարամյակ խուժում է, մտնում է ձեռնունա՞յն, դատարկ ձեռքերով, ոչ մի բան չի՞ տանում:

Տանում է, այնուհանդերձ: Աշխարհին, մարդկությանը, եկող սերունդներին մի բան տանում է: Մի բան կարողացել է քարագրել. դարի մեծագույն մտածողներից մեկին՝ Չարենց է տանում, տանում է Մարտիրոս Սարյան, Արամ Խաչատրյան: Դուք կասեք իի՛նա, թե նրանք այնուամենայնիվ 19-րդ դարի ընդերքից են բարձրացել, անցյալի մեծ, թունամյանական շրջանի մեծ մշակույթի իներցիոն շարունակությունն էին, և, 19-րդ դարի մշակույթը ար-

ձանագրվեց էլ խոշոր երևույթների գոյությամբ մեր իրականության մեջ:

Գիտեմ, որ եթե, ահա Չարենցը, Սարյանը, եթե մեր մյուս արժանավոր անունները ելել են թունամյանական ժամանակների ընդերքից, ուրեմն նաև եկող ժամանակներում մեր ժամանակների՝ իմ ժամանակների ընդերքից նույնպես կբարձրանան մարդիկ, ովքեր կողմնակի վկայությունը կլինեն իմ ժամանակի և նաև իրենց ժամանակի պսակը կլինեն:

- Ո՞րն է մեր սերնդի առաքելությունը:

- Լինելության կռիվ է պահանջվում մի սերնդից, որ ստիպված է երես առ երես մենակ նստել դիվանագիտության քրքված գայլերի դեմ. մենակ կանգնել ռազմի արհեստում հմտացած մսագործների առաջ. հարաբերվել առևտուր անուն մի գործի, ուր խաբելը հաղթանակ և խաբվելը անբարո է. նորից սովորել հողի հին լեզուն և զրուցել արտի ու այգու հետ, որպես թե կուռքդ եզը չի եղել և ծիրանի ծառը քույրդ չի եղել. անկման ու փախուստի ճանապարհին կանգ առնել ոչ դատախազի կանչի վրա - սեփական խղճի. հաղթահարել բռնության, կողոպուտի, անիշխանության, շնության ստրկական ազատությունը և իրեն զսպել բարոյականության կապանքով:

Հաղթանակը, միայն հաղթանակն է ազատելու մեզ թշնամու, կողմնակիների և մեր իսկ քամահրանքից: Հաղթանակը մեր անցյալի և ապագայի, և համայն մարդկության առջև մեր առաքելությունն է: Պարտությունը սուտ և անգո մի բան է դարձնելու մեր անցյալը՝ բանաստեղծ վարդապետների գառանցանք: Պարտությունը անհայրենիք տնանկներ է դարձնելու մեր երեխաներին, մեզ նրանց սև անեծքին է արժանացնելու: Պարտությունը մեզ դարձնելու է արդարության դռներին տաղտկալի քարշ եկողներ, որոնց երբեմն գուցե և կարեկցում են, բայց երբեք՝ հարգում: Ամեն մի այսօրը նորոգ երեկն է:

- Ինչու՞ ենք մենք այսքան անհանդուրժող:

- 88-ի դեպքերի ժամանակ այստեղ էլ մեզ սպառնացին այսպես՝ մի պարծեցեք ձեր միատարրությամբ. մենք կարող ենք և կստեղծենք այլ ժողովուրդներ ձեր իսկ մսից և արյունից: Մենք հիմա պետք է հաղթահարենք մեր կուսակցական, անձնական և դասային էգոիզմը, կարողանանք վեր լինել ինքներս մեզանից, այլապես հողմերին կտանք մեր ժողովրդի հենց այսօրը, որ կոչվում է հայոց պետականություն:

Խորհրդարանային բեմի և միտինգային հրապարակի յուրաքանչյուր հերոս պարտավոր է հասկանալ, որ մեկ անգամ հերոսանալուց հետո նա այլևս հիվանդ մարդ է, որ նա փառքի աղի ջուր է խմել, որ նա պարտավոր է լռել մահից, մաքրվել, փառքի աղմուկը թոթափել ականջներից, ծով բազմությունների հիացմունքը սրբել իր աչքերից և վերադառնալ իր սթափ վիճակին՝ վերագտնել իր իրական կարողությունների չափը, այլապես իր կործանումը կործանումն է նաև ամբողջ բազմությունների: Բախտը մեզ ձեռնոց է նետել, և փոխանակ տղամարդու պես բարձրացնենք ձեռնոցը՝ երես ենք դարձրել և զբաղված ենք բուրդովին այլ բաներով:

Թագուհի ՀԱԿՈՐՅԱՆ

ՎԱՆԱ ԼԻՃԸ ՄԱՀԱՆՈՒՄ Է

Վանա լճի աղտոտվածությունը հասել է 40 տոկոսի և մասնագետների գնահատմամբ, նա 25 տարվա կյանք ունի: Մասնագետները հավաստիացնում են, որ այսօրվանից սկսած համապատասխան կանխարգելիչ միջոցառումների դեպքում լճի մաքրությունը վերականգնելու համար կպահանջվի 50 տարի: Այս կապակցությամբ Թուրքիայի հանրային աշխատանքների նախարարությունը հատկացրել է 448 տրիլիոն թուրքական լիրա:

ԱՆԿԱՐԱ, 24 ՂՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

ԱՅՈՒՆ, ՆԱՔՍԱՅՔՆԵՐ ՈՒՆԵՐ

Ինչպես ենք նշելու Չրանտ Մաթևոսյանի 70-ամյակը 2005-ին. պետականորեն հռչակված հոբելյանների շարքում առանձնա-
նում է մի շատ կարևոր տարեթիվ՝ նշելու ենք նաև Չրանտ Մա-
թևոսյանի 70-ամյակը: Կառավարական հանձնաժողովը կարծես
թե ամբողջացնում է, այսպես կոչված, միջոցառումների ցանկը:
Դրանց վերաբերյալ ի՞նչ դիտողություններ կան առաջարկներ
ունի մեր եզակի արձակագիրներից մեկի որդին, «Չրանտ Մաթե-
վոսյան» մշակութային հիմնադրամի նախագահ Դավիթ Մաթե-
վոսյանը: Ընդհանրապես ինչպիսի՞նք է Չրանտ Մաթևոսյան երե-
վույթը որդու հայացքով, իրականում ո՞վ է «Մեծամոր», «Աշնան
արև», «Տերը», «Օգոստոս» ստեղծագործությունների հեղինակ-
ը, որն ընդամենը երկու տարի առաջ մեզ հետ էր, իսկ 2002-ի
դեկտեմբերից՝ արդեն անմահության ճամփին: Այս մասին է
գրույցը ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ հետ:

*Պարոն Մաթևոսյան, կառավարական հանձնաժողովում ընդ-
գրված են նաև ձեր ընտանիքի անդամներ: Ինչպե՞ս կզնահա-
տեիք հանձնաժողովի նոտեցումները, գրողի հոբելյանը նշանա-
վորելու նպատակով մշակված ծրագրերը որչա՞փ են զոհանոր:*

- Նախ կցանկանայի, որ վարչապետի գլխավորությամբ ձև-
վորված այդ հանձնաժողովի գոյությունը չսահմանափակվեր
«միջոցառում», «ցանկ», «հաստատում» սխեմայով: Որովհետև
մեզանում, մեր իրականության մեջ գոյություն ունեցող շատ
հասկացություններ են որակագրվել, դրանցից մեկն էլ (և շատ
վաղուց) «միջոցառում» բառն է: Երբ որ այդ բառը լսում են...
Այսինքն՝ եթե հասարակական կյանքում անդրադառնում ենք
առավել կամ նվազ երևույթի, լինի դա Չրանտ Մաթևոսյանը, Չամո
Սահյանը թե Չովհաննես Թումանյանը, Արամ Խաչատրյանը, և
եթե դու նրանց անվան կողքին դնում ես «միջոցառում» բառը,
միանգամայն լուրջ կասկածներ ենք ունենում, որ պատրաստ-
վում են «գալուչկա» դնել ու անցնել: Այ, ես դա չեմ ուզում, որ լի-
նի, և ամեն ինչ անելու եմ, որ դա չլինի: Եվ հանձնաժողովում էլ
տեսնում եմ ճի՞գ՝ դրանից խուսափելու: Ինչ-որ կետեր կան, որոնք
ինձ համար հասկանալի չեն, օրինակ, նախատեսված է «Մաթե-
վոսյանական ընթերցումներ», ինչի իրականացման խնդիրը
հատկացված է, այսինքն՝ կարգախոսային մի բան է ստացվում:
Բայց իհարկե կա երկհատորյակի և անտիպների հրատարա-
կում, ինչը լավ է, թեկուզ փոքր՝ 1000 օրինակ տպաքանակով:
Ողջունելի է նաև «Չեզոք գոտի» պիեսի բեմադրությունը դրա-
մատիկական թատրոնում: Գիշտ է, բեմադրիչը Արմեն Խանդիկ-
յանը, նոր-նոր է միայն կարդացել ու ծանոթացել գործին, բայց
իրականացման դեպքում, նրանից ակնկալում եմ լրջություն:
Կարծում եմ, թատրոնը կդառնա միջնորդ մաթևոսյանական
խոսքի և հանդիսատեսի միջև: Այսինքն՝ ունենք նրա ստեղծած
իրականությունը, որն ինչքան կարդաս, ինչքան վերընթերցես,
ինչքան վերաթարծես, ինքը քո առջև նոր շերտեր է բացելու, և
դա ակնհայտ է: Մի հայեցակարգային առաջարկ եմ արել՝ ասացի,
որ ոչ թե պետք է դիտարկել 70, 75, 80... այսպես հերթով անլակ-
ներ նշել, այլ վերցնել որևէ տիրույթ 70-ից 80-ամյակն ընկած
10-ամյա ժամանակահատվածը և այս տիրույթում փորձել մա-
թևոսյանական արձակից քամել այն, ինչ նա ուզում էր, որ մենք
իրենից քամեինք, քանզի այդ արձակը միջազգայնորեն ճանաչ-
ված արձակ է, և նա մի մարդ է, մի անհատականություն, որի
գաղափարները այսօր արժարժվում են մեր հասարակության
մեջ: Այդ արձակը մեզ է պետք: Այ պետք է մենք սա անենք: Մի
անգամ, երբ խոսում էր «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմի մասին,
նա ֆիլմի ամենամեծ արժանիքը համարեց այն, որ այդ ֆիլմով
հայերենը էկրանից կյանք մտավ, ժողովուրդը այդ ֆիլմից հետո
խոսեց ու մտածեց հայերեն, տեքստերը թևավոր խոսքեր են
դարձել: Կարծում եմ՝ պետք է վարվել այդպես. վերցնել ժամանա-
կային առումով պայմանական այդ տիրույթը և փորձել «գովազ-
դել» մաթևոսյանական արձակը, քանզի նույն Չրանտ Մաթևոսյա-
նը ասում էր. «Կորցրել եմ ծառուղու ծայրին նստարանի վրա
նստած իմ գիրքը բացող, կարդացող աղջնակին»: Ինքն իրոք
կորցրել էր:

*Նախատեսված է նաև նրա ստեղծագործության հիման վրա
ֆիլմի ստեղծում: «Տեր»-ի և «Աշնան արև»-ի անհաջող էկրանա-
վորումներից հետո, ի՞նչ եք կարծում, Չ. Մաթևոսյանի ո՞ր գործը
կարող է դառնալ կինոնյութ, կամ ինքը՝ գրողը, ո՞րը կուզենար*

նկարված տեսնել:

- Այո, «Տեր» ֆիլմն ինքը չէր ընդունում, իսկ «Աշնան արև»-ի
մասին ասում էր, որ շատ մաղձոտ է, մանավանդ որ ինքը գրել է
լուսավորի, պայծառի մասին: Ինչ վերաբերում է հոբելյանի
շրջանակում ստեղծվելիք ֆիլմին, ապա ասեմ, որ դեռ սրանից
3-4 տարի առաջ Չրանտ Մաթևոսյանը, իմ հրահրմամբ գուցե,
Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարար Շվիդկոյի
առաջարկեց հայ-ռուսական համատեղ ֆիլմ նկարահանել՝ «Չե-
զոք գոտին», և ինքը հանձն էր առնում սցենարը գրել, հույս
ունեի, որ ինքս կնկարահանեմ այդ ֆիլմը: Շվիդկոյն դրական
արձագանքեց, և երևի նախարարի նամակը հիմա մեր նախա-
րարության արխիվում ինչ-որ մի տեղ է: Իհարկե դա պետք է
նկարվեր այն ժամանակ, երբ Չայաստանի և Ռուսաստանի միջև
կնքվեր համաձայնագիր կինոյի ոլորտում, որպեսզի ռուսական
բյուջեից փող հատկացվեր: Ժամանակն է դրան անդրադառնա-
լու, սպասում ենք: Առաջարկել եմ վերաբեմադրել, վերաէկրանա-
վորել «Այս կանաչ-կարմիր աշխարհը»: Նրա այս սցենարը, կար-
ծում եմ, այսօր պահանջարկ ունի. շատ ռոմանտիկ, ֆոլկլորային,
ազգագրական տարրեր պարունակող ողբերգական պատմու-
թյուն է:

*Իտուեցիք անտիպների մասին: Գիտե՞ք, որ վերջին տարիներ-
ին գրում էր «Եզրով» վիպակը: Ավարտե՞ց այն: Մանավանդ որ
հիշում ենք, ասում էր՝ «չեմ կարողանում իրականությունից
կտրվել ու նստել սպիտակ թղթի առջև»: Ո՞ր անտիպ գործերն
են հրատարակվելու:*

- Ոչ, «Եզրովը» չավարտեց: Ոչ մեկն էլ չի ավարտել: Չրատարակ-
վելու է «Եզրով», «Նանա իշխանուհու կամուրջը», «Չաղարծի-
նը» վիպակները և նաև «Տախթը», որը կարող էր վեպ դառնալ:
Օրինակ՝ «Նանա իշխանուհու կամուրջ»-ի աշխատանքային եր-
կու տարբերակները գրել է 1963-ին և հիմնավորապես դրել էր
դարակում ու փակել, չէր խոսում դրա մասին, ինչը վկայում է
նրա մեծ պատասխանատվության մասին: Նա երբ գրիչը ձեռքն
էր առնում, առնվազն զգում էր մեծ պատասխանատվություն
ցանկացած գրած բառի և գեղագիտության համար: Այդ առումով
իր համար դժվար էր գրելը: Եթե կարդաք դարակում փակած
գործը, կտեսնեք, որ ոչ մի թերացում չկա, բայց, միևնույն է, մինչ
օրս դարակից դուրս չի եկել: Շնորհակալ եմք, որ չի պատռել ու
դեն չի գցել:

Իսկ «Աշնան արև» ներկայացման մեջ բաներ կային, որ իրոք
հուզիչ էին: Աղունի դերը Վիդլետ Գրիգորյանը լավ էր խաղում,
բայց թամաշայնության, ծամաժողովունների, ծիծաղ կորզելու
դրսերումները շատ էին, որոնք Չ. Մաթևոսյանի համար անըն-
դունելի էին: Եվ ինչ տեղի ունեցավ պրեմիերային: Երբ ավարտ-
վեց ներկայացումը, օվազիաների, ծափահարությունների հե-
ղեղ էր, բեմից իրեն էլ կանչեցին, որպեսզի բարձրանա-կանգնի
թատերախմբի, բեմադրիչների կողքին: Եվ ի՞նչ արեց. տեղից
վեր կացավ, աթոռների միջամասով անցավ, հասավ բեմին,
թեքվեց և դաիլիճից դուրս եկավ, գնաց: Մենք էլ, իհարկե, մի
տեսակ վատ զգացինք: Այո, նա քմայքներ ուներ:

Կիմա ԵՂԻԱՋԱՐՅԱՆ

Երկու նոր գիրք

Օրերս լույս է տեսել Ավետիս Չարությունյանի և Վանո Սիրա-
դեդյանի ստեղծագործությունների ժողովածուն՝ մեկ զրքով:
Ավելի ճիշտ, տվյալ դեպքում գործ ունենք երկու գրքի հետ,
քանի որ նշված գիրքը երկու շապիկ ունի. մի երեսից սկսվում
է Վանո Սիրադեդյանի, մյուս երեսից՝ Ավետիս Չարությունյանի
գիրքը: Ավետիս Չարությունյանի «Գյաղաների ժամանակը»
վերնագրված բաժնում ներառված են Ավետիս Չարություն-
յանի հրապարակախոսական հոդվածները, որոնք տպագրվել
են «Չայկական ժամանակ» օրաթերթում, իսկ Վանո Սիրադեդ-
յանի «Երկիր: Ցպահանջ...» ժողովածուում ներառված են Վա-
նո Սիրադեդյանի որոշ էլույթներ, հրապարակախոսական հոդ-
վածներ, պատմվածքներ ու նրա հետ արված մի քանի հարցա-
զրույց: Գիրքը կազմել է Այդին Մորիկյանը:

Միեր ԱՐՇԱԿՅԱՆ

Էջ թերթելու արագությանը Աստված լինելու հնարավորություն

Իր արշավանքների ժամանակ Ալեքսանդր Մակեդոնացին տեղեկանում է, որ ուսուցիչը՝ Արիստոտելն, ուրիշներին լուսավորում է այն խոսքով, որով լուսավորել է իրեն: Մակեդոնացին մթնում է և պարսավանք գրում ուսուցչին: Կարևոր չէ, թե ուսուցիչն ինչպես է արդարանում Մակեդոնացու առջև: Մակեդոնացին խոցված է խոսքի փոխարեն: Մակեդոնացու օրոք դեռ կար այդ գիտակցությունը, որ նույն բանը չէ այն, ինչ ինքը գիտի և այն, ինչ գիտեն ուրիշները: Մեկ այլ ուսուցիչ՝ Լևոն Ներսիսյանն ասում էր. «Ես ասում եմ, շարունակ եմ, լավ կլինի, որ մեկը որսա դրանք»: Նա խոսքի մասին ասում էր՝ շարունակ եմ: Ոչ դեմ նետելու, այլ բաց թողնելու իմաստով: Քանզի, խոսքը, թունամյանի բառերով, նետ է, որը արձակվելուց հետո երբեք ետ չի վերադառնում:

Այսպիսով խոսքը թև առնող մի բան է: Նույն ժամանակվա լուսավորում այդ բանը կհաստատի Բորխեսը: Նա ասում էր. «Գիրքը կոպիտ է, բառը՝ թևավոր»: Բորխեսն, ի դեպ, լուրջ ուսումնասիրություն ունի բանի մասին: Նա արձանագրում է, որ հին աշխարհի մեծերը դիտավորյալ ոչինչ չէին գրում: Սովորաբար օրինակը հայտնի է: Քրիստոսը մեկ անգամ է գրել, այն էլ ավագի վրա: Մեր դեպքում լավագույն օրինակը համալսարանի արտասահմանյան գրականության հանճարեղ դասախոս Լևոն Ներսիսյանն է: Նրանք չէին գրում, որպեսզի խոսքը, ԲԱՆ-ը չկաշկանդեին սերունդների առջև պատասխանատվությամբ:

Գրականությունը խոսքը դարձրեց համարմատելի: Բայց խնդիրն այն չէ, որ գիրք բառը դարձրեց ամենքինը: Մենք, իսկապես, տպավորված ենք այն բանից, որ ոչ բոլորը կարող են գրել այնպես, ինչպես, ասենք, Յոնանը, Նարեկացին, Շեքսպիրը, Չարեցը, Գաբրիել Գարսիա Մարկեսը, Խորխե Լուիս Բորխեսը: Նրանց բոլորի գիրը ջանք է խոսքը վերադարձնելու այն կերպի մեջ, որից սկզբնավորվեցինք մենք ամենքս:

Հիսուս Քրիստոսը բառի մասին ասել է մի բան, որն ամբողջացնում և շարունակում է ասվածը և ասվելիքը: Նա ասում էր՝ մարգարիտները շաղ մի տվեք խոսքերի առաջ: Ըստ իս, այս ասելով հանդերձ, Քրիստոսն ողջ քարոզչությունն ասվածին դեմ էր: Ահա ինչու նա ընտրեց առաքյալների միջոցով ժողովրդի հետ շփվելու կերպը: Առաքյալներն անկասկած մյուսներից լավը չէին (Հովհաննեսն անշուշտ բացառություն էր, այդ նա է առաջինը հիշում ԲԱՆԸ): Եվ ման համար Հիսուսին օգնում էր զարմանքը, զարմանքը նրան օգնում էր խոսել: Մարդկանց անգիտությունը ցրնցում էր նրան: Ահա ինչու նա ասում էր՝ մի դատար: Որովհետև, ըստ նրա ակնարկի, ոչ ոք չունի այնքան գիտություն, որ կարողանա նաև դատել:

Ավելի լավ է բավարարվել անգիտությամբ: Դատել կարելի է մտքով, քանզի

միտքը նաև ֆիլտրում է: Մենք դատում ենք խոսքով: Խոսքը բացում է մեզ, բայց խոսքը այն դարպասն է, որով Մատանան մտնում է մեր մեջ: Մատանան անշուշտ ոչ կրոնական իմաստով, այլ՝ մարդու ներաշխարհուն տառապանքի, ցավի դեմ ինունհիստե մշակելու աշխարհիկ իմաստով: Մենք սիրում ենք անիծել գերազանց իմանալով, որ անեծքը լուրջամբ չի հաղթանակի, անեծքը լուրջամբ կերպարանք չի ստանա: Մենք սիրում ենք տրտնջալ, մի խոսքով մենք դեմ չենք մեր ներսում տեղ բացել չար մտադրությունների, վատ մտքի համար: Իսկ չար մտադրությունը, վատ միտքը մեզ դարձնում է ավելի քան սխալական: Այս իմաստով պետք է ընկալել Մատանային: Հենց նա է մեզ ստիպում հիմար լինել: Ահա ինչու Քրիստոսը խոսքին հակադրեց ԲԱՆԸ:

ԲԱՆԸ դառնում է գրականություն, գիրք, իսկ խոսքը՝ անեծք կամ տրտունջ: Քրիստոսը ոչինչ չգրեց, քանի որ համաշխարհային ողջ գրականությունը, որ գրվել է ու պիտի գրվեր, նրա խոսքի, նրա հռչակած ԲԱՆԻ մանրադրամն էր: Շատ ավելի հետաքրքիր է, որ նա չպապանձվեց, երբ ճանաչեց աշխարհը: Չարմացավ ու չպապանձվեց: Ու նա հասկացավ, որ մարդը մի անընդգրկելի անգիտություն է: Նա դա հայտնաբերեց զարմանքով: Առանց զարմանալու Քրիստոսն, իհարկե, ոչինչ չէր ասի: Մինչև չզարմանա, չես խոսի: Առանց զարմանքի, ի՞նչ պիտի ասես Հիսուսը, որ բավարարեր նրանց, որոնք չեն թերացել տպավորիչ անգիտությամբ: Քրիստոսը խոցվում էր մեր անգիտությունից: Նա չէր եկել լուսավորելու: Լուսավորիչները մինչ Քրիստոսն էին՝ Պյութագորաս, Սոկրատես, Պլատոն: Նույնիսկ կրոնական մտածողներ Կոնֆուցիոսը, Լաո Ցզին կամ Գաուտամա Սիդխարտան՝ մեզ քաջ հայտնի Բուդդան, մտքի շրջանակներում էին ծավալվում: Նրանք պատմում էին ճշմարտությունը: Նրանք չէին խոցվում ոչ մեկի անգիտությունից, քանի որ ասարում էին գիտելիք տալու համար: Նրանք վեր էին դատելուց: Միայն ուսուցանում էին: Այն, ինչ ասում էին, ճշմարտությունն էր, որը աշխարհի քննելիության շրջանակներում էր:

Քրիստոսն այս ճշմարտություններից վեր եկավ: Նա կանգնեց մարդկանց առաջ և ասաց. «Երկնքի արքայությունը ձեր մեջ է»: Շարունակ է, չէ՞: Լավ կլինի, որ մեկը որսա դրանք: Բայց հետագա ողջ գրականությունը սկզբնավորվեց այս խոսքերից: Հովհաննես Առաքյալն ասում էր, որ ի սկզբան էր ԲԱՆԸ: Ի՞նչը նկատի ուներ նա: Անշուշտ այն, որ կատարելությունն ի սկզբան էր: Մենք ունենք քառսի ընկալումը, ասում են, որ կան աղբյուրներ, որոնցում իբր գրված է, թե տիեզերքի արարումից առաջ քառսն էր տիրում, բայց Գիրք Ծննդոցն ապացուցեց, որ քառսից ոչինչ չի ձևավորվում: Ուրեմն կատարելությունը կար, քանզի այդ կատարելությունը մարմին էր դառնում Դրախտի, Ադա-

մի, Իմացության ծառի տեսքով: Բայց կար նաև Եվան, որը կծեց պտուղն Իմացության ծառից: Նա խոսեց, Նա Ադամին համոզեց թվաց ինչ-ինչ բաներում, քանի որ խոսքը նույնպես կատարելության մաս էր: Եվ մենք ձեզ հետ միասին վռնդվեցինք Դրախտից:

Հետո կծմվի գիրքը, որպեսզի մենք վերադառնանք այդ կատարելությանը, որպեսզի մենք այլևս գրի կարիքը չունենանք, որպեսզի, ինչպես ասում են, կես խոսքից հասկանանք իրար, որպեսզի, պատկերավոր ասած, չառաջնորդվենք մեկի փաստարկներով ի հաշիվ մյուսի խոսքի: Մյուս կողմից, ինչպիսին Ադամի խոսքի հասկանալը հենց մտքի, բոլոր մտքերի ներդաշնակությունն է: Այս արտահայտությամբ մենք՝ հայերս, մեր ներդրումն ունենք ԲԱՆԻ ընկալման ասպարեզում: Բայց Աստվածաշունչը մեկ այլ ծառայություն էլ մատուցեց մարդկությանը: Մենք դեռևս դա լավ չենք հասկացել: Կաթոլիկ եկեղեցին դա հասկացավ: Որովհետև այդ եկեղեցին մշակութաբանորեն կապը կրտրեց: Այդ եկեղեցին կապը կտրեց շատ այլ բաներում, բայց ի վերջո հասավ նրան, որ մարդուն կապեց մի շատ բացառիկ խորհուրդի հետ: Դա ապաշխարության խորհուրդն է: Այլ կերպ ասած՝ մեղքերի թողությունը: Բայց ապաշխարությունն ավելին է, քան մեղքերի թողությունը: Ապաշխարությունը նաև լուրջություն է սիրում: Այսինքն, կարելի է ապաշխարել նաև լուռ, կարելի է ընդամենը գիտակցել: Իսկ ի՞նչ է նշանակում գիտակցել, դա նշանակում է մտնել ներքին մեծախոսության դաշտ: Հենց այս ներքին մեծախոսությունն էլ մարդու ներծեցումն է ԲԱՆԻ հետ: Դա այն է, ինչը մենք անվանում ենք մարդու խիղճ: Դա ներծեցում է առ Աստված, թեպետ իմ կարծիքով կարելի է ապաշխարել նաև առանց Աստծո: Համեմայնդեպս առանց այն Աստծո, որպիսին գոյություն ունի բոլոր եկեղեցիներում, և ոչ թե ամեն մարդու հոգում: Առանց այն Աստծո, որի անհրաժեշտությունը քարոզում են եկեղեցիները, նաև՝ աղանդները, բնավ էլ մեզանից լավ չհասկանալով, թե ինչի կամ ում մասին է խոսքը:

Բայց տեսեք, թե ինչ անկառավարելիորեն հզոր խորհուրդ ունի ապաշխարանքը: Ապաշխարանքը հաստատունն է այն բանի, որ ինքը քեզանից չես փախչի: Կարելի է խաբել մարդուն, կարելի է մինչև նահ վայելել այդ խաբեության պտուղները, կարելի է սպանել մարդուն և մնալ անորսալի, կարելի է գայթակղել մերձավորի կնոջը, կարելի է սիրաշահել պետական պաշտոնյային ի վնաս հազարավոր աշխատավորների ու գոյության հույս ունեցողների, բայց մարդը կղզի չէ, և մի օր առեթեպելու է ինքն իրեն, առեթեպելու է ուրիշի դեմքով, առեթեպելու է այն ողբերգություններով, որոնք բխել են իր մեղքերը հիշեցնող ուրիշների չարագործություն-

ներից: Այսպիսով ապաշխարանքը բխում է դիմացինի իրավունքների, երջանկության հանդեպ պատասխանատվությունից: Ինչպես հասկանում եք, ապաշխարանքը մարդու իրավունքների լուռ կիրառումն է:

Շնորհիվ ապաշխարանքի մարդը դառնում է եղբայր, հարազատ, սիրելի ընկեր: Եվ հարազատության այդ գիտակցումից է, որ մարդը հասկանում է, թե ինչ էր անում Յիսուս Քրիստոսն այս երկրի վրա սրանից 2000 տարի առաջ, թեպետ նմարավոր է, այդպես էլ հավատացյալ չի դառնում: Այսպիսով ապաշխարանքն աշխարհից կտրվելը չէ, աշխարհից օտարվելը չէ, դա աշխարհայնացումից վեր կանգնելն է, դա խոնարհության մեխն է: Դա վերջինը լինելու աստվածաշնչյան պատվիրանն է: Դա, ի վերջո, գիտակցումն է այն բանի, որ այստեղ երբեք ուրիշի հանդեպ չես վարվի այնպես, ինչպես չես ուզեմ, որ վարվեն քեզ հետ: Մեզ մոտ, համենայնդեպս, ապաշխարությունը լռության հակառակն է: Մեր եկեղեցին ունի ընդհանրական և անհատական մեղքերի թողություն: Մեղքերի թողությունը մարդիկ կատարում են ձայնով, որպեսզի ապաշխարեն լուռ: Ապաշխարանքը հիշողություն է սիրում, իսկ մեղքերի թողությունը՝ միշտ քեզանից չկտրվող, սիրտ քրքրող իրականություն:

Համաշխարհային գրականության բոլոր մեծագույն գործերը ապաշխարանքի այդպիսի մի երևույթ են այն տարբերությամբ, որ ձայնի փոխարեն դարձել են գիր: Ապաշխարանքի այդպիսի լեզուն է, որ մեզ մոտեցնում է աստվածաշնչյան այն անմեղությանը, որը Նոբելյան մրցանակի դափնեկիր Իոսիֆ Բրոդսկին անվանում էր քրիստոնեական բնորոշելով բանաստեղծուհի Աննա Ախմատովայի կերպարը: Յիսուս Քրիստոսը, Մյուրդու Դոստոևսկին, Վիլյամ Սարոյանը մեզ անմեղության տեսականի են առաջարկում: Ասենք, կարդում ես Սարոյան, ուզում ես օրվա մեջ գոնե կես ժամ անմեղ լինել, համարյա երջանիկ: Գեղարվեստական կինոնկարներում էլ են մնան պոռթկումներ պատահում, սասեն, «Ֆորեստ Գամփ» կինոնկարում: Ինչ-որ իմաստով նաև հանրահայտ Դետոյկինը «Զգուշացիր ավտոմեքենայից» կինոնկարից: Դրանք կերպարներ են, որոնց շնորհիվ պարզ է դառնում, թե անմեղությունն ինչպես է ինքն իր համար ճանապարհ հարթում:

Գրողը եկեղեցի գնալու փոխարեն նըստում է սեղանի առաջ, վերցնում է թուղթ ու գրիչ ու գրում: Հնարավոր է, նա ինչ-ինչ մեղքեր չափազանցում է, ասարթեզ է բերում ոճի իր ու անմարդկայնության մոր զգացումներ, բայց նա, չմոռանանք, իրադարձությունների հետևից չի գնում ի տարբերություն պատմաբանի, այլ քայլում է իրադարձությունների առջևից: Գրողը ձգտում է վերածնել մարդուն, քանի դեռ մարդը չի մեռել: Սակայն մենք պետք է վերադառնանք ԲԱՆԻ, ԼՈԳՈՍԻ դեղին: Հայկական ասացվածքն ասում է. «Եթե անսփոփելի վիշտ ունես, պատմիր հոսող ջրին, ջուրը կտանի»: Բնականաբար սա չի ասում, որ ջուրը մարդկային ջերմ սրտի պակասը լրացնողն է: Սա ասում է, որ փորկությունն արտահայտվելու մեջ է: Բառն օգնում է օտարվել անհնարին տառապանքից:

Հասկանում եք, որչ աշխարհն է զբաղված նրանով, որպեսզի մեզանից յուրաքանչյուրի ողբերգությունը տեղի ունենա: Չնայած այն բանին, որ գոյություն ունի Աստվածաշունչը, գրվել է «Համլետը», նաև «Կարամազով եղբայրները», չնայած այն բանին, որ Նարեկացին աղաղակել է բոլորիս կատարված և կատարվելիք հնարավոր և անհնարին բոլոր մեղքերը, մարդը դարձել է ավելի վատը, քան ի վիճակի էր լինելու: Եվ այդ դեպքում ո՞րն է մեր զենքը, ո՞րն է առանձին վերցրած մեկ մարդու իմունիտետը համաշխարհային, այլևս անշոքելի չարիքի դեմ: Ի՞նչն է մեզ դարձնում առավել պաշտպանունակ: Այս հարցերն ըստ էության պատասխաններ չունեն: Մարդու մշակութային կամ հոգեվոր նվաճումների որ կետի վրա էլ կանգ առնենք, այս հարցերը անպատասխան են այն աստիճան, որ կարծես գոյություն չունեն: Այս հարցերն անպատասխան են նաև ապագա նվաճումների կանխատեսումների առջև: Ինչու՞: Որովհետև մարդն ավելի անկանխատեսելի է, քան այն, ինչ նրանից կարելի է սպասել: Հենց այս իմաստով պետք է հասկանալ աստվածաշնչյան այն միտքը, որ մենք ծնվում ենք մեղավոր: Մի բան, որի հետ առանձնապես համաձայն չեն: Եվ այդ ամենի դեմ միակ զենքը մնում է խիղճը, սովորական, անշոքափելի, անբարբառ այդ դատավորը, ապաշխարանքի համար անհրաժեշտ միակ ֆիզիկական օրգանը, որի տեղը ոչ ոք չգիտի, որը քիմիական ֆորմուլա չունի, որի համար նույնիսկ Աստծո գոյությունը չի պահանջվում:

Յուրաքանչյուր մարդ զենք է ողջ աշխարհի չարիքի դեմ: Այսպիսով մեզ մնում է մի վերջին շտրիխ էլ ավելացնել ապաշխարանքի մասին հարցադրումներին և անցնել եզրակացությանը: Ի՞նչ է ապաշխարանքը: Դա բառի հաղթանակն է մեղքի դեմ: Դա մեր բաժին ԲԱՆԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ է: Քահանան ոչինչ է մեր ասելիքի առաջ: Բառը ոչ միայն մեզ ազատագրում է մեղքից, այն մեզ հզոր է դարձնում լռության մեջ մեր սիրտը կրծող չարիքից, որը փախչում է մեր մտքում կերպավորվելուց: Չարիքն ուզում է կերպավորվել մեր բառերի, մեր թուլության մեջ: Բնականաբար մենախոսությունը նույնպես էլք չէ, ապաշխարությունը մենախոսության դեմ է, քանզի մարդուն կարելի է անիծել մեն-մենակ, առանց որևէ վկայի, այդպես ավելի ապահով է:

Արտահայտվելով մենք փրկում ենք նաև նրան, ով կարող էր կրկնել մեր սխալը: Հենց այս իմաստով է արվեստն ընդհանրապես և գրականությունը մասնավորապես մնում խղճի միակ բանախոսը առաքինության ոչ մի դեղատոմս չառաջարկող մեր կյանքում: Գրականության մեջ չարիքը ինչ դեմք էլ ունենա, ինչ հաղթանակներ էլ տանի, մեռնելու է մեր ընթերցողներիս, մոտ առաջացած հակազդեցությունից, քանի որ մեզանից յուրաքանչյուրը հենց այն աշխարհն է, որտեղ մեղքը, չարությունը չեն դիմանալու բարու մասին մեր հարածուն պատկերացումներից: Իսկ մենք կարող ենք արարել բարին, մենք կարող ենք այդ մասին պատմել մերձավորին և անձանոթին, մենք, ի վերջո ի վիճակի ենք մխիթարել միմյանց: Աշխարհի բոլոր գրքերն են լծվել այս գործին, որպեսզի մեզանից յուրաքանչյուրի ողբերգությունը տե-

ղի չունենա: Ահա ինչու գրքերն ընդհանրապես և Աստվածաշունչը մասնավորապես, գրված են մեր բոլոր թողությունների փոխարեն կամ ի հավելումն դրանց, մարդիկ մեռնում են կամ սպանվում, բայց գրքերը գրվում են նա, որովհետև նրանք մեզ թույլ չեն տալիս միմյանցից հեռանալ անավարտ:

Սակայն արտահայտվել միշտ պետք է, քանի որ բոլոր գրքերը միասին վերցրած միշտ չէ, որ կարող են փոխարինել մեկ մարդու ապաշխարանքին: Արտահայտվելով մենք գրականություն ենք դարձնում այն, ինչն ընդամենը իրականություն է մյուսներից անկախ: Բայց այստեղ մի հանելուկ կա: Բառը կարող է խեղվել մեր ասելիքի մեջ և այդժամ ապաշխարությունը, ազատագրումը չի կայանա, քանի որ նախ և առաջ չենք կայանա մենք: Ապաշխարությունը վերածնունդ է: Ապաշխարության ինստիտուտի ակունքներն այստեղ են: Բառը Աստված է, որին մենք փնտրում ենք գրականությամբ, որին դեպի մեզ ենք բերում գրականությամբ և երբ ինքնասպան ենք լինում առանց արտահայտվելու, կիսատ ենք թողնում Աստծուն: Բառը Աստծո հաղթանակն է այն մեղքերի դեմ, որոնք մեզանից հզոր են հենց իրենց անխոստովանելիության կշռով:

Ի դեպ, ինքնասպանության մասին: Աստվածաշունչն առերևույթ, համենայնդեպս գրով չի անդրադարձել ինքնասպանությանը: Չի ասված մի ինքնասպանվիր: Այդպես գրելն անուղղելի պարտություն կլիներ իրեաների համար, որոնց ամբողջ պոեզիան չգրվածի, չարտահայտվածի, այսինքն, մտահայեցմամբ ունեցած աստվածայինի առօրեականության մեջ է: Գրված է մի սպանիր: Իսկ ինքնասպանությունը սպանություն է, այն հենց մարդասպանություն է, քանի որ ավելի գիտակցված է և նույնիսկ արաված, քան մյուսի սպանությունը: Եկեղեցին այս փաստին չի տիրապետում: Մյուսի սպանությունն ինձ չի գրկում եկեղեցուց ավելի, քան ինքնասպանությունը: Մյուսի սպանությունը մեղք է, իսկ ինքնասպանությունը՝ վճիռ: Բայց ասված է մի դատիր, որ չդատվես: Այսինքն, ինքնասպանությունը նույնքան վճիռ է, որքան ուրիշի սպանությունը դատարանով կամ առանց դատարանի:

Ինքը քեզ սպանության դատապարտելը մեղք է, քանի որ ողջ աշխարհն է գրկվում օրերից մի օր քո աստվածամարդությունը տոնելու հրաշքից: Մյուսի սպանությամբ քեզ դեռ վերապահված է աստվածամարդության հրաշքը վայելել նաև նրա՝ քո ձեռքով սպանվածի փոխարեն, իսկ քո սպանությամբ դու մյուսին գրկում ես մի հրաշքից, որն Աստծուց է: Դուք երբևէ մտածել եք, թե ինչ տարբերություն կա պատասխանատվության և պատժի միջև: Ասում են, չէ՞, պատասխան ես տալու քո արածի համար: Բայց նաև ասում են պատժվելու ես: Ինչու՞ է պատժվելու: Եթե մարդը պիտի պատասխան տա, ինչու՞ պատժել նրան: Ուշադրություն դարձրեք, ասված է՝ պատասխան ես տալու երկնքի առաջ, քո առաջ, ընկերոջդ առաջ, սիրածդ աղջկա առաջ, ողջ աշխարհի առաջ: Բայց մարդիկ վերցնում ու պատժում են քեզ:

Պատժել, նշանակում է դատել, մինչդեռ, հիշում եք, ասված է՝ մի դատիր: Պատասխան ես տալու, այսինքն, քեզ չեն դատե-

լու, բայց դու պատասխան ես տալու: Այսինքն, խոսելու ես, քո մեջ, թե մարդկանց առաջ, միևնույն է խոսելու ես, այստեղ ապաշխարության էլ ենմենտ կա: Խոսքի շնորհիվ քո աչքերի առաջ ես բերելու քո մեղքը: Եվ դու ինքը ես դատելու քեզ: Այսինքն, վերջապես քեզ հաշիվ ես տալու: Այստեղ էլ խորություն կա, քեզ, ոչ թե ինձ ես հաշիվ տալու, ոչ թե սիրածդ աղջկան, ոչ թե ընկերոջդ, ոչ թե ողջ աշխարհին, այլ քեզ, քանի որ քո մեջ է Աստված: Այսինքն չես խոստովանելու, այլ պատասխան ես տալու, հենց դա է քո ամբողջ պատիժը:

Այսպիսով պատասխանատվությունը մեղքերի թողության մեջ մի բան է, և Աստծո երևակայությունը մինչև այդտեղ է ձգվում, որպեսզի մարդն իրեն պատժված զգա: Այսպիսով Աստծո պատիժ հասկացությունն չկա: Ու՞ր մնաց հաշվետվության հնարավորությունը, ու՞ր մնաց վերջին դատաստանը, եթե պատիժը նախորդում է պատասխանատվությանը: Այսպիսով ի՞նչ է պատասխանատվությունը, որը գուցե քրիստոնեական հասկացություն է: Պե՞տք է որ մարդը հարկադրաբար պատասխան տա այն ամենի համար, ինչը մեղսական է: Պե՞տք է մարդուն հարկադրել ապաշխարանքի: Կարծում եմ ոչ: Հարկադրաբար ոչինչ պետք չէ: Մեզանից յուրաքանչյուրն ունի ծնողներ: Հենց նրանք էլ ի պաշտոնե կոչված են մեզ ուղղորդել դեպի համընդհանուր բարօրությունը: Նրանք կոչված են մեզ մարդ դարձնելու, մեզ հասցնելու այն օրվան, երբ հանգամանքների բերումով պատրաստ կլինենք պատասխանատվության: Պատասխանատվությունը խոստովանության հակառակն է, ահա թե ինչու չի կարելի պատժել մարդկանց:

Այսպիսով պատասխանատվությունը քրիստոնեական հասկացություն է, իսկ պատիժը՝ ոչ, որովհետև պատիժը չի ճանաչում Աստծո առաջ քո անելիքը, Աստծո հանդեպ քո դերը, պատիժը չի ճանաչում

այն հրաշքը, որը դու, իբրև մեղք գործած մարդ, կարող ես վայելել պատասխան տալով, և վերջապես, պատիժը չի ճանաչում Աստծուն ինչ տեսքով էլ պատկերացնենք կամ չպատկերացնենք նրան: Այս իմաստով բավական է ինչել Ֆեոդոր Դոստոևսկու Ռասկոլնիկովին «Ոճիր և պատիժ» վեպից: Պատասխանատվությունը կտակարանյան Վերջին դատաստանի, այսպես ասած դատավարությունն է:

Իսկ ո՞վ է անպատասխանատու մարդը: Դա այն մարդն է, ով չի հավատում հրաշքին: Մարդ, որը պատասխան չտալով արատավորում է այն լուրջությունը, որն իր մեջ կրում է ապաշխարանքի հմայքը, քանի որ, ասացինք, որ կարելի է ապաշխարել նաև լուռ: Այսքանից հետո ես ուզում եմ անցնել ընդհանրացումների: Իոսիֆ Բրոդսկին գրողին անվանում էր մարգարե, քանի որ, ըստ նրա, լեզուն է առաջնորդում գրողին, լեզուն մեկ բառ ավելին է, քան գրողի իմացած և չիմացած բոլոր բառերը: Պոեզիան ինքնակառավարվող լեզու է: Դա հենց այն է, ինչը մենք կոչում ենք ներշնչանք կամ մուսա: Հենց լեզվի այս ինքնակառավարումն էր, որը չգիտակցեց «Մոխրող Չորեքշաբթիի» հեղինակ Թոմաս Էլիոթը: Նա գգում էր Աստծուն, բայց ոչ նրա հնարավորությունները: Գրականությունն այն չէ, ինչը կարողում ես, այլ այն է, որում նախադասությունը ճախրանք է դառնում, իրեշտակի թև, քանզի գրքերը շատ են, նախադասությունները՝ քիչ:

Գրականությունը, Գիրքը մեզ պարզապես են ընթերցող լինելու արվեստը, նրանք մեզ դարձնում են արարչագործության մասնակից, նրանք մեզ օգնում են դառնալ ավելի լավը, շատ ավելի լավը, որպեսզի կանխենք քաղաքականության կոլիսներուն բժախնդրորեն գծագրվող ավերածությունները, որպեսզի պատմեշ դառնանք այդ ավերածությունների անխուսափելիության դեմ: Իսկ ո՞վ է ընթերցողը:

Նա այն մարդն է, ով գիրքը դարձնում է օրգանիզմ, նրա շնորհիվ տեղի է ունենում գալակտիկական այն Մեծ Պայթյունը, որի արդյունքում շարժման մեջ է դրվում ժամանակը: Ընթերցողը հրականության մեջ կենցաղ է մտցնում:

Գրքերը մեզ սովորեցնում են ընթերցվել, և կատարյալ հաղթանակ կլինի, եթե մենք չբավարարվենք դրանք կարդալով: Կարդալու և ընթերցելու միջև ընկած է գրքի հաղթահարումը: Կարելի է կարդալ Ուիլյամ Ֆոլքերներից, բայց չհաղթահարել նրան, ես չեմ կարդացել Ջեյմս Ջոյսի «Ուլիսը», բայց կարծում եմ, որ ես դեռևս դպրոցական եմ այդ գիրքը կարդալու համար: Ոչ թե որ Ջոյսը ինձանից ավելի մի հրաշք է, այլ որ ես չեմ հասունացել նման մի հրաշքին մերժեմալու համար և հնարավոր է, այդպես էլ չհասունանամ: Յուրաքանչյուր գիրք մեր առջև բացում է մարդու աշխարհը, գիրքը բառերը չեն, գիրքը նույնիսկ բառերի, խոսքի, արտահայտվածի, չարտահայտվածի գազանը չէ, այլ ավելի անընդգրկելի մի բան: Գիրքը, կվե-լի ճիշտ աշխարհի բոլոր գրքերը մեզանից յուրաքանչյուրի կենսագրությունն են: Եգիպտացիներն ասում են, որ մեռած մարդու հետ կորչում է մի ամբողջ գրադարան: Ինչու:՞ Իրովհետև մեկ մարդը գրված և չգրված, գրվելիք և չգրվելիք բոլոր գրքերի հանրագումարն է: Բայց գիրքն առայժմ մեզ առեթեսում է մեր հնարավորություններին, այն մեզանից մեկ կենսագրություն ավելին կողմ մի աշխարհ է, քանի որ մարդիկ դեռևս սպանվում են, քանի որ դեռ կան բռնապետերը, դեռ կան պատերազմ հրահրողները, դեռ կան մարդասպանները, դեռ կան պարզապես չար մարդիկ: Եվ ես կարծում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը պետք է հասկանա ամենագլխավորը՝ գիրքն, այնուամենայնիվ, էջ թերթիլու արագությամբ Աստված լինելու հնարավորությունն է:

ԻՍԿ ՏՆԱԿՆԵՐԸ ԴԵՌ ՉԵՆ ՎԵՐԱՑԵԼ

1988 թ. երկրաշարժից 16 տարի անց արտագաղթի, ծնելիության պակասի և մահացությունների արդյունքում Վանաձորում բնակարանների հերթացուցակը (աղետի հետևանքով քանդված շենքերի բնակիչների) «մաքրվել» է և մնացել է ընդամենը 140 ընտանիք (մինչև 1988թ. այդ ընտանիքների թիվը հազարների էր հասնում): Այդ ընտանիքների համար, սակայն, նոր շենքեր չեն կառուցվելու, քանի որ սկսած 1998 թ. Վանաձորում կիրառվում է պետության կողմից բնակարանների գնման և կարիքավորներին հանձնելու քաղաքականություն, նկատի ունենալով, որ երկրաշարժից հետո կառուցված «Տարոն» թաղամասում մեծ թիվ էին կազմում դատարկ, չբնակեցված կամ վաճառքի ենթակա բնակարանները: (1998թ. սկսած Վանաձորում հիմնականում դպրոցաշինություն էր ընթանում, իսկ բնակարանաշինությունը, փաստորեն, հիմնականում եղել է մինչև 1998թ.):

Առ այսօր, սակայն, Վանաձորում գոյություն ունեն տնակային թաղամասեր, որոնց բնակիչներին կարելի է բաժանել մի քանի խմբերի.

- մարդիկ, որոնք ժամանակին չեն տեղափոխվել իրենց հատկացված բնակարանները ծայրամասային «Տարոն» թաղամասում (պատճառաբանելով որոշ շենքերի բնակության համար ոչ պիտանի լինելը, քանի որ դրանք հանձնվել էին կիսատ-պռատ, բերություններով):

- մարդիկ, որոնք չեն տեղափոխվել իրենց հատկացված բնակարանները վերոնշյալ թաղամասում, պատճառաբանելով, որ պետությունը պարտավոր է իրենց բնակարան հատկացնել իրենց քանդված շենքի տեղում, քաղաքի կենտրոնում (օրինակ՝ Տիգրան Մեծի 73):

- մարդիկ, որոնք իրենց հատկացված բնակարանները հարկադրված են եղել վաճառել, որպես ապրուստի միջոց, և առ այսօր հարկադրված բնակվում են տնակում:

Վանաձորի քիմիագործների թաղամասում տնակների առկայության այլամաններում այդպես էլ չսկսվեց արտասահմանցիների կողմից նախատեսված բուժհամալիրի կառուցումը: Այս տարվա հունվարից Վանաձորի քաղաքապետարանը տնակներից բնակիչների վտարման հայցադիմումներ էր ներկայացրել Լոռու մարզի առաջին ատյանի դատարան: Հատկանշական է, որ դատավորներից մեկը մերժել էր հայցը, մյուսը՝ բավարարել: Այն բնակիչները, որոնց նկատմամբ պետությունը պարտավորություն ուներ, քաղաքապետարանն առաջարկում էր տեղափոխվել հանրակացարան: Գործընթացն առայժմ ընթանում է դժվարությամբ:

Սկսած 1998թ. պարբերաբար հայտարարվում է, որ Վանաձորում շուրջ 70 շենքեր ամրացման ենթակա են, սակայն գործնական ոչինչ չի արվում, և մարդիկ շարունակում են բնակվել այդօրինակ շենքերում:

Վանաձորցիներին այժմ մտահոգում է այն, որ քաղաքի կենտրոնում քանդված շենքերի տեղում (Բանյոյի փողոց, Տիգրան Մեծ պողոտա) նոր շենքեր չեն կառուցվում, ինչի հետևանքով քաղաքի ճարտարապետական դիմագիծը թերի է: Ավելին, քանի որ պետությունն այդտեղ չի նախատեսում շենքեր կառուցել, ուստի դա հնարավորություն է տալիս տեղական իշխանություններին՝ սնամբները աճուրդով վաճառել «օբյեկտներ» կամ սեփական տներ կառուցելու նպատակով:

Գայանե ՂՈՎՍԵԾՅԱՆ

Գեղագիտության Ազգային Կենտրոնի Վանաձորի մասնաճյուղը 20 տարեկան է

«Կենտրոնի քսան տարին ջահել տարիք, է երիտասարդի հասակ: Իսկ գեղագիտական օջախի համար այն կայուն շրջան է առավել, որովհետև միշտ ներարկվում է եկող մանուկ սերնդի ալիքվող ավյունով: Ու չի պղծվում, չի խաթարվում աճող տարիների չափով, այլ մնում է միշտ անապակ» - ասում է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մելս Սանթրյանը:

1984թ.-ին արվեստաբան, Հայաստանի Գեղագիտության Ազգային Կենտրոնի գլխավոր տնօրեն, Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի տնօրեն Հենրիկ Իգիթյանի ջանքերով բացվեց Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի վանաձորի մասնաճյուղը, որը այժմ վերանվանվել է Գեղագիտության Ազգային Կենտրոնի Վանաձորի մասնաճյուղ: Այն հիմնադրվել է 20 տարի առաջ և իր գոյության ընթացքում բացել ու մասնակցել է թվով 145 ցուցահանդեսների՝ շուրջ 6000 աշխատանքներով: Գեղագիտության Ազգային Կենտրոնի Վանաձորի մասնաճյուղի սաները մասնակցել են 8 միջազգային ցուցահանդեսների, որից 5-ում ճանաչվել են հաղթող: Ստեղծված օրվանից մինչև այսօր ոչ աղետաբեր երկրաշարժ, ոչ հանրապետության տնտեսական ճգնաժամը, և ոչ էլ շուկայական հարաբերությունների առաջացրած դժվարությունները ի վիճակի չեղան ընդհատելու Գեղագիտական կենտրոնի կյանքի ռիթմիկ ընդացքը:

Մանկական արվեստի այս դարբնոցում մարդը լիարժեքվում է գեղեցիկով: Այստեղ գեղեցիկ վեհը աչքին տեսնող հայացք է տալիս, ակնաքին տարբերակող լսողություն, ձեռքին՝ արարման խոյանք:

Այստեղ գեղեցիկն սկսում է թրծել ապագա հային, մաքրում է նրան բերարժեքության զգացումներից ու օգնում է կանգնելու սեփական ոտքերի վրա:

Գեղագիտության Ազգային Կենտրոնում, որը անմնացորդ նվիրվածությամբ ղեկավարում է Կարինե Գլոյանը, այսօր գործում են կերպարվեստի, խեցեգործության, կարպետի, զորելենի, ասեղնագործության, փայտի փորագրության, տիկնիկագործության, թատերական, ասունքի, ժամանակակից և պարահանդեսային պարերի, օտար լեզուների խմբեր, որտեղ տարեկան գեղագիտական դաստիարակություն են ստանում շուրջ 250 սաներ: Ի դեպ, շատ երեխաներ շփվում են միաժամանակ մի քանի խմբերի հետ: Տնօրենի կարծիքով պարտադիր չէ, որ այսօրվա մանուկը վաղն արվեստագետ դառնա, բայց ցանկալի է, որ նա մարդ լինի արվեստագետի հատկանիշներով, լիարժեքվի որպես անհատ, ունենա հարուստ ներաշխարհ:



Գեղագիտական կենտրոնում ուսուցումն իրականացնում են մասնագետ-մանկավարժներ, որոնք ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն և մանկավարժական մեծ փորձ:

Ինչպես հպարտությամբ մշեց կենտրոնի տնօրեն Կարինե Գլոյանը, կենտրոնում մշտապես գործում է մանկական փոքրիկ թանգարանը, որտեղ բարձրարժեք աշխատանքներ շատ կան: Ցուցադրույթն այստեղ բազմաժամեր է՝ գեղանկար, զորելեն, խեցեգործություն և ասեղնագործություն, որի մոնչների շարքում կան այնպիսի եզակի աշխատանքներ, ինչպիսիք են՝ Այնթափի, Մարաշի, Ուրհայի, Վասպուրականի և պատմական Հայաստանի մյուս վայրերը ներկայացնող ասեղնագործ մոնչներ: Ամեն եկող սերնդի հետ թարմանում է կենտրոնը, որի խմբակներում սկսվում է բացվել գեղանկարի երփնագիրը, ծաղկում է ազգային գորգի, կարպետի ու օտար զորելենի դաշտը, ասեղնագործվում է ներաշխարհի նրբենին, փորագրվելով արժևորվում է փայտը, կենդանանում են տիկնիկ-խամաճիկները, մասնակցները խոսում, երգում են մայրենի և օտար լեզուներով, պարում են աշխարհի պարեր:

Գեղագիտության Ազգային Կենտրոնի սաները միշտ եղել են ակտիվ մասնակիցներ թե՛ քաղաքային, թե՛ հանրապետա-

կան մրցույթների և փառատոների ժամանակ, բազմիցս ճանաչվել են հաղթողներ:

Դեկտեմբերին Երևանի ՄԱԿ-ի գրասենյակում կազմակերպված «Աշխարհը ընդդեմ տեռորի» խորագրով ցուցահանդեսում Արսեն Ռաֆայելյանի և Կինա Կարապետյանի սաների ներկայացրած 10 ստեղծագործություններից հինգը հերթական անգամ Վանաձոր վերադարձան հաղթանակած, մրցանակներով: Մասնակիցներից աչքի ընկան Մանուկյան Հովհաննեսը, Բեզջանյան Գեղանը, Վարդանյան Ասատուրը, Զուրաբյան Արգիշտին և Մխիթարյան Տաթևիկը:

Ցանկանանք նրանց ստեղծագործական բեղմնավոր ապագա:

Գեղագիտության Ազգային Կենտրոնը դարձել է մեր քաղաքի արվեստագետների և արվեստասեր հասարակության համար մի գողտրիկ միջավայր, որն իր ուրույն ավանդն ունի երեխաների գեղագիտական դաստիարակության գործում:

Ողջունելի է, երբ այսօր կան մարդիկ, որոնք խորությամբ գիտակցում են այդ գործի ողջ կարևորությունը: Պետք է ըստ արժանվույն շնորհակալ լինել գեղեցիկն ու վեհը սերմանող, մեր գորչ առօրյան գունավորող այդ մարդկանցից:

Գեղագիտության Ազգային Կենտրոնի մասին կարելի է երկար խոսել, ավելի երկար ճեմել ցուցադրահում:

Չնայած բազում պրոբլեմներին և դժվարություններին, այսօր Գեղագիտական կենտրոնն ապրում է իր հետաքրքիր ու բազմաբովանդակ կյանքով:

Այստեղ նորից տեղի են Մելս Սանթրյանի խոսքերը. «Ուրեմն՝ օրինված է այս օջախի ծնունդն ու առնականացումը, ուրեմն՝ ճիշտ է նրա գործունեության ներկա շարունակականը, ուրեմն՝ ազգային է այս օջախի գոյությունը, ուստի և բարի երթ մեր տարածքում եզակի, իգիթյանական աստվածանվեր կենտրոնի գործին ու առաքելությանը»:

ՀԿԿ-ն ԱՊՀ-ից պահանջում է ճանաչել Ցեղասպանությունը

Հունվարի 21-ին Մոսկվայում տեղի է ունեցել Կոմունիստական կուսակցությունների միություն-ԽՍՀՄ (ԿԿՄ-ԽՍՀՄ) խորհրդի նիստը:

Նիստին մասնակցել է նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավար Ռուբեն Թովմասյանը: Հայ կոմունիստների նախաձեռնությամբ միստի քննարկմանն է դրվել և ընդունվել 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը ԱՊՀ երկրների կողմից ճանաչման հարցը: ՀԿԿ-ն այս հարցը բարձրացնելու երկու պատճառ է ունեցել. «Այս տարի լրանում է եղեռնի 90-ամյակը, և Եվրախորհուրդը կանաչ ճանապարհ է տվել այս տարվա հոկտեմբերին բանակցություններ սկսել Թուրքիայի հետ, որը հետագայում այդ երկրին կթույլատրի Եվրամիությանն անդամակցել»,- ասում է Ռուբեն Թովմասյանը: Ապա՝ «ԱՊՀ կոմկուսները ելնելով նրանից, որ Թուրքիան այսօր համարվում է միջազգային իմպերիալիստական ուժերի գլխավոր դերակատարներից մեկը, ԱՄՆ-ի սերտ դաշնակիցը, և այն հանգամանքը, որ Եվրոպական մի քանի երկրներ գտնում են, որ Թուրքիայի հետ վարվող բանակցություններում նախապայման պետք է լինի 1915 թվականի Ցեղասպանության ճանաչումը, միաժամ ընդունեցին հայտարարությունը»: ԱՊՀ կոմկուսներին հանձնարարվել է իրենց հանրապետություններում համապատասխան աշխատանք տանել և պահանջել իշխանություններից՝ ճանաչել Ցեղասպանությունը:

Նոր ֆիլմ հին պարի անվանումով

Վերջերս նախ՝ կինոտանը, այնուհետև՝ «Սոսկվա» կինոթատրոնում կայացավ «Հայֆիլմ» կինոստուդիայում նկարահանված վերջին ֆիլմի՝ «Յարխուշտանի» պրեմիերան։ Կինոնկարը, որի սցենարի հեղինակը Ղուկաս Սիրունյանն է, սուր սոցիալական թեմա ունի։ Գլխավոր հերոսը հաշմանդամ ազատամարտիկ է, մի ոտքը արցախյան պատերազմում կորցրած հրամանատար։

Թվում է, թե այսքանով ամեն ինչ սաված է, որովհետև բոլորս ենք ականատես հերոսի սոցիալական նվաստ վիճակին, ճանաչում ենք նրան, մեր շրջապատից որևէ մեկի հետ համեմատում։ Բայց ֆիլմի հեղինակները, երբեմն խտացնելով գույները, երբեմն միայն ակնարկելով, կարողանում են հանդիսատեսին հասցնել կարծր, պինդ, աներեր հոգու տեր մարդու բազմազան ապրումների ողջ փունջը։ «Յարխուշտան» սասունցիների պատերազմական պարի անվանումն է, որ սերնդեսերունդ հասել է մերօրյա ֆիդայիների։ Ֆիլմի հերոսն այս պարը պարել է ճակատում մարտական ընկերների հետ, պարում է նաև ֆիլմի ավարտին իր կնոջ հետ, Արայի լեռան հայացքի տեղք։ Պարում է մեկ ոտքով։ Պարում է ու պարի մեջ ամփոփում, զսպում աշխարհի դեմ իր մեջ կուսակցական արդար բողոքի ու ցասումի պոռթկումը։ Կինոնկարի ռեժիսոր Գագիկ Հարությունյանի հետ մեր հարցազրույցը, սակայն, սկսում ենք ավելի հեռվից։

- Կարելի՞ է ասել, որ «Յարխուշտան» արցախյան պատերազմի թեմայով առաջին ֆիլմն է։ Թեպետ այն ավելի շատ հետպատերազմյան շրջանին է վերաբերում։

- Ղարաբաղյան պատերազմին՝ մարդկանց, հաղթանակներին վավերագրությունն անդրադարձել է, բայց գեղարվեստական կինոյում այս ֆիլմը պիտի որ առաջինը համարվի, չնայած, ինչպես ճիշտ նկատեցիք, «Յարխուշտան» պատերազմի գեղարվեստորեն պատկերումը չէ։ Հաղթանակած զինվորը, հրամանատարը, որը կորցրել է ոտքը, պիտի հայտար լիներ իր հենակներով, սակայն այսօր հակառակն է։ Ինքը՝ Պարզը, որի կերպարը, իմ կարծիքով, Ռուդոլֆ Ղևոնդյանը հրաշալի է մարմնավորել, չունի նոստալգիկ ոչ մի

բան, չի ափսոսում ոչնչի համար, ունի ներքին ցավ, բայց փորձում է թաքցնել, զսպել, սակայն փաստ է, որ պատերազմը նրա համար չի վերջացել։ Ֆիլմում պատերազմի հաշմանդամ հերոսի մեկ օրվա կյանքն է։ Պետք է հասնի քաղաք՝ Հոլանդիա արտագաղթած աղջկան զանգահարելու, և վերադառնա։

- Այսինքն՝ կինոյում շոշափվում է մեկ այլ ցավոտ հարց էլ՝ արտագաղթը։

- Դրանք իրար հետ փոխկապակցված են։ Նա կռվել է հայրենիքի, իր ընտանիքի, իր զավակների համար, բայց աղջիկը թողել է հայրենիքն ու հայտնվել Հոլանդիայում։ Հեռախոսազրույցի առաջին բառերը հորդոր են ուղղված աղջկան «Երեխաների հետ հայերեն շատ խոսիր՝ լեզուն չմոռանան»։ Սակայն պատասխանը, որ լսում է, ցնցում է նրան. «Խաղայկերն հայերեն չի հասկանում, դրա համար էլ չեն թողնում, որ հայերեն խոսեն»։

- Գիտե՞ք, որ պատերազմ անցած կամ անցած չանցած ոչ բոլորն են Պարզի վիճակում։ Այսինքն՝ կա ազատամարտիկի նաև աղավաղված կերպար, որը նույնպես մեր կողքին է, մեզ ծանոթ։ Ի վերջո, ժողովուրդը հենց այնպես չէր հորինել «ասֆալտի ֆիդայի» հասկացությունը։

- Այո, ֆիլմում ակնարկվում է, որ գյուղապետի որդին էլ է ֆիդայի եղել։ Մեկ ժամվա ճանապարհը, որ հերոսը ոտքով պիտի անցնի, շատ երկար է ու ծանր, բայց Պարզը չի համաձայնում մտնել գյուղապետի շքեղ «Սերսեղեսը»։ «Իմ ոտքը նրա մեքենան չի մտնի», - ասում է։ Ասենք, որ ինքը մեքենայի տերը, չի էլ կանգնում, փորձ էլ չի անում նրան վերցնել ճանապարհից։ «Կարող ա՛՛ չճանաչեց», - փորձում է ամուսնուն հանգստացնել կինը, բայց Պարզը պատասխանում է. «Էս գյուղում քանի՞ մի ոտանի մարդ կա, որ չճանաչեց»։ Սակայն Պարզը գյուղապետի հետ կռիվ չունի։ Իր կռիվն իր հետ է։ Աղջիկը Հոլանդիա է հրավիրում. «Այստեղ լավ կապրես, քեզ հոլանդական պրոթեզ կտան»։ Պարզը գիտի, որ թեպետ շատ է կարոտել երեխաներին, որ թեպետ խճճված է պարտքերի մեջ, որ գազի փողը չի կարող մուծել, որ խոզը կեր չունի, որ սեռական փոքրամասնության ներկայացուցիչը մանրադրամ է մետում իրեն շփոթելով մուրացկանի հետ, սակայն իր կանքը,

իր կորովը, իր անտարբերությունը դեռ պետք են լինելու երկրին։

- Պրն Հարությունյան, ինչո՞վ է պայմանավորված ֆիլմի տևողությունը՝ 40 րոպե։ Արդյո՞ք ֆինանսական են պատճառները։

- Ֆիլմը ֆինանսավորված էր 20 րոպեի համար, բայց մենք դարձրեցինք 40 րոպե։

- Որքան գիտե՞մ ֆինանսավորումը պետք ունեցի՞ց է եղել։

- Այո, և նկարահանվել է «Հայֆիլմ» կինոստուդիայում։ Անպայման ուզում են մշել «Հայֆիլմի» տնօրենի՝ Գևորգ Գևորգյանի դերի մասին, որն ամբողջ ընթացքում մեր թիկունքին կանգնած է եղել։

- Բավարարո՞ւմ է կինոստուդիայի տեխնիկական վիճակը՝ զեղարվեստական ֆիլմ նկարահանելու համար։ Իր հարցազրույցներից մեկում մշակույթի նախարարը հայտարարեց, թե այսօր Հայաստանում չկա ոչ մի պրոֆեսիոնալ կինոխցիկ։

- Կինոստուդիան ունի մի պրոֆեսիոնալ խցիկ, դա էլ Ազնավուրի նվերն է։ Այսօր այլ երկրներում նկարահանում են դրա առավել կատարելագործված տեսակով։ Այնուամենայնիվ, «Հայֆիլմի» բազան բավականին պահպանվել է։

- Անդրադառնանք կինոնկարի հետագա ճակատագրին, որովհետև մի բան է ֆիլմ նկարահանելը և մեկ այլ բան՝ այն շուկա հանելը։ Ի՞նչ ծրագրեր կան այս ինաստով. ցուցադրություններ, փառատոներ և այլն։

- Ասեմ, որ ծրագրել էինք ուղարկել Սոսկվայի «Նիկա» փառատոնին, սակայն պարզվեց, որ նրանք 57 րոպե է ավելի տևողությամբ ֆիլմեր են միայն ուզում։ Փառատոնի կմասնակցներ Գերմանիայում։ Այժմ ֆիլմը քարգանձության փուլում է։ Պատրաստվում ենք այն ցուցադրել նաև Արցախում։

- Իսկ նոր ֆիլմ նկարահանելու ծրագրեր ունե՞ք։

- Նույնպես «Հայֆիլմում» կնկարահանեն ֆիլմ՝ Թոթովենցի «Մի կյանք և մի սեր» պատմվածքի հիման վրա։ Սցենարն արդեն պատրաստ է։ Տիգրան Խզմայանի հետ պայմանավորվել ենք, որ նրա ղեկավարած «Երևան» ստուդիայում կնկարահանեն գեղարվեստական ֆիլմ, որի թեման կլինի նույնպես խիստ սուր ու արդիական մահապատիժ, թե՛ ցմահ բանտարկություն։

Հարցազրույց՝ Հովհաննես ԵՐԱՆՅԱՆԻ

Եղբայրություն

Վերջին տարիներին բավականին հաճախակի են դարձել հայթուրքական հարաբերությունների կարգավորմանը, հայերի և թուրքերի միջև առկա դարավոր թշնամանքի հաղթահարմանն ուղղված տարբեր կառույցների և անհատների նախաձեռնությունները իրականացվող միջոցառումները։ Այս տարվա հունվարի 8-ին Ստամբուլում մի ցուցահանդես է բացվել, որը նվիրված է 20-րդ դարասկզբին Անատոլիայում հայերի ապրած կյանքին, ամենայն մանրամասնությամբ՝ քաղաք առ քաղաք ներկայացված է, թե ինչպես են հայերը սփռված եղել Օսմանյան կայսրությունում, ինչ դեր են ունեցել հասարակական կյանքում և այլն։ Ի դեպ, ցուցահանդեսը, որի հեղինակը թուրք է, կրում է «Իմ սիրելի եղբայր» խորագիրը։ Ստամբուլում բացված այդ ցուցահանդեսը 12 օրվա ընթացքում ունեցել է վեց հազար այցելու, ինչը, ինչպես նշում է թուրքական «AFP» գործակալությունը, ռեկորդային ցուցանիշ է տեղական ցուցահանդեսների

համար։ «Երբ մենք խոսում ենք հայերի մասին, նրանց վերաբերվում ենք որպես պրոբլեմների աղբյուրի։ Հասարակության մեծամասնությունը, հատկապես շրջաններում, պարզապես «հայ» բառը վիրավորանք է համարում», - ասել է ցուցահանդեսի կազմակերպիչ Օսման Կոկերը։ Նա նաև նշել է, թե չի ցանկանում, որ իր 11-ամյա աղջիկը շարունակի դպրոցիսի դաստիարակություն ստանալ. «Մենք պետք է փոխենք մեր վերաբերմունքը, քանի որ առանց դրա հնարավոր չի լինի քննարկել 1915 թվականի հայերի ջարդերի խնդիրը, որոնց մասին Թուրքիայի պատմությունը լռում է»։ Վերոնշյալ գործակալությանը տված հարցազրույցում, այնուհանդերձ, նա նաև ասել է, որ եթե նույնիսկ ականավոր ակադեմիկոսներն ու պատմաբանները սկսեն վերանայել Թուրքիայի պատմությունը, միևնույն է՝ հեշտ չի լինելու հաղթահարել այդ խնդրի շուրջ պաշտոնական պատմության մեջ արմատացած տաբուն։

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ ԱՅՍ ՕՐԸ ԾՆՎԵՑ ԱՍԱԼԱ-Ն

1973 թ. հունվարի 27-ին, Կալիֆոռնիայի Սանտա-Բարբարա քաղաքում սպանելով Լուս Անջելեսում թուրքիայի գլխավոր հյուպատոսին ու նրա տեղակալին, համիդյան ու երիտթուրքական եղեռներից մազապուրծ, ծերունի Գուրգեն Յանիկյանը (1895-1984) հայտարարեց, իր իսկ խոստովանությամբ, «հայ անհատի պատերազմը թուրքիո դեմ»: Նրա արձակած փամփուշտները նախանշեցին ազատագրական պայքարի միջոցը սփյուռքի այն հայ երիտասարդների համար, որոնք 1965 թ. Մեծ եղեռնի 50-ամյակի միջոցառումներից արթնացել էին թմբորից ու ելք էին որոնում:

1975 թ. հունվարի 20-ին Բեյրութում, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գրասենյակի ռմբահարումով «Յանիկյան կոմանդոն» ազդարարեց իր ծնունդը: Այս փոքր խմբակը հետագայում համարվեց նոր անդամներով և կարճ ժամանակ «Հայ գաղտնի բանակ» անունը կրելուց հետո 1977 թ. վերջնականապես որդեգրեց «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ» (օտար անվան հապավումով՝ ԱՍԱԼԱ) անունը:

Ինչո՞ւ ԵՅՆ-ի գրասենյակի ռմբահարումը: Կազմակերպությունը գտնում էր, որ խորհրդային Հայաստանից ու հայոց հայրենիքի մերձակա երկրներից հայության արտագաղթը սպառնում է հայ ազգի գոյությանը, իսկ ԵՅՆ-ն արտագաղթը քաջալերող ակտիվ գործունեություն էր ծավալել:

ԱՍԱԼԱ-ն ավելի քան 5 տարի գործեց խորը գաղտնապահության պայմաններում, այն աստիճանի, որ սփյուռքահայ որոշ խմբագիրներ կասկած էին հայտնում նրա անդամների հայ լինելու առնչությամբ: 1980 թ. շրջադարձային եղավ կազմակերպության համար. հունիսին ծնվեց ԱՍԱԼԱ-ի քաղաքական թևը համարվող հայկական ժողովրդային շարժումը. հոկտեմբերին, երբ թողարկման էր պատրաստվում ԱՍԱԼԱ-ի «Հայաստան» պաշտոնաթերթի առաջին գրոյակն էր համարը, շվեյցարական մի հյուրանոցում, ամսի 3-ին հերթական ռումբի տեղակայմանը նախապատրաստվելիս արկածի հետևանքով բացահայտվեցին ԱՍԱԼԱ-ի երկու անդամներ՝ Ալեք Յենիգոմյանը (կորցրեց աջ բազուկն ու տեսողությունը) և Սյուզի Մահսերեջյանը: Նրանք էլ եղան կազմակերպության առաջին բանտարկյալները:

ԱՍԱԼԱ-ն մեծ թափ հավաքեց հատկապես հաջորդ տարի, և սովորական դարձած ռմբահարումներից ու թուրք դիվանագետների սպանություններից անցում կատարեց այսպես կոչված «որակական գործողությունների», թեև նախորդ «ավանդական» գործողությունները շարունակվեցին: 1981 թ. սեպտեմբերի 24-ին իրականացվեց «Վան» գործողությունը, երբ «Եղիա Քեշիշյան» անձնասպանական կոմանդոյի չորս մարտիկները 15 ժամ գրավման տակ պահեցին Փարիզում թուրքիայի հյուպատոսարանը: Որակական գործողություններ էին նաև 1983 թ. հուլիսի 15-ին Փարիզի «Օռլի» օդանավակայանի «Թուրքական ավիաուղիների» գրասենյակի առաջ պայթած ռումբը (որը պետք է պայթեր թռիչքի



ընթացքում), 1982 թ. օգոստոսի 7-ին Անկարայի «Էսեմբողա» օդանավակայանում իրականացված «Կարին» և 1983 թ. հունիսի 16-ին Ստամբուլի ծածկած շուկայում իրականացված «Հակոբ Հակոբյան» անձնասպանական գործողությունները: 80-ականների երկրորդ կեսին ԱՍԱԼԱ-ի թափը զգալիորեն նվազեց տարբեր պատճառներով, որոնց շարքում արյունոտ հակամարտությունը ՀՀ-ի հետ, վերջինիս ղեկավարության մեղքով, ներկազմակերպական դավադրությունը, թուրքական գաղտնի ծառայությունների կողմից ԱՍԱԼԱ-ի և ՀԺԸ-ի մի շարք անտիպիտոների սպանությունները Լիբանանում ու Եվրոպայում: 1988 թ. ապրիլի 28-ին Աթենքում խորհրդավոր պայմաններում սպանվեց կազմակերպության հիմնադիրներից ու փաստական ղեկավար Հակոբ Հակոբյանը (կազմակերպական այլ կեղծանուններով՝ Մուջահեդ, Աբու Ահմադ և այլն: Բուն անունով՝ Հարություն Թագուշյան՝ Իրաքի հյուսիսի Ձախոյի շրջանից): ԱՍԱԼԱ-ի վերջին հայտարարված գործողությունը եղավ 1990 թ. դեկտեմբերին Բուդապեշտում թուրքիայի դեսպան Բեդրեդին Տունաբաշի սպանության անհաջող փորձը:

1980-ականներին իրականացրած գործունեությունների հետևանքով ԱՍԱԼԱ-ն ունեցավ ավելի քան 30 նահատակներ, բազմաթիվ բանտարկյալներ աշխարհի տարբեր երկրներում: Բոլոր բանտարկյալները, բացի ֆրանսիական բանտում ինքնասպանության մղված Արամ Բասմաջյանից, մինչև 2001 թ. ապրիլն ազատ արձակվեցին: Նրանք 1990-ականներին հանգրվանեցին Մայր հայրենիքում. առաջինը եղավ «Վան» գործողության ղեկավար Վազգեն Սիսյանը (1990 թ. ապրիլին), վերջինը՝ «Օռլի» գործով մեղադրված Վարուժան Կարապետյանը (2001 թ. ապրիլին): ԱՍԱԼԱ-ի նախկին անդամներից Մոնթե Մելքոնյանն ու Գևորգ Գյուզեյանը մասնակցեցին արցախյան ազատամարտին. Մոնթեն զոհվեց Մարզիլիում, 1993 թ. հունիսին: Հայրենիքում հաստատված ԱՍԱԼԱ-ականներից ոմանք (Դավիթ Դա-

վիթյան, Աբրահամ Խամիսյան, Էլեն Սանդրիկ և ուրիշներ) 90-ականներին սպանվեցին խորհրդավոր պայմաններում, համարելով ՀՀ-ում խորհրդավոր ու չքացահայտված սպանությունների շարանը...

ԱՍԱԼԱ-ի գինանշանն էր Միացյալ Հայաստանի քարտեզը՝ կենտրոնում AK տիպի ինքնաձիգով: Կազմակերպությունն ունեցել է երկու նշանախոսք, որոնք միշտ տեղ են գտել նրա պաշտոնաթերթերի ճակատներում. «Կեցցե՛ իրաւագրկուած ժողովուրդներու յեղափոխական միասնականութիւնը», «Ձիճնեալ պայքարը և քաղաքական ճիշտ գիճը ուղիճ են Հայաստանի»:

Թեև ԱՍԱԼԱ-ի մասին լույս է տեսել ծովածովալ գրականություն (թե՛ հայերի և թե՛ օտարների հեղինակած տասնյակներով գրքեր ու հարյուրավոր հոդվածներ), այնուհանդերձ, մեր կարծիքով, ԱՍԱԼԱ-ի պատմությունն սպասում է իր անաչառ հետազոտողին՝ հեռու ամեն սուբյեկտիվ մոտեցումներից:

Ստեղծվել է ԱՍԱԼԱ-ին նվիրված խտասալիկ

ԱՍԱԼԱ-ի 30-ամյակի նախօրյակին, հավանաբար Բեյրութում ՀԺԸ-ը իրապարակ է հանել «Ժողովուրդէն ժողովուրդին» խորագրված խտասալիկը (CD), որն ունի պատմական սկզբնաղբյուրի նշանակություն: Այն բովանդակում է 19 նյութ՝ երգեր, ուղերձներ և բանաստեղծություն: Կից տեղեկաթերթիկի մեջ հայտնվում է. «Մեր ժողովուրդը վերջին անելի քան 100 տարուան ընթացքին ունեցած է ազատագրական պայքարի երեք հանգրուաններ: Առաջինը՝ Մերոք Առքիւր, Գեորգ Զաուշ և Անդրանիկեան ժամանակաշրջանն է Արևմտահայաստանի մէջ, երկրորդը՝ արցախեան ազատագրական պայքարն է Արևելահայաստանի մէջ, իսկ երրորդը՝ սփիւռքահայ ազգային ազատագրական նորագոյն պայքարն է՝ ընդդէմ հայկական հողերը բռնագրաւող թուրքիոյ ու անոր դաշնակիցներուն, քանի որ առանց այդ վերջիններուն թուրքիան անկարող է ոտքի կենալու: ՀԱՀԳԲ-ն այս երկրորդ հանգրուանին ռահվիրան է:

Ժողովուրդին ծոցէն ծնած այս կազմակերպութիւնը կը նմանի անոր. կորսնցուցած ըլլալով հայրենի հողը, ան ազգապահպանումը կը տեսնէ միայն բռնագրաւուած հողերու ազատագրութեան մէջ, յենած ըլլալով իր ժողովուրդին ուժին և կարողականութեան»:

Երգերի մեծ մասը ժողովրդական հորինումներ են՝ ներշնչված ԱՍԱԼԱ-ի իրականացրած այս կամ այն զգայացուցող գործողությունից և առհասարակ նրա մղած պայքարից. ոմանք ԱՍԱԼԱ-ի ռազմականություններում մարզվող մարտիկների ինքնաբուխ կատարումներ են: Ֆրանսահայ երգիչ Մարթեն Յորգանցի կատարումով հնչում են երկու երգեր, որոնցից «Սիրելի մայրը» մահապարտի խոսքն է իր մորը: Կան նաև երգեր, որոնք «ներշնչած են հայ նորագոյն ազատագրական պայքարի ազատամարտիկները»:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՄԵԾ ՄՇԱԿՈՒՅԹՆ Է



Ազգային ու համամարդկային, հայու-թյան առաջնահերթությունների, սիրո և արժանապատվության մասին է մեր գրույցը հրաշալի գեղագետ, գրող ու նկարիչ, ռեժիսոր ու սցենարիստ, արտիստիկ անհատականություն ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ հետ:

- *Դուք հայության, Հայաստանի տարբեր ժամանակաշրջաններում եք ապրել, իբրև գեղագետ, իբրև ստեղծագործող, ե՞րբ եք ձեզ ավելի ազատ ու անկաշկանդ զգացել:*

- Մինչ Ստալինի մահը գրելու ցանկություն անգամ չկար: Սարսափելի մթնոլորտ էր: Հիմա եմ շատ ազատ, բայց տարիքի խնդիր կա: Երբ եռանդ ունեի և կարող էի մի գիշերվա մեջ պիես գրել, կաշկանդված էի: Այսպես՝ մեր սերունդը սապոզի տակ մեծացավ: Իհարկե, կաշկանդում արտաքին էր. չէի կարող հրատարակել, չէի կարող բեմադրել: Հատկապես, երբ Վրաստանում էի ապրում: Այնտեղ որևէ հիմնարկում չեմ աշխատել: Ես սարսափում էի կաշկանդներից՝ ռայկոմի, կոմսոմոլի: Ամեն ինչ սուտ էր: Խուսափում էի, այսպես կոչված, հասարակական կարծիքից, ինչը սուտ բան էր: Իսկ ես սուտը տանել չեմ կարող: Դրա համար մեկուսացած եմ ապրել: Հիմա էլ մեկուսացած եմ, թեպետ հիմա մեկուսացումը մի քիչ այլ բնույթ է կրում: Սովետների ժամանակ ես չեմ շքիվել որևէ մեկի հետ: Դրա համար և՛ ինքս էի ազատ, և՛ միտքս:

- *Այդպես էր թիֆլիսում: Իսկ երբ Հայաստան եկա՞ք:*

- 1965-ին, երբ ես տեղափոխվեցի Երեվան, բրեժնևյան լճացման շրջանն էր: Շատերը գոհ էին այդ բարձրորդությունից՝ գոյություն, կաշառք: Ես մի այսպիսի արտահայտություն ունեմ՝ աստառը դուրս եկավ, աստառը երես դառավ և երեսը՝ աստառ: Արդեն ասում էին՝ այսքան կաշառք պիտի տաս, այս պիտի անես, այն... Այսօր իմիջիայլոց դրա շարունակությունն է, մարդը ևս չփոխվեց: Նույն սերունդն է: Հույսս նոր սերունդն է, որովհետև մարդը ծնվում է ճշմարտության պաշարով:

- *Համախ էք ձեր ստեղծագործություններում խոսում, ներկայացնում, պատկերում հայի տեսակը: Ըստ ձեզ, այսօր հայը կատարելությամբ է գնում, թե՞ դեգրադացիայի է ենթարկվում, ձևախեղվում:*

- Ո՛չ: Այսօր հայը հայանում է: Ես տեսել եմ, երբ հայը հայությունից փախչում էր: Այսօր գալիս է մի սերունդ, որը տեղյակ էլ չէ, որ կարելի է ազգանունը փոխել, այլ ազգանուն ունենալ: Մենք կենտրոն չունեինք: Կովկասում Հայաստան գոյություն չուներ: Շատերը համաձայն չէին, բայց կար երկու հանրապետություն՝ կենտրոնը թիֆլիսն էր: Որևէ հայեցի մտածողի Բերիան և Բաղիրովը չէին հանդուրժում: Կոմունիստներ էին, բայց հայեր էին խանջյանը, Ամատունին, բոլորին ոչնչացրին: Ես ծնվել եմ 1925թ. և տեսել Հայաստանի ձևավորումը՝ կամաց-կամաց: Այդ ողջ գործընթացները ես ապրեցի: Ես տեսա ինչ բան է հայությունը: Ե՛վ բոլոր բացասական կողմերը, և՛ բոլոր դրականը իմ մեջ է: Շատերը դրսից, երրորդ դեմքով են խոսում հայության մասին: Ժամանակին մենք չենք կարողացել դրսևորվել, քանզի ազգի սերունդը ոչնչացվել է: Այսօր ենք դրսևորվում: Այսօր ես գոհ եմ: Հայանում ենք: Հայերեն ենք խոսում: Շատերը լեզվից դժգոհում են, որովհետև չգիտեն, թե առաջ ինչ

էր կատարվում: Մարդիկ վախենում էին հայերեն խոսելուց: Ռուսական դպրոցներն ինչո՞ւ էին շատ: Մարդիկ հեռանում էին հայկականից, զզվում էին, հեռանկար չէին տեսնում:

- *Բայց չէ՞ որ այսօր էլ ամերիկահիզմի, գլոբալացման վտանգն է կախված:*

- Ոչ մի վտանգ էլ չկա: Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ նույն գլոբալացումն էր: Աշխարհով մեկ հունարենն էր իշխում: Հռոմի տիրապետության ժամանակ լատիներենն էր իշխում: Մեր թագավորները հունարեն էին խոսում, մեր փիլիսոփաները Հունաստանում էին: Սա գլոբալացում չէ՛ր: Ռուսաստանը նույն գլոբալացումը չի՞ պարտադրում: Այնպես որ, բոլոր իշխող կայսրությունները գլոբալացում են ենթադրում: Մեզ ոչինչ չի խանգարի: Այսօր դեմոկրատացում է գնում, իսկ հայն իր բնույթով դեմոկրատ է: Ինձ թվում է, սապազան լավ է լինելու: Մենք մեզ միշտ պահպանել ենք և պահպանելու ենք:

- *Ասում եք՝ այսօր մեզ շան է տրված ստեղծելու կամ ոչնչանալու: Ի՞նչ եք կարծում, ո՞ր ճանապարհն ենք բռնել:*

- Ես քաղաքական խմբավորումներից հեռու եմ, բայց տեսնում եմ, որ Պողոսը Պետրոսի դեմ պայքարում է: Մեկը Տեր-Պետրոսյանի դեմ է, մեկը՝ Քոչարյանի: Երրորդը կլինի՝ նրա դեմ կլինեն: Իրար դեմ են: Փոխվում են, գործընկերներ փոխում: Այստեղ Հայաստանը դառնում է առիթ հայկական թայֆաների ձեռքին: Ցավոք, սպեկուլյացիայի է ենթարկվում: Հայաստանը ամենից վեր է: Ինչ-որ այսօր կատարվում է, ճշգրիտ է: Ես մեծ պահանջներ չունեմ: Գողություն, կաշառակերություն՝ միշտ եղել է, պիտի լինի:

- *Դուք եք հասկանում, որ Հայաստանը ամեն ինչից վեր է: Բայց այսօր մեր իրականությունը գաղափարական վակուումի մեջ է:*

- Ձե՛, չէ, այդպես չէ: Ես երիտասարդներ

30 Գ

Անհնար է առանց խորը հուզումի ունկընդդեմ Գուրգեն Յանիկյանի և մահապարտներ Մկրտիչ Մաղարյանի, Ջոհրապ Աարզիսյանի ու Լևոն Էկմեկչյանի ուղերձներն իրենց ընտանիքներին և առհասարակ հայ ժողովրդին մահվամբ անմահությունը նվաճելու մեկնելուց առաջ: Հուզիչ է նաև Սիլվա Կապուտիկյանի Լևոնին նվիրված «Գիշերային ռեքվիեմ» բանաստեղծությունը, արտասանված իր իսկ բանաստեղծուհու շուրթերով, ԱՍԱԼԱ-ի գաղափարական հայրերից Սիմոն Սիմոնյանի հիշատակին երևանում կայացած մի միջոցառման ժամանակ: Յանիկյանը Չիմոյի (ԱՄՆ) իր բանտախցից հայտարարում է. «Թող աշխարհը գիտենա, որ մարդկությունը հայ ազգին պարտք ունի վճարելիք: Հպարտ եմ, որ հայ եմ, հպարտ եմ, որ հայ եմ ծնվել, հպարտ եղեք և Դուք, իմ սիրելի հեռավոր ցեղակիցներ, որ պատկանում եք մի ազգի, որ քանի-քանի անգամ ապստամբել է աշխարհին, որ կարող է տալ իր զավակների արյունը՝ ազատության ու արդարության համար... Մեր Հայ-

կական դատն ինձ համար մի հասկացություն ունի՝ մեզնից գողացված ու թուրքին նվիրված մեր հայրենական հողերի հետ ստանալը մեր ազգի համար և թուրքի մեր ազգին հասցրած վնասների հատուցումը»: Յանիկյանը քննադատում է հայկական ավանդական կուսակցություններին՝ կրավորականության համար ու համբուրում ՌԱԳԳԲ-ի մարտիկներին, որոնք «խոսքերի հեղեղի փոխարեն գործ են ցույց տալիս»: Նա կտակում է. «Ուժն է թելադրում մարդկանց գործերը և ոչ թե փառաբանված սերն ու գթությունը» ու ավելացնում. «Ոսկե պնակի վրա ոչ մեկի պետությունն է երկիր չի տրվում»: Յանիկյանն իր հայարտությունն է հայտնում, որ ՌԱԳԳԲ-ականներն իրենց «Յանիկյանի ջրկատներ» են հայտարարում:

Մկրտիչ Մաղարյանը (Ստամբուլի ծածկած շուկայի անձնասպանական գործողություններին իրականացնողը) իր վերջին ուղերձում մասնավորաբար ասում է. «Ով, սիրելի հայ ժողովուրդ, կամ մահ, կամ ազատություն... Ձե՛նքն է, որ մեզ պիտի հասցնե մեր բուն նպատակին: Վաթսուն

տարի է ի վեր մենք տեղքայլ ըրինք. հերիք է այլևս... Տու՛ր այդ գեները, որ երկար տարիներ կսպասեր հայու բազուկ մը, հայ մը, որ իրեն վեր բարձրացներ: Ով հայ, լուռ մի՛ մնար, բոլոր աշխարհ քու ձայնդ թող լսե... Մնաք բարով, իմ սիրելի հայ ժողովուրդ, իմ սիրելի եղբայրներ և քույրեր, վստահ եմ, թե իմ ետևեն պիտի շարունակեք պայքարը, սրբազան պայքարը, սուրբ պայքարը...»:

Ցավալի է արձանագրել, որ այս հույժ կարևոր նշանակության խտասալիկը տեսնիկական լուրջ թերություններ ունի: Հրապարակողները դա նկատի են ունեցել տեղեկաթղթիկում ունկնդիրների ուշադրությանը հանձնելով այն, որ խտասալիկը «հասարակած է զանազան իրն ու սիրողական ձայնագրութիւններէ, որով յաճախ ձայնային որակն անհրաժեշտ մակարդակով չէ»: Այդուհանդերձ, այս նյութերն անհրաժեշտ սկզբնաղբյուր են ԱՍԱԼԱ-ի և առհասարակ հայ ազատագրական շարժման պատմությունն ուսումնասիրողների համար:

31

գիտեմ, որոնք մեծ շրջանակի մեջ են մտածում՝ անճանականը գրիելով Հայաստանին: Անուններ չտամ՝ 20-25 տարեկան տղաներն են մեր ապագան: Մեր արագնաղը, որ թունամյան, Նժդեհի ու Քաջագունին է տվել, Չարենց, Խանջյան՝ չի կարող ապագա չունենալ: Հայության մեջքը շատ է կտրվել: Մեկ՝ եղեռն էր, մեկ՝ մեր սերունդը հանեցին, մտավորականությանը տարան, սպանեցին: Մի 10-15 ամուսն ենք ասում՝ Վարուժան, Կոմիտաս, Սիամանթո, բայց միջին օղակը կար, որ մտավորական էին, գործ էին անում: Ամբողջը ոչնչացրին: Ինչ մնաց: 30-ականներին ևս մեր ազնվականությանը ոչնչացրին: Ես մտավախություն չունեմ: Տականքից կարող է համար ծնվել: Տականքը մի մարդ է, իսկ նրա հետևում մեր նախնիներն են՝ մի քանի միլիոն: Իրենից կարող է ծնվել ոչ թե իր ուղղակի հետևորդը, այլ ազգի ներուժը: Իմ հույսը 4-5, 15 տարեկան սերունդն է: Աստված չանի, մեր սերունդը նորից հանեն:

- *Մեր իրականության մեջ հաճախ է կախվում նույն հարցը՝ Ռուսաստան, թե՞ Ամերիկա:*

- Հայաստան պիտի ասեմ, ո՛չ Ռուսաստան, ո՛չ Ամերիկա: Ըստ իս, մերոնք խուսանալու են: Որովհետև ուրիշ ճար չունենք մենք: Ինձ որ հարցնեն մեր պորտը կապված է ռուսների հետ: Բայց ռուսները կարող է այսօր իրենց շահերով բացառապես առաջնորդվեն: Միշտ ծախել են մեզ:

- *Իսկ նարնջագույն և թավշյա հեղափոխություններին նախանձով նայողներին ի՞նչ կասեք:*

- Մենք լրիվ ուրիշ պայմաններում ենք: Ամեն ինչով տարբերվում ենք բոլորից: Շատ դժվար խնդիրներ է դրված այսօր մեր այրերի, բոլորիս առջև: Պահպանել Ղարաբաղը, պահպանել մեր պետականությունը: Չեմ կարծում, թե որևէ հայ պիտի ուզենա պետությունը կորցնել: Այսօր աշխարհը կազմակերպված է: Այդ կազմակերպված ցանցի մեջ ճիշտ կողմնորոշվենք, ոչ թե կկորցնենք, այլ ինչ-որ բան ձեռք կբերենք: Խոսում էին շանսի մասին:

Ոչ միայն շանս ունենք, այլև երբեք չենք եղել նման լավ վիճակում, ինչպես այսօր: Չեստո մեր տեսակը կա: Աշխարհի այլանդակությունը կգա, կանցնի: Մերը չի դառնա դա: Մենք ինձք ունենք: Մենք ընտիր ենք: Հավերք ենք: Ընտանիք ունենք: Միակ երկիրը՝ ուր ընտանիքի, երեխայի կուռքը կա:

- *Դուք լավատես եք և շատերին եք խորհուրդ տալիս, թե «լավը տես»: Եթե ավելի կոնկրետանանք, ո՞րն է այն լավը, ինչը ուրիշը չի տեսնում, իսկ դուք տեսնում եք:*

- Այն, որ հարուստներ են առաջանում, և շատերը վատ են համարում, ինձ թվում է ամենալավ բանն է: Հարուստների դաս է մեզանում առաջանում: Չունենիք, չէ: Հարուստներ, որոնք գործարաններ են կառուցում, ճանապարհներ են շինում, ծերանոցներ են բացում: Պիտի երկիրն ունենա հարուստներ: Թե չէ միշտ կունենա աղքատներ: Ի դեպ, աղքատության ամենամեծ երևույթը Անգլիայում է եղել: Այսօր այնտեղ աղքատությունն այլ որակ է ստացել: Շատերը դժգոհում են, թե Հայաստան ինչ «Մերսեդեսներ» են բերում: Ամերիկան ռիսկ չի անում, ասում են, հայերը բերում են, լավ են անում: Սա մեր բնավորությունն է: Ինչ ամերիկյան մեքենա կա, որ կես միլիոն արժե, մեր երկրում կա: Ամերիկացին զարմանում է, ես ուրախանում: Սա հայի թափն է, մի քիչ էլ արկածախնդրությունը: Բայց սա մեր բնավորությունն է: Չի կարող պատահել, որ հայը աղքատ մնա: Հայը ամաչում է աղքատությունից: Այս 5-6 տարվա մեջ շատ բան լավացել է: Դուք ասում եք՝ լավատես են: Այո, ես ապրել եմ ուզում: Իմ ազգը պիտի շարունակի ապրել: Եթե ես լավատես չլինեմ կամ պիտի ինքնասպանություն գործեմ, և ազգս ինքնասպանություն գործի՞: Իմ ազգը ինքնասպան չէ: Լավատեսությունը ազգի գոյատևման պայմանն է: Եղբայր, լավը տես: Մի՛ ասա, քիթը մեծ է, ես է, եմ է: Մոնթե Մելքոնյան, Վազգեն Սարգսյան՝ հայությունից են ծնվել, չէ՞:

- *Այսօր, ըստ ձեզ, Մոնթե Մելքոնյաններ չա՛տ կլինեն, չէ՞ որ բանակից խուսափող-*

ներն են շատացել:

- Երկիր ենք, չէ: Իդեալական հո չենք կարող լինել: Այդպես կկործանվենք, մեզ կուլ կտան: Պիտի և՛ պոռնիկ ունենանք, և՛ գող, և՛ խաբեբա: Մենք մարդկության մասն ենք, մեր տեսակը ունենք՝ իր ավանդույթներով: Այսօր հայացման պրոցես է գնում Հայաստանում: Հայաստանը միայն լեզուն չէ, բարոյական նորմն էլ հոգեբանություն է:

- *Մեր իրականությունը ձեզ ստեղծագործելու, գրելու, նկարելու ի՞նչ թեմաներ, ի՞նչ սյուժեներ է տալիս:*

- Ոչ մի երկիր այսքան հնարավորություն չունի, որքան ունենք մենք: Տեսեք, Սարոյանի գործերը բոլոր հայերի մասին են: Որովհետև հետաքրքիրը հայերն են, ոչ թե ամերիկացիք: Որովհետև ճակատագիր կա և լավատեսություն: Նկարչության մասին չեմ ուզում ասել, որովհետև մեր յուրաքանչյուր 90-ամյա պառավ կին նկարչուհի է, այնպիսի գործեր ու կարպետներ է անում, որ զարմանում ենք: Մենք չունենք նյութական հնարավորություն, և դրա համար են փախչում գնում Ամերիկա, Ֆրանսիա, որպեսզի դրսևորվեն: Ֆիլմ նկարելու համար ԱՄՆ-ում 20 մլն են հատկացնում: Արմեն Զիգարխանյանը այսօր մի օրվա համար 10 հազար դոլար է ստանում: Մեզ տալիս են նույնքան մի ֆիլմի համար: Որպեսզի են նույնքան դրսևորվել, ուժեղ պետություն պիտի ունենանք: Դրա համար այսօր կոմպոզիտների մեջ ենք: Մեզանից յուրաքանչյուրը չի կարող ծավալվել այնքան, ինչքան Աստված իրեն տվել է: Իսկ հայերին Աստված շատ է տվել: Արամ Խաչատրյանը չէր կարող լինել Արամ Խաչատրյան, եթե չլիներ Մոսկվայում, Սարոյանը՝ Ամերիկայում, Ազնավուրը՝ Ֆրանսիայում: Հայաստանում այդ հնարավորությունը չկա. փող է պետք պետությանը և ուժ: Առաջին խնդիրը պետություն ունենալն է: Շատ են ասել, և շատերը չեն ընկալում՝ պետությունն ինքը մշակույթ է, որը մենք չունենք: Նկարչություն, գրականություն այդ մշակույթի քիչներն են: Պետությունը ամենամեծ մշակույթն է:

ԱՆՏՀԱՏՈՒՑՈՒՄ

«ՀՀ ՕՐՀՆԵՐԳԸ ՊԵՏՔ Է ՓՈԽՎԻ»

Որպես քաղաքացի և մտավորական՝ գտնում եմ, որ Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգի» խոսքերում չի շեշտվում պետության ապագան, կերպը, այդ տողերը կարդալիս ես հպարտություն չեմ ապրում:

Օրհներգի երաժշտությունը ևս հարիր չէ մեր պատմությանը, հաղթանակներին, մեր պետությանը: Դա պարզունակ ծայրավարություն է, որից ժամանակին օգտվել են Պոլսի երաժշտական վարժարաններում:

Կարծում եմ՝ Խորհրդային Հայաստանի օրհներգի (խոսք՝ Սարյանի) խաչատրյանական երաժշտությունը փառահեղ է և այսօր էլ կարող է որպես օրհներգ ծառայել: Ուստի փորձել եմ Սարյանի բանաստեղծության տողերի չափը պահպանելով սևակյան ոգով նոր տեքստ գրել նրա հա-

մար, որն արժանացել է մասնագետների հավանությանը.

Արարատյան պայծառ աշխարհ
 Հայաստան,
 Նոյան տապան, երկնահաղորդ
 Մասիս սար,
 Դու իմ ամբողջ վեհախորհուրդ,
 անասան,
 Աստվածային լուսի խորան ու
 կաճառ:
 Մեծահանճար Նարեկացու սուրբ
 մատյան,
 Դու մեղեդի կոմիտասյան
 խնկաբույր,
 Մեր հայրենիք, մեր նորոգ տուն
 Հայաստան,
 Հայոց փարոս, մեր գալիքի
 լուսաղբյուր:

Վահան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Ամերիկյան «Նյու Յորք լայֆ ինչուրընս» ապահովագրական ընկերությունն սկսել է փոխհատուցման վճարումները 90 տարի առաջ ցեղասպանության գոհ դարձած հայերի ժառանգներին: 333 հազար 333 դոլար ընդհանուր գումարով առաջին չեկերը փոխանցվել են Նյու Յորքում գործող հայկական մի քանի բարեգործական կազմակերպությունների: Դա հնարավոր է դարձել անցյալ տարի Լոս Անջելեսում, ֆեդերալ դատավորի մասնակցությամբ, ցեղասպանության գոհ դարձած հայերի ժառանգների և «Նյու Յորք լայֆ ինչուրընս» ապահովագրական ընկերության միջև ձեռք բերված համաձայնության շնորհիվ, ընկերություն, որը մինչև 1915 թվականը 2300 ապահովագրական վկայականներ էր տվել Թուրքիայում ապրող հայերին:

ԱՐՄԵՆՊԵՏ

Լևոն ԶԱՎԱԽՅԱԼ

ԻՄՍԻՐՏԸ ԱՋ ԿՈՂՄՈՒՄԷ

Դա ծնեմ էր, երբ ցուրտը կացնի նման երես էր տաշում, և քա- մին ցախավելի պես ավլում էր փողոցները: Ուշ երեկո էր: Փողո- ցային լապտերների աղոտ լույսի տակ սառած գետնին գայթե- լով, աննպատակ քայլում էի: Ոչ ոք չկար: Քամին ծյան հետքերի հետ ասես թշել տարել էր նաև մարդկանց: Ես էի, Երևանը, ցուրտն ու ծնեռը: Ինձ պես պարսպ-սարապ մարդ էի ման գալիս՝ ժամանակիս ավելցուկը մսխելու համար: Եվ երևի եղպես էլ տուն դառնայի, եթե օպերայի խաչմերուկում չհանդիպեի նրան: Միջ- նադարյան դերվիշ հիշեցնող այդ մարդը երևանյան փողոցներից ոչ հոգնել ուներ և ոչ էլ ծանծրանալ: Նրա նիհար մարմինը սովե- րի պես սահում էր հրապարակներով, պողոտաներով ու փողոց- ներով, որ հետո որևէ սրճարանում իր ճամփորդական նոթերից բաժին հաներ մեզ: Իսկ նա շատ բան էր տեսնում: Նա այժամանակ ղեմք ուներ, այժամորուս ծնոտ ու կլոր-կլոր աչքեր, որ և լույսին էր տեսնում, և մութին. մի աչքը լուսին էր, մյուսը արեգակ՝ ինչ- պես եզրիտակապ արծիվը... Եվ ի վերջո, անշուշտ, արծվի էր նման, բայց գիշանգը էին ատում. նա իր ոտքերի բուք մատների եղունգները չէր կտրում... Գիշանգը զիտեի հին ու գորշ ժամա- նակներից, երբ ապրում էինք մի հսկայական երկրում, որի կավը դեռ էն գլխից՝ ճիվաղներն էին հունցել: Քաքով սարքած երկիր էր, որ շեռով էլ փլվեց: Սակայն այդ աղտոտության մեջ լեզուներ կային, որ դարմանի տակը ջուր էին անում: Առանց այդ ջրերի փլվածքներն անհնարին էին: Մի այդպիսի լեզու էլ նա ուներ՝ ոնց որ սրած ատելի... Բայց նա ոչ կտրում էր ես ոչ էլ սափրում: Վերքերն առանց այն էլ շատ էին: Նա նկարում էր: Հին աշխարհի ցավերը լույսին էր տալիս: Նա ամսագրերից մեկում լուսանկա- րիչ էր: Հինա Աստված գիտի, թե ինչով էր զբաղված: Ինձ տեսավ՝ ուրախացավ: Երևի նա էլ ինձ պես մեկի կարոտն ուներ:

- Գնանք, հա, - ասաց, - մի-մի գավաթ սուրճ ընպենք, - ասաց փտորժով խտացնելով բառիմաստը ջանալով այդ պահին ևեթ արտահայտել տաք սուրճ վայելելու ողջ բերկրանքը: Իսկ ինձ համոզելու համար առանձնապես մեծ ջանքեր պետք չէին: Փոք- րիկ ակնարկն էլ բավական էր, որ նրա ետևից ինձ գցեի «Կազի- րոկ»: Մանավանդ որ՝ պատվիրատուն էլ ինքն էր:

- Երկու գավաթ ընտիր սուրճ, - դիմեց նա ժամանային մեր սիրելի մատուցողուհուն:
- Իսկ միգուցե թեյ, հը՞, - շրջվեց իմ կողմը, - տաք թեյ՝ լիմոնով... ամբողջական լիմոն՝ դեղին, դեղին, հը՞, մեր ձեռքով էլ կճգնենք, կքանենք՝ կաթիլ առ կաթիլ ու ոչ մի կաթիլ թշամուն... - համոզում էր եռանդով՝ Օթելլոյի պես սև, կլոր աչքերը սևեռած վրաս, ասես մոգական ուժով՝ ձգտելով իրեն մեթարկել փտորժակ:

- Թող լինի թեյ, - ինձ համար միևնույն էր:
Վիճակը գցված էր. մնում էր ենթադրել, թե զրույցը որ ուղղու- թյամբ կգնա: Հարազատ «Կազիրոկ»-ում ոչ ոք չկար, ու ոչ մեկի էլ պարտադրված չէր մեր զրույցի թեման, իհարկե, բացի մեր սիրելի ժամանայից, որն արդեն թեյը բերել ու դիրք էր բռնել հարե- վան սեղանին:

- Խորիկին տարան Պանթեոն, - հառաչեցի մտամոլոր:
- Լևոն, - քիմիկոսի պես խորասուզված՝ լիմոնի հյուսքը քամում էր թեյի մեջ: Տաք զուրոշին պարուրել էր դեմքը, և չզիտեմ՝ թեյի պարունակությունն էր նրան հետաքրքրում, թե՞ իմ կյանքի հե- տագա հանգրվանը, - որ մեռնես՝ քե՞զ էլ են տանելու Պանթեոն...
- Չէ, - ասի:

- Ինչո՞ւ... - զարմացավ:
- Ես իսկի Գրողների միության անդամ չեմ...
- Ինչի՞, - բարկացավ, - իրենք անդամ են...
- Բա ի՞նչ են, - չհասկացա:
- Ո՞ր և էնտեղ գրող, - ավելի տաքացավ, - բացի մի քանիսից՝ որին էլ էդ շենքից դուս գցես՝ կաստկի, ոնց որ ջրից ցամաք նե- տած ձուկ...
- Դրա համար էլ տանում են պանթեոն...
- Որ ապրե՞ն... - դեմքն անմեղ ու միամիտ էր, նորելուկ մանկան պես՝ կաթնաբույր մաքրությամբ, միայն թե ծնոտից կախված մո- րուքն էր, որ նրա մեջ մատնում էր սատանային:
- Մահ չկա, - հետո ավելացրեց՝ մատը փիլիսոփայորեն վեր տնկած, - էնտեղ՝ կոսմոսում ժամանակ չկա... Մենք է, որ էստեղ հաշվում ենք վայրկյանները... - ու աչքերը կլոր-կլոր էին... Եվ մի աչքը լուսին էր, մյուսը՝ արեգակ:

- Արտիստ ես, - ասի, - արտիստ...
- Ես դա գիտեմ... - ասաց շշուկով, խորհրդավոր, ասես՝ ականջիս մի մեծ գաղտնիք լինե՞ր ասելիս:
Ժամանակն ակնապիշ նրան էր նայում, որից նրա մեղմ, երազկոտ դեմքին ապուշ զարմանք էր ծաղկել:
- «Երջանիկ» սոցիալիզմի տարիներին էր, - մտքով էն աշխարհը գնաց, - գնացել էի Սիեր Մկրտչյանին լուսանկարելու... Տարբեր ռակուրսներից նկարում էի, հետն էլ բացատրում, թե ինչ դիրք ընդունի... Էդ ամբողջ ընթացքում նա ինձ մի բան էր ասում... Ասում էր՝ քո տեղը թատրոնն է... դու մեծ դերասան ես... քո տեղը մեծ բեմերում է... - ու ծայրն էլի իջեցրեց, կարծես՝ ականջիս կրկին մեծ գաղտնիք լինե՞ր ասելիս, մինչդեռ նրա խորհրդավոր բարիտոնը ընդամենը նույն բանն էր շշուշում, - Ես դա գիտեմ... ասի... Ես դա գիտեմ... Բա՞յց...
- Էլ ի՞նչ բայց, - չհամբերեցի:
- Իմ սիրտը աջ կողմում է...
Էստեղ էր, որ ժամանայի բերանը բացվեց: Բացվեց ու էլ չփակ- վեց...

- Չէ-չէ մի՛ լեռներում... - հեգնեցի:
- Չհասկացա, - հարցական ինձ նայեց:
- Սարոյանն է գրել, - բացատրեցի, - իմ սիրտը լեռներում է...
- Չէ, չէ, - ու նորից ծայրը իջեցրեց, ասես՝ ոչ թե սեփական, այլ պետական գաղտնիք լինե՞ր բացելիս, - իմ սիրտը աջ կողմում է... այ՛, էստեղ, - ձեռքը դրեց կրծքին, - հաստատ հիշում եմ, վաթ- սուն թիվն էր, դեռ փողը չէր փոխվել... Եթե գիտես՝ սովետի ռուբ- լին վաթսունմեկ թվին փոխվեց: Վեց տարեկան կլինե՞ի՛ տուրքիս- պաններում թոքերս էին նկարում: Մեկ էլ էն տեսնեմ՝ ռեմոնտը- նոգ կինը գույնը գցել է... Ըհը, ոնց որ էս պատի ծեփը, - ժամանայի դալուկ, արիստոկրատիկ պարանոցը երկարեց: Սիրուն բերանի էլ բաց էր ու բաց: Այնուհետև, պատմումի՛ն գուգահեռ, նրա բերանի բացվածքը հա՛ մեծանում էր, - դեմքը սպիտակ, սպիտակ էր... Դու մի ասա՛՛ էկրանի վրա թոքերս ամբողջովին սև էին... Սև, սև, ոնց որ՝ գրատախտակ: Խեղճ կինը կարծում էր՝ վայր, ռակ եմ... Էն էլ տեսնում էր առջևը՝ թարմ, կարմիր թշեր, մատողջ մարմին, առողջ հասակ ու կարկանդակ... Ի վերջո, գնաց պրոֆեսորին բե- րեց: Պրոֆեսորը նկարս տեսավ թե՛ չէ՛ ժպտաց: Դու մի ասա՛՛ սիրտս, որ աջ կողմում է, ստվերը գցել էր թոքերի վրա: Դրա հա- մար էլ էդ տեղերը սև էր ցույց տալիս...
- Բա ինչի՞, սիրտը որ ձախ կողմում է լինում՝ ստվեր չի ձգում, - հարցրի՛ թեյս հանգիստ կուն անելով:

- Հեմք էդ է հետաքրքիր, էլի... - աչքերը չռեց, մեկ էլ կոպերն սկսեցին մոլեգին բաբախել, - մեմակ սիրտս չի աջ կողմում, է...
- Էստեղ ժամանակ տեղից դանդաղ ելավ, ոնց որ դերվիշի սրնգի տակ պարող հողանի էակ՝ նրա բարակ մարմինը, հանդարտ, անեանում էր, - լյարդս, ստամոքսս, փայծաղս... սաղ տարբեր կողմերում են, մարմնիս մեջ տաղթմիշ էղած...
- Կարողա՞, - անհանգստացա, - էն բանն էլ և ուրիշ տեղ...

Էստեղ արդեն ժամանակ փլվեց: Այնուհետև նա մեր զրույցը ուն- կնդրում էր ելման դիրքից: Մինչդեռ ընկերս ականախորհուն շփոթ- վել էր: Շփոթվել էր, բայց տեղը տակավին չէր կորցրել.
- Չէ, չէ, չէ... - ձեռքերը խուճապով թափահարեց, - աշխարհում բաներ կան, որ միշտ իրենց կայուն տեղն ունեն...
Թեյը խմել վերջացրել էինք: Մեղանիս սառած բաժակներն էին ու լիմոնի կայուն կեղևները: Ասես՝ դա ժամանային չվերաբերվեր: Աշխարհում ավելի կարևոր բաներ կային:
- Աջակողմյան սրտից թե՛զ ի՞նչ օգուտ, - շարունակում էի նրա հոգու հետ իմ խաղը:

- Իսկ ո՞վ է ասել՝ ա՞ջն և ճիշտ, թե՞ ձախը, - լուրջ, լուրջ բացա- տրում էր, - իմ սիրտն աջ կողմից ինձ օգնում է տեսնել ճշմարտու- թյան հակառակ երեսը: Ճշմարտության հակառակ կողմը նորից ճշմարտություն է: Այստեղից էլ բխում է չարը բացառելու անհնա- րինությունը: Կյանքում միշտ էլ չարն ու բարին խաբում են իրար: Ճշմարտությունն այդ խաղի մեջ է: Հիշու՞մ ես, մեր շարժման առա- ջին օրերը... Ձեռքներս օդում բռնցքած գոռում էինք.
- Լեմնի, Պարտիա, Գար-բա-չով... Լեմնի, Պարտիա, Գար-բա- չով... Թժմանքով ուզում էինք հող նվաճել: Հլա դեռ Նազարի պես էլ զարմանում էինք, թե էդ ովքե՞ր են, որ չեն ուզում իրենց հողերը մեզ տալ... Մինչև գլխներիս չբամփեցին՝ խելքի չեկանք: Ու կյան-

քը մեր բարի սրտի մեջ թույն ներարկեց: Դա է ճշմարտությունը, եղբայր... - ոգևորությունը մեծ էր: Չէր տեղավորվում բարձրագույն արտահայտություններում: Շուրթերը մոտեցրեց ականջիս: Եվ կրկին ականջս սողոսկեց նրա սատանայական շշուռը:

- Ես դա գիտեմ...
- Չարն ու բարին, - շարունակեց, - դրկից հարևանի պես ապրում են կողք-կողքի՝ հաշտ ու անհամերաշխ՝ ինչպես դարաբաղցի էն պառավ կինը...
- Ի՞նչ պառավ, - դա արդեն ինձ հետաքրքրում էր:
- Ուրեմն, գնացել էինք Ղարաբաղ նկարահանումների, - իր կարճ մորուսը շոյելով՝ անվրդով պատմում էր, - կռվի էն թեժ ժամանակներն էին: Դեռ ճանապարհից նկատեցինք կործանիչ սուտերին: Երկուսն էին: Կատաղի ոռնոցով սուրում էին: Մեկը ռումբ գցողն էր, մյուսը՝ նրան հսկողը՝ եղպես էր կարգը: Ցածո-ցածո էին թռչում՝ փորները գետնին քսելով: Պարաշյուտով երկու ռումբ գցեցին: Մեկը պայթեց, հսկ մյուսը՝ էնքան ցածր էր, որ չհասցրեց պայթի: Աշխարհը ոնց որ գլխներիս փուլ գար... Եկանք՝ տեսանք պայթած ռումբի տեղը: ոնց որ մի ամեհի պատահողը լիներ անցած... Շուրջն ամեն ինչ աղացել, շաղախել, ջարդուփշուր էր արել: Լաց, կոժ, կրակ, փոշի ու ավերակ... Կատարյալ դժոխք: Իսկ մի քիչ այն կողմ՝ չպայթած ռումբն էր՝ երկհարկանի տան բակում խաղաղ պառկած: Հինգ հարյուր կիլոգրամանոց հսկայական մետաղական զանգված էր: Արտակարգ իրավիճակների տղերքը քրտնմխած աշխատում էին: Կռան էին բերել, որ ռումբը տրոսներով ձգեն հանեն: Բայց ռումբին մոտենալու հնար չկար:

Ուզում էին հարևանի թթի ծառի ճյուղը կտրեն, որ կռանը կարողանա աշխատել: Են էլ՝ դեմ էին առել մի ոչ պակաս փորձանքի: Թե էն մեկը նորեկն էր, էս մեկը կլիներ 90 տարեկան, թե էն մեկը արդեն լռված վնասագերծված էր, էս մեկը հա քլթքլթում էր, ֆշշում ու պեծպեծում, ոնց որ պատրույզը այրված պայթուցիկ:

- Ա խոխոջ, պա վեր իմ թուքն կտրում ըք, ձմեռնը ես հինչո՞վ ըմ չայ խմլան... - փնթփնթում էր:
- Ի՞նչ չայ, այ տատի, - ասում էին:
- Թոթը չամիչ եմ անըմ, վեր չայը մանավ խմիմ...
- Բա ի՞նչ անենք, - մուրկվել էին տղերքը:
- Բումբը ուրան տռանն ա ընգալ՝ իմ ծա՞ռնն կտրում... - փնթփնթոցն ու ֆշշոցը շարունակվում էր:
- Քո ծառն ա խանգարում, տատիկ, քո ծառի մեն մի հատիկ ճյուղը պիտի կտրենք, - ուզում էին բանը հաշտությամբ ավարտել:
- Ուրանց պատն ա խնգարում, էն քնդեցեք...
- Դու մի ասա՝ հարևաններով կռված էին... Եղպես էր. մի կողմում կրակ, լաց ու ավեր, մյուսում՝ կենցաղային, առօրեական վիճակ: Դա կյանքի սովորական դիմանկար էր, կատարված՝ անսովոր իրավիճակում: Իմ լավագույն լուսանկարներից մեկը...
- Պատմությունն ավարտել ու հայացքը հառել էր դեմքիս: Ժամանակը հավաքում էր բաժակները: Եվ աչքերն էլի կլոր-կլոր էին, և մի աչքը լուսին էր, մյուսն՝ արեգակ: Իսկ դրսում մութ էր, ցուրտ ու ձմեռ, բայց տեսնելու այնքան բան կար ... Առջևում նոր տարին էր:

ԲՈՒՇԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Վերջերս Վաշինգտոնում տեղի ունեցավ Միացյալ Նահանգների 43-րդ նախագահի երկրորդ ժամկետին վերընտրված Ջորջ Բուշ կրտսերի ինստիտուցիայի արարողությունը: Բուշը պատկանում է «տեխասյան Բուշերի» չափազանց հարուստ և ազդեցիկ կլանին. նրա պապը սենատոր է եղել, հայրը՝ նախագահ, ավագ եղբայրը Ֆլորիդայի նահանգապետն է: Սակայն ընթերցողը սակավ է ծանոթ Բուշերի ընտանիքի պատմության: Այնինչ պատմությունն, այդ խիստ ուշագրավ է: Այսպես. ամերիկյան լրագրողների հավաստմամբ, սկսած 1920-ական թվականներից, այդ կլանի յուրաքանչյուր ներկայացուցիչ խառնված է եղել որևէ սկզբնաղբի: Նրանց մեղսագրվել է գերմանական մացիզմի ֆինանսավորում, զենքի անօրինական վաճառք, փողերի լվացում, նույնիսկ համագործակցություն թմրավաճառների հետ: Բայց ամեն ինչի մասին հերթականությամբ: Թե հատկապես երբ են 43-րդ նախագահի նախնիները հայտնվել Ամերիկայում, ստույգ հայտնի չէ: Նրա երկրպագուները պնդում են, թե Բուշերի տոհմը սերում է 1620 թվականին Mayflower նավով Ամերիկա տեղափոխված մի վերաբնակից, այսինքն՝ Բուշ ընտանիքը պատկանում է ԱՄՆ արիստոկրատիային: Բուշի հակառակորդները պնդում են, որ նախագահի ինչպես հայրական, այնպես էլ մայրական նախնիները, Միացյալ Նահանգներ են եկել միայն 19-րդ դարի երկրորդ կեսին: Ինչևէ, Բուշերի կլանի առաջին սկանդալային անձնավորությունը ոչ միայն համամերիկյան, այլև համաշխարհային մասշտաբով, գործող նախագահի պապը՝ Փրեսքոթ Շելթոն Բուշն էր (1895-1972): Հենց նա դարձրեց կլանը առավել ազդեցիկներից մեկը ԱՄՆ-ում: Սակայն 2003 թվականին Ազգային գրադարանի և Կոնգրեսի արխիվների գաղտնագերծված նյութերից լրագրողները պարզեցին, որ Փրեսքոթ Բուշը հովանավորել է մացիստներին: Բացահայտումը սկանդալ առաջացրեց: Փրեսքոթ Բուշի որդին՝ 41-րդ նախագահ Ջորջ Բուշ ավագը, մինչ 1989 թվականի հունվարին իր պաշտոնակալումը, ամուն հանցեց Լատինական Ամերիկայի և Մեքսիկայի արևելքի բռնապետական վարչակարգերի հետ կապերով: Դեռևս 1964 թվականին, երբ Բուշ ավագը առաջադրվել էր սենատ՝ Տեխաս նահանգից, նրա ընդդիմախոսը՝ դեմոկրատ Ռալֆ Յարգրոն, անվանեց նրան քուլտեթական շեյխերի վարձկան և բնավ ոչ անհիմն. Բուշը շահաբաժիններ ուներ նավթ արդյունահանող քուլտեթական տարբեր ընկերություններում: 1975 թվականին Բուշը դարձավ ԿԳԿ առաջին տնօրենը, որն այդ պաշտոնին եկավ նավթային բիզնեսից: 1977 թվականին նախագահի պաշտոնն ստանձնեց դեմոկրատ Ջիմմի Քարտերը: Առաջին գաղտնի զեկույցներից մեկը, որոնց ծանոթացավ նորընտիր նախագահը, ԿԳԿ տնօրեն Ջորջ Բուշի մասին զեկույցագիրն էր: Պարզվում է,

այն ժամանակ, երբ պետդեպարտամենտը քննադատում էր Պանամայի բռնապետական վարչակարգին, Բուշը ոչ միայն հանդիպում էր այդ երկրի ղեկավար Մանուել Նորյեռայի հետ, այլև ֆինանսավորում նրան: Ջարմանալի չէ, որ Քարտերն անմիջապես հեռացրեց Բուշին: 1981 թվականին պետության ղեկավար դարձավ հանրապետական Ռոնալդ Ռեյգանը, որը ցանկացավ տեսնել Ջորջ Բուշին փոխնախագահի պաշտոնում: Իսկ 1986-ին բռնկվեց նոր սկանդալ. լրագրողները պարզեցին, որ Ռեյգան-Բուշ վարչակազմը սերտ կապեր է հաստատել իրաքյան բռնակալ Սադամ Հուսեյնի հետ: Ամերիկյան հատուկ ծառայությունները՝ փոխնախագահի գլխավորությամբ, ռազմավարական կարևոր տեղեկատվություն էին տրամադրում Բաղդադին՝ Իրանում տիրող իրավիճակի մասին և զենք մատակարարում Իրաքին: Գործող նախագահի անձնական կարողությունը գնահատվում է 11-20 մլն դոլար: Թվերի այսպիսի տարբերությունը բացատրվում է նրանով, որ համաձայն ամերիկյան օրենքների, կարողության ստույգ չափն ու եկամտի աղբյուրները հայտնի են միայն հարկային ծառայությանը: Ճշգրիտ տեղեկություններ չեն կարողանում հայթաթել նույնիսկ Բուշ ընտանիքի ամենաոխտերիմ հակառակորդները: Բուշ կրտսերի ավագ եղբոր՝ Ֆլորիդայի նահանգապետ Ջոն Էլլիս Բուշի (Ջեք Բուշ) շահերի ուշադրության կիզակետը Կենտրոնական Ամերիկան է: Հայտնի է բյուջետային միջոցների վճարումով զբաղվող Միգել Ռեկարտեի հետ նրա գործնական սերտ համագործակցությունը: Բացի այդ, տարբեր ժամանակներում ամերիկյան ՋԼՄ-ներում տեղեկատվություն էր հայտնվում նաև այն մասին, որ Ջեք Բուշը մտերիմ է Մայամիի բնակիչ և Ֆլորիդայում կուբայական թմրամաֆիայի առանցքային գործիչներից մեկի՝ Լեոնել Մարտինեսի հետ: ԱՄՆ գործող նախագահը Բուշերի կլանի միակ ներկայացուցիչն է, որը ներքաշված է եղել ընդամենը մեկ սկանդալի մեջ, այն էլ դրա լոկ անուղղակի մասնակիցը: Բուշ կրտսերը բիզնես մուտք գործեց 70-ականների վերջին՝ հիմնադրելով Arbusto Energy ընկերությունը: 1979 թվականին Բուշ ընտանիքի հյուստոնյան բարեկամ Ջեյմս Բաթը՝ ԱՄՆ տարածքում Ուսամա բեն Լադենի եղբոր ընտանիքի բիզնես-ներկայացուցիչը, Arbusto Energy-ում ներդրեց 50 հազար դոլար: Պարզ է, որ 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունից հետո այդօրինակ գործնական կապերը չէին կարող բացասաբար չանդրադառնալ Բուշի հեղինակության վրա: Ահա այսպիսի ուշագրավ մանրամասներ՝ սեփական երկրին արդեն երկու նախագահ պարգևած Բուշերի ընտանիքի բուռն, թափանցիկությունից զերծ և վարկաբեկիչ փաստերով լեցուն պատմությունից: Համենայն դեպս, այդպես են պնդում ամերիկյան լրագրողները:

ԵՎՐՈՊԱՅԻ ՉՍԵՌԱՅԻՆ ՏՈՆԵՐԸ

Նոր տարվա գալուստը հունվարի 1-ին (janua՝ «մուսք») նշելու նախաձեռնողը Գայոս Յուլիոս Կեսարն է, որը մ.թ.ա. 46 թվականի հունվարին անկատար լուսնային օրացույցը փոխարինեց արեգակայինը (Հուլիան օրացույցով): Հունվարի 1-ը առ այսօր այնքան էլ աչքի չի ընկնում մյուս օրերի շարքում (թերևս միայն Հունաստանում ու Շոտլանդիայում): Շատ ավելի կարևորվում է դեկտեմբերի 25-ը՝ Քրիստոսի Ծնունդը: Սուրբ Ծնունդը ընտանեկան տոն է, իսկ Ամանորը՝ հանրային. այն կարելի է դիմադրել ընկերների հետ, փողոցում, թատրոնում, սրճարանում: Լոնդոնում, օրինակ, Ամանորի գիշերը փողոցները մարդաշատ են: Նոր տարվա գալուստն ավետում է զանգերի դողանքը, եկեղեցիներում ամանորյա գիշերային պատարագ է մատուցվում: Իսկ Ծննդյան տոներին Եվրոպայում սկսում են պատրաստվել դեկտեմբերի 25-ից շատ առաջ: Այդ ժամանակահատվածը տարբեր ժողովուրդներ տարբեր կերպ են անվանում: Իտալացիները՝ նովենա, ֆրանսիացիները՝ գերմանացիները, արևելյան սլավոնները՝ ադվենտա (Սուրբ Ծննդյանը նախորդող ծոնապահույթուն): Նովենայի առաջին օրը իտալական ընտանիքներում դասավորում են արեգեպեն՝ ամանորյա մատուցող կամ տիկնիկարկղը՝ Մարիամի և Հովսեփի, նորածին Քրիստոսի, Ավետարանի այլ կերպարների ստվարաթղթե, կավե կամ ճենապակե արձանիկներով: Ֆրանսիացիները դրանք կոչում են սանտոններ և պատկերում ոչ միայն Սուրբ ընտանիքի անդամներին, այլև գյուղացիներին, հովիվներին, վաճառականներին, երաժիշտներին, գնչուներին: Լեհերը տիկնիկարկղերը կոչվում են շոպկաներ, չեխերն ու սլովակները՝ բետլեմներ: Չեխական մեծ բետլեմներում ժամանակին տեղադրվում էր մինչև 250 մարդկային կերպարանք, մոտ 400 ոչխարի, 200 կովի, ավելի քան 200 ծառի և բազում այլ արձանիկներ: Լեհաստանում 1937-ից սկսած ամեն տարի կազմակերպվում է շոպկաների մրցույթ, և հորեյանական մրցույթների ցուցանմուշները ներկայացվում են

վարչավայում Միցկիչի հուշարձանին մերձակա հրապարակում: Ամանորյա տոնածառ զարդարելու սովորույթը աշխարհով մեկ տարածվեց Գերմանիայից: Սկզբում գերմանացիները սարքում էին վերացական «Սուրբ Ծննդյան ծառ»: Իսկ եղևին իր ներկայիս տեսքով հայտնվեց 18-րդ դարում և հետզհետե տարածում գտավ այլ երկրներում: Սակայն հնուց անտի Ծննդյան տոներին և Ամանորին տները զարդարել են կանաչ ճյուղերով: Հունաստանի գյուղական վայրերում այսօր էլ Սուրբ Ծննդյան տոնական բոքոնի մեջ խրում են ձիթեմու ճյուղ, վրան ընկույզ, խնձոր, նարինջ: Անգլիայում մինչ օրս տները զարդարում են բաղդով, մղանուճով, փշարմավով, չնայած եղևին այստեղ բերվել է Վիկտորիա թագուհու օրոք, որն առաջինը տոնածառ զարդարեց իր գավակներին համար Վիմոնդում: Տոնածառի տակ կամ բուխարու մոտ դրված կոշիկների, ասեղնագործ բրդե գուլպաների մեջ նվերներ են դրվում. առաջին հերթին, իհարկե, երեխաների համար: Այս ավանդույթը հիշեցնում է նվերների ընծայումը նորածին Հիսուսին: Ֆրանսիացի երեխաները հավատում են, որ նվերները տան ծիսելույզի միջով բերում է Պեր Նոելը, անգլիացիները՝ Սանտա Կլաուսը, գերմանացիները՝ սուրբ Նիկոլայը, հույները՝ սուրբ Վասիլին, չեխերը՝ Միկուլայը, լեհերը՝ Միկուլայը և այդպես շարունակ: Բոլոր այդ սրբերը երկար, ճերմակ մորուս ունեն, հազիվ կարմիր մուշտակ է՝ սպիտակ մորթիով եզրակալված, մորթե գլխարկ կամ թասակ: Ինչպես Ծննդյան տոների, այնպես էլ Ամանորի բարձրակետը, իհարկե, տոնական ընթրիքն է: Հին ժամանակներում տոնական ճաշկերույթները ծիսական բնույթ ունեին, սեղանին պետք է լինեին պարտադիր ուտեստների որոշակի քանակ. 3-ից մինչև 30: Նավակատիքի ընթրիքը պատուց է, իսկ տոնականը՝ ճոխ և առատ: Համարվում է, որ ինչպիսին լինի սեղանը Ծննդյան տոներին, այդպիսին կլինի ողջ տարին: Անգլիայում Ծննդյան տոներին մատուցվում էր տապակած խոզի գլուխ, Գերմանիայում՝ խոզի երշիկ

թթու կաղամբով, Իտալիայում՝ մեծագույն օձածուկ: Գրեթե բոլոր ժողովուրդների համար պարտադիր էր սագը կամ հնդկահավը, ընկույզը, մեղրը, միրգը, պուրիճը, թխվածքը: Բայց ամենակարևոր տոնական բոքոնն է («Քրիստոսի հացը»), որը թխվում է հատուկ բաղադրատոմսով, զարդարվում ծիսական նախշերով ու կանաչեղենով: Հացը հանդիսավորապես կտրատում էին, մի մասը անպայման թողնում աղբատների, ինչպես նաև կենդանիների ու թռչունների համար: Չկնորսները նետում էին փշրանքները ծովը, ջրաղացպանները՝ տանում ջրաղաց... Բազմաթիվ երկրներում, օրինակ, Գերմանիայում ծիսական բոքոն թխելու իրավունք ունեն միայն հատուկ փռերը: Չմեռային տոներին ողջ Եվրոպան զբաղվում էր գուշակությամբ. նախատոնը մի ժամանակահատված է, երբ առավել դյուրին է տեսնել ապագան: Գուշակում էին (և շարունակում են գուշակել) ամուսնության, ծննդի ու մահվան, նյութական բարօրության, եղանակի, բերքի և շատ այլ բաների մասին... Տոնական կարկանդակը թխելիս դրա մեջ զցում էին բակլայի հատիկ, մատանի, մետաղադրամ, կոճակ. բաժին ընկած լոբին երջանկության նշան էր, մատանին՝ ամուսնության, դրամը՝ հարստության, կոճակը՝ աղքատության: Ամանորին պետք է ազատվել նախորդ տարվա ընթացքում կուտակված հնոտիքից, ամեն վատ ու տխուր բաներից, վերադարձնել պարտքերը, դեն զցել անցնել իրերը (խտալացիները պատուհաններից նետում են նույնիսկ կահույքը), մարդիկ աշխատում են չբարկանալ, չվիճել, չձանձրանալ, պարտք չվերցնել ու նաև չտալ, չկարկատել իրն հագուստը: Նոր տարին պետք է անցկացնել հնարավորինս ուրախ ու լիառատ, որպեսզի հաջորդ տարին երջանիկ լինի: Սուրբ Ծննդյան և Ամանորի ծննդային տոները, այսպես կոչված «Տասներկու օրը», շարունակվում են մինչև Մկրտության տոնը (ջրօրհները): Իսկ հետո սկսվում է առօրյան:

Ա.ՍՈՎՍԻՍՅԱՆ



«ՕՍԿԱՐ-2004»-Ի ՀԱՎԱԿՆՈՐԳՆԵՐԸ

գրող Մարտին Սկորսեզեի «Օդագնացը» ֆիլմը «Օսկարի» է առաջարկել 11 անվանակարգում, Քլինթ Իսթվուդի «Միլիոն դոլարանոց աղջիկը» ֆիլմը ոսկե արձանիկի է հավակնում 7 անվանակարգում. նշանավոր երաժիշտ Ռեյ Չարլզի կենսագրական «Ռեյ» ֆիլմը՝ 6, իսկ Ալեքսանդր Փեյնի «Աջ ու ձախ» ֆիլմը՝ 5 անվանակարգում: Այսպիսով, «Լավագույն ֆիլմ» տիտղոսի համար պայքարելու են «Օդագնացը», «Միլիոն դոլարանոց աղջիկը», «Ռեյ», «Աջ ու ձախ» և «Կախարդական երկիրը» ֆիլմերը: «Լավագույն դերասան» անվանակարգում ներկայացվել են Դոն Չիլդը («Ռուանդա» հյուրանոցը), Ջոնի Դեփը («Կախարդական երկիրը»), Լեոնարդո դի Կապրիոն («Օդագնացը»), Քլինթ Իսթվուդը («Միլիոն դոլարանոց աղջիկը») և Ջեյմի Ֆոքսը («Ռեյ»): «Լավագույն դերասանուհի» անվանակարգում ներկայացվել են Անեթ Բենինգը («Թատրոն»), Կատալինա Սանդինո Մորենոն («Բարեգթությանը առջև Մարիան»), Իմելդա Սթոնթոնը («Վերա Դրեյք»), Հիլդրի Սուենցը («Միլիոն դոլարանոց աղջիկը») և Քեյթ Ուինսլեթը («Կրթի հավերժական փայլը»): «Լավագույն ռեժիսոր» անվանակարգում ներ-

կայացվել են Մարտին Սկորսեզեի («Օդագնացը»), Քլինթ Իսթվուդը («Միլիոն դոլարանոց աղջիկը»), Թեյլոր Հեյֆորդը («Ռեյ»), Մայք Լին («Վերա Դրեյք») և Ալեքսանդր Փեյնը («Աջ ու ձախ»): «Երկրորդական դերի լավագույն դերասան» անվանակարգում ներկայացվել են Ալան Էլդը («Օդագնացը»), Թոմաս Հեյդեն Չրըքը («Աջ ու ձախ»), Ջեյմի Ֆոքսը («Մասնակիցը»), Մորգան Ֆրիմենը («Միլիոն դոլարանոց աղջիկը») և Քլայվ Օուենը («Մտերմություն»): «Երկրորդական դերի լավագույն դերասանուհի» անվանակարգում ներկայացվել են Քեյթ Բլանկեթը («Օդագնացը»), Լատրա Լիննին («Քիմսի»), Վիրջինիա Մադսենը («Աջ ու ձախ»), Սոֆի Օկենտոդոն («Ռուանդա» հյուրանոցը») և Նատալի Փորթմանը («Մտերմություն»): «Լավագույն արտասահմանյան ֆիլմ» անվանակարգում ներկայացվել են «Ինչպես դրախտում» (Շվեդիա), «Խմբեղաչուհիները» (Ֆրանսիա), «Անկում» (Գերմանիա), «Բաց ծովում» (Իսպանիա) և «Երեկ» (ՀԱՀ): Ամերիկյան կինոակադեմիայի 77-րդ մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2005թ. փետրվարի 27-ին Լոս Անջելեսում:

Ամերիկյան կինոակադեմիան հունվարի 25-ի երեկոյան հրապարակեց «Օսկար» մրցանակի հավակնորդների անունները: Ցուցակը ներկայացրեցին կինոակադեմիայի նախագահ Ֆրենք Փիրսոնը և 2003թ. Ռոման Պոլանսկու «Դաշնակախար» ֆիլմի գլխավոր դերակատարման համար «Օսկարի» արժանացած կինոդերասան Էդրիան Բրոուդին: Կինոակադեմիայի դատին ներկայացված է 267 ֆիլմ: Միլիոնատեր Հովարդ Հյուզի կյանքը նկարա-

Հայկ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

ՀԱՅՈՒՆՅԱՑ

Հայոց աշխարհում առաջին քաղաքը կառուցվել է մեր թվականությունից առաջ 3669 թվականին և կոչվել Նախիջևան, որը հիմա Արաքսի ձախ ափին է: Այն ժամանակ քաղաքի և՛ աջ կողմով էր գետ հոսում, և՛ ձախ կողմով:

Նախիջևանը արքաների որսատեղի էր: Այստեղ ամեն տեսակ խրախճանքներ էին սարքում հին աշխարհի տիրակալները:

Քաղաքի կողքի ընդարձակ դաշտում ցանում էին քրիկ ցորեն, որից պատրաստում էին աշխարհի ամենասպիտակ հացը: Այն ժամանակ քրիկ էին ուտում միայն արքաները: Նրանք որսից հետո խնջույքի էին նստում, ամուշ ամուս եղնիկի մսից պատրաստած սքանչելի խորովածը և ըմբռնում քրիկ սպիտակ լավաշը:

Քանի գնում խնջույքները շատանում էին, և քրիկը չէր հերիքում: Արքաները ստիպված հրովարտակ արձակեցին՝ պահանջելով, որ հայոց աշխարհի բոլոր կողմերում աճող քրիկը բերեն և որպես հարկ հանձնեն արքաներին:

Նախիջևանի կողքի դաշտում կառուցվեց մի ավան, որն ուներ արքունի հացունյաց բազմաթիվ ամբարներ: Այդ հեռավոր ժամանակներից էլ Հացունյաց կոչվեցին և՛ դաշտը, և՛ ավանը:

ՀԱՅՑ ՍՈՒՐԲ Է

Եգիպտոսում սկսել են ցորենի հաց թխել հինգ հազար տարի առաջ: Եգիպտացիները աշխատավարձ էին ստանում հացով: Տղամարդկանց տալիս էին մեծ, կանանց ու երեխաներին՝ փոքր չափի հացեր:

Այդ ժամանակ Հայաստանի տիրակալն էր Հայկ Նահապետի պապ Թիրասը: Կարծես՝ ի հեճուկս եգիպտական օրենքների, Թիրասը հացի մասին այսպիսի հրովարտակ էր արձակել. «Մեր աշխարհում մի բան կարելի է փոխանակել մի այլ բանով: Կարող ես թանկագին քարերով ամեն բան առնել, նաև ստրուկ ու ընդոծին գնել: Կուզես ոչխարի դիմաց խոտ գնիր, խոտի դիմաց՝ ոչխար: Ամեն տեսակ ապրանք չափանիշ է, բացի հացը: Հացը սուրբ է, իսկ սրբությունները, ինչպես աստվածներն ու հայրենի հողը, անչափելի են»:

ՀԱՐՍԻ ՈՒՄԻՆ ԼԱՎԱՇ ԵՆ ԳՅՈՒՄ

Հայոց ռազմի աստված խաժակն Վահագնի և սիրո աստվածուհի կճափայլ Աստղիկի հարսանիքն էր: Աստվածուհիների հայր Արամազդը Աստղիկի ուսին սպիտակափառ մի լավաշ էր զցել: Սակայն փեսայի տուն գնալու ճանապարհին լավաշն ընկավ հարսի ուսից: Վահագնի սիրով արբած Աստղիկը չնկատեց դա: Արամազդը զայրացավ և Աստղիկին ասաց.

- Հացը գետնին գցողը չի կարող կին ու մայր դառնալ:

Հարսանիքն անմիջապես խաթարվեց:

Այդպես էլ Վահագնին ու Աստղիկին չհաջողվեց ամուսնանալ, և նրանք ամբողջ կյանքում մնացին սիրահարներ:

Այնուհետև Հայաստանում սովորություն դարձավ հարսի ուսին լավաշ զցելը: Հարսները զգույշ են քայլում հարսանիքի ժամանակ՝ թե չէ լավաշը կսահի նրանց ուսից, և նրանք կընկնեն Աստղիկ աստվածուհու օրը:

ԹԹՆՍՈՐԸ ՀԱՅԻ ԱՅԲՈՒԲԵՆՆ Է

Թթնմորը հացի այբուբենն է: Մինչև նրա հայտնագործումը հացն «անգրագետ» էր: Դար ու դարեր անխաշ խմորը թոնրի պատին չի կպել, ընկել է մոխրի մեջ ու դարձել կուտ:

Հետո մարդը գտել է հացի մերանը՝ խաշը: Եվ ծնվել է թթնմորը, նրա հետ Հայոց աշխարհը լցվել է թոնիրներով:

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՍՊԻՏԱԿ ՀԱՅՑ

Հայոց աստվածները հավաքվեցին Մասիսի կատարին և դիմեցին աստվածների հայր Արամազդին:

- Ուզում ենք ըմբռնանել աշխարհի ամենասպիտակ հացը:

Աստվածների հայրը չառարկեց: Մասիսի կատարից նա իր հայցքը դարձրեց հյուսիս ու հարավ, արևելք ու արևմուտք և աստվածներին հետն առած թռավ դեպի Արագածի կողմը:

Եկավ ու կանգ առավ Արայի լեռան հարավային ստորոտում: Այստեղ եղվարդ գյուղն է, որի կալերում, ինչպես մարգարտափնջեր, շողարձակում էին սրսուռ ցորենի շեղջերը: Աստվածները քրիկից փրփուր-փրփուր հաց թխեցին, որի հոտը բռնեց Արագածի լանջերը: Հետո աստվածային փտորձակով ամուշ արեցին աշխարհի ամենասպիտակ հացը: Դա այնքան-այնքան սպիտակ էր, որ Հայոց աշխարհում մարդիկ երեք օր ու զիշեր չտեսան:

Աստվածների հացկերույթից հետո այդ հացից մի ճերմակ փրփուր բեկվեց և որպես հավերժական լույսի շող մնաց եղվարդում:

ԱՍՔ ԼԱՎԱՇԻ ՄԱՍԻՆ

Բուրավետ, փտորձագրգիռ լավաշը Հայաստան աշխարհի սրբազան արարչագործությունն է:

Բայց ինչու է ճերմակափրփուր այս հրաշալիքն այսքան բարակ: Գուցե ճակատագիրն է անողոք ծեծել, նետել ծանրածանր դարերի ոտքերի տակ՝ կարծելով, թե հայկական հացից ոչինչ չի մնա: Իրավ է, հայի բախտի պես շատ է բարակել լավաշը, բայց ավելի ու ավելի է քաղցրացել:

Ասքը նրբաթերթ լավաշի մասին այսպես է ասում. - Հին Հայաստանում Արամ անունով մի արքա է եղել: Կռվի ժամանակ սագերի է ընկնում ասորիների թագավոր Նոսորին: Հաղթողն այսպիսի պայման է դնում.

- Դու տասն օր կմնաս անթի: Տասնմեկերորդ օրը նետածգույթամբ կմրցես ինձ հետ: Եթե հաղթես՝ ես քեզ կարձակեմ, և դու յուրայիններիդ մոտ կգնաս արքայավայել ընծաներով:

Հաջորդ օրը Արամը պահանջեց, որ Ասորաց սահմանի մոտ կանգնած հայկական բանակից բերեն իր ամենագեղեցիկ լանջապանակը:

Ասորի բանբերները շտապեցին հայկական բանակատեղի: Հայերը գլխի ընկան, որ իրենց արքան ինչ-որ բան է ակնարկում: Ամբողջ գիշեր նրանք ասորի բանբերներին պահեցին: Լուսաղեմին ասորիները վերադարձան իրենց հետ բերելով Արամ արքայի լանջապանակը: Նրանք չգիտեին, որ լանջապանակի մեջ նրբաթերթ հաց է դրված: Այն ժամանակ ոչ ոք չգիտեր լավաշի մասին, իսկ ասորի բանբերների մտքով չէր էլ անցնի, թե հայերը կարող են զրահի մեջ հաց թաքցնել:

Արամն ստացավ իր զրահը, բայց ասաց, որ սա չէ իր ամենագեղեցիկ լանջապանակը: Հետո մի ուրիշ լանջապանակ բերեցին, Արամն ասաց, որ սա էլ չէ: Եվ ասորի բանբերները ինձ օր շարունակ գնում ու գալիս էին առանց իմանալու, որ իրենց բերած լանջապանակներով ամեն օր մի նրբաթերթ հայկական հաց են հասցնում Արամ արքային:

Տասնմեկերորդ օրը Արամն ու Նոսորը մրցասպարեզ մտան: Նոսորին թվում էր, թե տասն օր սոված մնալով Արամը և՛ ուժասպառ է եղել, և՛ կորցրել սրատեսությունը:

Սակայն Արամն իրեն կայտառ էր զգում: Հայկական հացը նրան ուժ էր տվել: Նա հաղթեց մրցության մեջ և տուն վերադարձավ պատվով:

Վերադարձավ ու հրովարտակ արձակեց, որ այսուհետև Հայաստանում հաստ ու բազմածև հացերի փոխարեն լավաշ թխեն:

ՀԱՅՆ ՈՒ ԼԵՁՈՒՆ

Աշխարհի ոչ մի անկյունում հաց ուտելու համար թարգմանիչ պետք չէ: Հացն աշխարհի բոլոր ազգերի համար է: Մինչև հիմա ոչ մի մարդ չի դավաճանել հացին:

Մեծերի մեջ մեծ իմաստուն Գրիգոր Մագիստրոսն ասել է.

- Յուրաքանչյուր մարդ Մայրենի լեզվի կարիքը պետք է զգա այնպես, ինչպես հանապազօրյա հացինը: Լեզուն ազգի հոգևոր հացն է: Լեզուն էլ հացի մման է՝ ոչ հնանում է, ոչ թառամում:



ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ՆՈՒՅՆԻՍԿ ՕԼԻԳԱՐԽՆԵՐՆ ԵՆ ՈՒՐԻՇ

Հունվարի 8-20-ը հայ դիվանագետների և լրագրողների խումբը «Մա- մուլ և ՋԼՄ-ներ» ծրագրի շրջանակներում գտնվում էր Եգիպտոսի Արա- բական Հանրապետությունում:

Հյուրընկալող կողմը՝ Եգիպտոսի արտաքին քաղաքականության գերա- տեսչության ԱՊՀ երկրների հետ տեխնիկական համագործակցության հիմնադրամն էր: Հայկական պատվիրակությունը Եգիպտոս ժամանեց կիրակի օրը, որը, ինչպես պարզվեց, արաբական աշխարհում աշխա- տանքային օր է: Հանգստյան օրը ուրբաթն է, երբեմն նաև շաբաթ: Պետա- կան հիմնարկներում աշխատանքը սկսվում է առավոտյան 8-ին և ավարտվում 14.00-ին: Ընդմիջման ժամ սահմանված չէ, ուստի տեղացի- ները իրենց դառը փորձից ելնելով կատակում էին «չինովների աշ- խատանքային ժամը համընկնում է ընդմիջման հետ»: Առաջին տպավո- ռությունը ծայրաքաղաք Կահիրեն բավականին անշուք և անհրապույր քաղաք է: 17 միլիոն բնակիչ ունեցող այս քաղաքում միախառնված են հինը, ժամանակակիցը, ավանդականը և անցումային փուլը: Ընդ որում, սկսած բնակչության հագուկապից, կենցաղից, ավարտած քաղաքի ճար- տարապետական տեսքով: Ինչպես գլխաբաց Եգիպտոսիների կողքին կարելի էր տեսնել նույնիսկ երեսը սև քողով ծածկած կանանց, այնպես էլ եվրոպական ոճով ու շքեղությամբ կառուցված շինությունների կողքին կիսախարխուլ, գորշ և թշվառությամբ բուրող շինություններ: Ի տարբե- րություն ծայրամասերի, Կահիրեի կենտրոնական թաղամասերը ավելի փնթի էին: Թերևս դա հաղթահարելու համար էր մոտ հինգ ամիս առաջ քաղաքի մաքրության վարչություն ստեղծվել, որի ղեկավարը, հանդիպ- ման ժամանակ, ի թիվս այլ ծրագրերի նշեց, որ դպրոցներում հատուկ առարկա է դասավանդվելու. երեխաներին կրթել՝ այլ կերպ վերաբերվել իրենց բնակավայրերին:

Քաղաքիկ էր երթևեկությունը: Եթե զուգահեռներ անցկացնենք, ապա պետք է խոստովանել, որ Երևանում երթևեկությունը կարգավորված է: Հասարակական տրանսպորտը միայն ավտոբուսն է: Մարդիկ բարձրա- նում և իջնում են ընթացքից: Գերակշռում են ավտոմեքենաները՝ 3-4 սմ հեռավորությամբ են ընթանում և 4-5 վայրկյանը մեկ հարվածում իրար՝ տարբեր դիրքերից: Նոր մեքենա ընդհանրապես չի հանդիպում, որով- հետև իմաստ չունի, միևնույն է՝ մի քանի ժամից մի քանի տեղից «կվիրա- վորվի»: Ասենք՝ երրորդ գծում գտնվող մեքենայի վարորդի խելքին կփչի թեքվել աջ կամ ձախ և առանց որևէ լուսային նշանների նա կիրակա- մացնի մտքին դրածը: Լուսացույցեր հատուկեմտ էին հանդիպում: Եղած- ների վրա էլ ոչ ոք ուշադրություն չէր դարձնում: Ոստիկանները կանգնած էին փողոցներում, սակայն երթևեկությանը միջամտելու, կարգուկանոն հաստատելու փորձ անգամ չէին անում: Առանձին մշակույթ էր փողոցն անցնելը: Ձեռքը վեր պարզելով վարորդին հասկացնում են, որ ուզում են փողոց անցնել: Սովորաբար խորհուրդ էր տրվում ձեռքը բարձր պա- հած, գլուխը կախած, համառորեն անցնել փողոցը: Այլապես պետք էր ապավինել վարորդի հումանիզմին և ասպետությանը:

Ինչպես բոլոր մահմեդական երկրներում, Եգիպտոսում նույնպես կրոնը իր ուրույն տեղն ու դիրքն ունի: Երկիրն արթնանում է լուսադեմին՝ 5-ին, առաջին աղոթքով: Եվս չորս անգամ աղոթում են՝ մինչև երեկո: Բոլոր հաստատություններում նամազի հատուկ տեղեր կան, աղոթում են նույ- նիսկ խանութներում և պարզապես փողոցում: Հոգևոր ներկայացուցիչը՝ մուֆտին, իր աշխատակազմով ընդգրկված է երկրի արդարադատության համակարգում: Նա պարտադիր վերանայում է մահապատիժների որո- շումները և դրանք բեկանելու իրավունք ունի: Հոգևոր իշխանությունից ավելի ուժեղ է աշխարհիկ իշխանությունը: Եգիպտոսում 24 քաղաքական կուսակցություն կա, որից 23-ը ընդդիմադիր են, բայց խորհրդարանում ընդդիմությունը 8 տոկոս է կազմում: Քաղաքական ասպարեզում ամենա- արդիական հարցն այսօր նախագահի՝ գարնանը կայանալիք ընտրու- թյուններն են: Սահմանադրությունը չի սահմանում իշխելու ժամկետներ, արդյունքում ստացվում է, որ իշխանությունը ժառանգաբար է փոխանց- վում: Ընդդիմադիրները ցանկանում են սահմանադրությամբ ամրագրել երեք անգամից ավելի չընտրվելու նորմը: Պետական գերիշխանությունն ակնհայտ էր նաև տնտեսական ոլորտում: Ռազմավարական նշանակու- թյուն ունեցող բոլոր ձեռնարկություններում պետությունը 50 տոկոս բաժ- նետեր է: Ի դեպ, հայկական պատվիրակությունը պատիվ ունեցավ հան- դիպելու տեղի հայտնի գործարար Իբրահիմ Կալիմին, որը միաժամա- մակ Կահիրեի համալսարանի պրոֆեսոր է: Հայերիս ցնցեց պարոն Կա- լիմի՝ օլիգարխի, ոչ մեր պատկերացումներին հարիկ կերպարը: Նա վա- րում էր մեքենա, որից ունենալ իրեն կարող է թույլ տալ միջին խավի հա- յը, շրջում էր առանց թիկնապահների և կորտեժների: Պատկերավորու- թյան համար նշեք, որ նրա կարողությունը կազմում է մի քանի հայ օլի- գարխների հարստությունը միասին վերցրած: Նրան է պատկանում «Four Seasons» յոթաստղանի հյուրանոցը: Աշխարհում այսպիսի ընդա- մենը յոթ հյուրանոց կա: Հյուրանոցային բոլոր կանոններով պարոն Կալիմի հյուրանոցում ընթերցող հետո, հայերիս մեջ մի ցանկություն առաջացավ մի այցելություն էլ մեր օլիգարխների համար կազմակերպել ու նրանց հաղորդակից դարձնել աշխարհի անցուղարձին, «խսկական»

օլիգարխին հատուկ կեցվածքին:

Մշակութային արժեքների տպավորությունները փոխանցելու համար նույնիսկ հայոց լեզվի ճոխությունը չի բավարարում: Դասագրքերից, այլ գրականությունից բուրգերին, Աֆիմսիսի և ընդհանրապես Եգիպտա- կան քաղաքակրթությանը ծանոթ լինելով, երբ արդեն բարեբախտություն ունես սեփական աչքերով այդ ամենը տեսնել՝ լեզուդ պարզապես պա- պանձվում է: Ինքը քեզ մի հարց ես տալիս՝ այդ քաղաքակրթությունից հետո մարդկությունը առաջընթաց ունեցավ, թե՞ ... Ի դեպ, մշակութային հարստությունը Եգիպտոսին հնարավորություն է տալիս երկրում գոսա- շրջությունը զարգացնել, որին իշխանությունները ամենայն լրջությամբ էին վերաբերվում: Ըստ զբոսաշրջության նախարարի խորհրդակալանի, 2004 թվականին 8 մլն զբոսաշրջիկ է այցելել Եգիպտոս: Անցած տարվա համեմատ այդ թիվը 34 տոկոսով աճել է: Երկրի բյուջեն տարեկան 6 մի- լիարդ դոլարով համարվում է ի հաշիվ զբոսաշրջության, պետությունն էլ իր հերթին միլիարդավոր դոլարներ է ծախսում այդ ոլորտում: Հիմա աշխատում են ծավալներն ավելացնելու ուղղությամբ: Նախարարի խոր- հրդրականի խոսքով՝ իրենք տուրիզմին վերաբերվում են որպես արտա- դրության: Գոյություն ունի հատուկ համակարգ՝ զբոսաշրջիկի ոստիկա- նությունը: Նրանց խնդիրն է ապահովել զբոսաշրջիկների անվտանգու- թյունը՝ ամբողջ օրը ուղեկցելով տվյալ անձին կամ խմբին: Ի դեպ, զբոսա- շրջիկի օրվա ծրագիրը գրանցվում է ոստիկանության տվյալ կետում, որպեսզի, Աստված մի արասցե, պատահարի դեպքում հնարավոր լինի շուտափույթ օգնության հասնել:

Հայկական վարժարանն օլիգարխի՞ համար

Եգիպտոսի հայ համայնքի պատմությունը բավականին հարուստ է: Եգիպտահայ համայնքի ներդրումը Եգիպտական պետության կայացման գործում՝ բացառիկ է եղել:

Սա Եգիպտոսի արտաքին գործերի նախարարի կարծիքն է, որը նա փոխանցել է այդ երկրում ՀՀ դեսպանին: Եգիպտոսում հայերը նույնիսկ վարժապետ և արտգործնախարարներ են ունեցել: Արտաքին քաղաքա- կանության գերատեսչության ինտերնետային կայքում ներկայացված առաջին չորս նախարարները հայ են: Եգիպտահայ, ինչպես նաև Միջին և Մերձավոր Արևելքի համայնքները լուրջ խնդիրներ ունեն այսօր՝ նոսրա- նում են: Երբեմնի 50-60 հազարանոց Եգիպտահայ համայնքը այսօր հազիվ 7-8 հազար է հաշվվում: Հայերը կենտրոնացած են Կահիրեում և Ալեքսանդրիայում: Եգիպտոսում երկու հայկական վարժարաններ կան՝ Նուբարյան և Գալուստյան: Ուշագրավ է, որ Նուբարյան վարժարանում հայ ուսանողներ չկան: Տեղի հայերը ձգտում են եվրոպական երկրներում կրթություն ստանալ: Ի դեպ, Նուբարյան վարժարան ընդունվողների թիվը տարեկան չի գերազանցում 80-ը, իսկ դիմորդների թիվն անցնում է հա- զարը: Նրանք բոլորն էլ արաբներ են: Նույնիսկ Հայաստանի դեսպանու- թյան միջոցով փորձում են ծանոթություններ մեջ գցել, որպեսզի ապա- հովվեն մրցակցությունից:

Եգիպտոսում ՀՀ դեսպան Ռուբեն Կարապետյանը այս իրավիճակը հա- մարում է նաև Հայաստանի իշխանությունների մտահոգության առարկա. «Ես այցելել եմ բոլոր դպրոցները, վարժարանները. տարեցտարի դասա- րանների թիվը նվազում է: Հանդիպումներ են ունեցել բոլոր մշակութա- յին, մարզական միություններում, հստակ պատկերացում ունեն և գտնում են, որ քանի դեռ կա Հայաստանի Հանրապետությունը, մեր համայնքների գոյատևումն ու բարեկեցությունը կախված կլինի ՀՀ-ի հետագա ճակա- տագրից: Միտի փորձենք սփյուռքի երիտասարդությանը կապել Հայաս- տանին: Նոր սերնդափոխության խնդիր կա և նոր սերնդին մերժեցնելու կարիք կա: Դեսպանությունը այստեղ լուրջ անելիքներ ունի»:

Եգիպտոսում գործում են հայկական ավանդական կուսակցությունները: Կուսակցական առումով, սակայն, կենսայնքը մասնատված չէ:

ՆԵՒԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ի դեպ, դեսպանի արտահայտած մտահոգությունների և լուրջ աշխա- տանքի համատեքստում հարկ է նկատել, որ Եգիպտոսում ՀՀ դեսպանա- տան աշխատակիցների թիվը երեքն է: Ընդ որում, բացի Եգիպտոսից, դեսպանատունը սպասարկում է ևս հինգ երկրի՝ Լիբիա, Ալժիր, Մարոկկո, Թրոպիկա, Սուդան: Դեսպանությունը չունի նույնիսկ սամուլի կցորդ, որի գործունեությունը թեկուզ սեփական երկիրը տվյալ երկրում քարո- զելու համար կարևոր է: Մանավանդ Եգիպտոսում, որտեղ գիտեն սեփա- կան երկիրը քարոզելու արժեքը:

ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Շատ Նոր Կյանք գյուղի ակումբի պահակ ժՈՒԿԵՌՆ ԶԻՐՈՒՄՉՅԱՆԻ հերթական նամակը՝ հասցեագրված կառավարությանն առընթեր փախստականների և միգրացիայի վարչության պետ ԳԱԳԻԿ ԵՂԱՅԱՆԻ:

Բարև Գագիկ ջան: Կներես, որ էսպես ուղղակի են դիմում, բայց դու հասարակ տղա ես երևում, ինչպես ասում են՝ մեր մարդն ես, և դա շատ լավ երևում է քո արտաքինից ու հագուկապից, էնպես որ՝ ինձ կհասկանաս: Ամեն ինչ սկսվեց նրանից, Գագիկ ջան, որ մեր գյուղատնտես Լենդրուշի ու զոտտեխնիկ Վորոնցովի միջև վեճ առաջացավ, թե արժե՞ արդյոք գնալ էս երկրից: - Բա ինչի՞ չես գնում, - գոռում էր Լենդրուշը: - Իսկ դո՞ւ, - ի պատասխան ճղավում էր Վորոնցովը: Երեկոյան ժամը իննից սկսած, երբ Վորոնցովը եկավ Լենդրուշի տուն՝ տնական արաղի շիշը թևի տակ, էդ հարցերը դուրս էին պրծնում նրանց խոսակցությունից ժամացույցի կկվի մշտակայությամբ: Իսկ հիմա գիշերվա երկուսն էր, ու Լենդրուշը՝ ձեռքը զարկելով իր քաչալ ճակատին, ոռնաց. - Սպանեցիր: Սորթեցիր: Ես ուզում եմ ապրել էստեղ՝ Շատ Նոր Կյանքում: - Որովհետև ախմախ ես, - ասաց Վորոնցովը: - Դե ուրեմն՝ գնա: Բարի ճանապարհ: - Ո՞ւր գնամ, - գիշատիչ հայացքով հետաքրքրվեց Վորոնցովը: - Իսրայել: - Իսրայել: Սրան, Գագիկ ջան, Վորոնցովը ոչինչ չպատասխանեց, այլ միայն ծալեց ձեռքն արմուկից, մյուսը դրեց ուղղահայաց ու ստացվածը ցույց տվեց գրուցակցին: - Բայց կարծում եմ քո ապուկապրից մեկը ոնց որ թե հրեա էր, - հեզմալից խայթեց Լենդրուշը: - Հրեան ի՞նքո՞ւ ես, - արհամարհանքով պատասխանեց Վորոնցովը: - Պապա աշխարհի քաղաքացի էր: Խմեցին: Չակուսկա արեցին: - Իսկ Ամերիկա կգնա՞յի՞ր, - ճշտեց Լենդրուշը: - Ամերիկա՛ հա՛, - հաստատեց Վորոնցովը: Էլի խմեցին: - Ուզում ես գնալ Ամերիկա, - իրավիճակը կոնկրետացրեց Լենդրուշը, - իսկ էստեղ մի որևէ կորած-մոլորած քեռի չունե՞ս: - Զէ, ոչ ոք չունեմ, - գանգատվեց Վորոնցովը: - Համարյա երեք հարյուր միլիոն ամերիկացի կա, ու էդքանի մեջ գոնե մի շուն ազգականս լիներ: - Դե, ուրեմն փախստականի կարգավիճակ ստացի, - ուսերը թոթվեց Լենդրուշը: - Ե՛ս, - զարմացավ Վորոնցովը: Նրա բոլոր Գագիկ ջան, ասեմ իմանաս, մետր ութանասունվեց է, ու մինչև հիմա խառը իրավիճակներում հենց իրենից են մարդիկ գլխապատահ փախչում: - Ես՝ փախստական: - Դե լա՛վ, - հանգստացրեց նրան Լենդրուշը: - Թող էդպես լինի, կօգնեմ քեզ փախստականի կարգավիճակ ստանալ: Մի քանի օրից Գագիկ ջան, Վորոնցովը, իբր պատահաբար, հայտնվեց Մելիք-Աղամյան-2 հասցեում, որտեղ անցնում էր ՀԿԿ համագումարը, իսկ մուտքի մոտ բողոքի ցույց էր՝ հորեն Սարգսյանի ու Սանատրուկի Սահակյանի գլխավորությամբ: Լենդրուշի ծրագրած գործողությունը փայլուն սկսվեց. հենց որ Վորոնցովն ասաց, թե թուվմասյանի կողմնակիցն է, նրան սկսեցին ծեծել: Վորոնցո-



վին քոթակում էին դրոշների կոթերով, ցուցապաստառներով, բարձրախոսներով ու պարզապես բռունցքներով: Ամենից շատ էդ րոպեին Վորոնցովը վախենում էր, թե չի դիմանա ու կսպանի էդ մառազմատիկներից մեկնունենկին: Նա ձեռքերով պաշտպանում էր գլուխը, Գագիկ ջան, որը դեռ մանկուց շատ ավելի էր զննհատում, քան մարմնի մյուս մասերը, և փորձում էր մտածել հաճելի բաների մասին. օրինակ՝ «Ազատության» թղթակցի, որը, խորամանկ Լենդրուշի տված խաբարով, պիտի նկարեր էր դաժան հաշվեհարդարը: Ձեռքին էդպիսի ժպատվեց ունենալով, Գագիկ ջան, հնարավոր կլիներ քացով բացել ամերիկյան դեսպանատան դռները, դրա համար էլ, վզակոթին ստանալով բանվորազուգացիական բովանդակության ցուցապաստառով, Վորոնցովը ժպտում էր՝ Ջոկոնդայի խորհրդավոր ժպտով: Նա չգիտեր, որ էդ ժամանակ կոմունիստներն արդեն խլել էին «Ազատության» թղթակցի տեսախցիկն ու ջարդել... - Չստացվեց, - խոստովանեց Լենդրուշը: - Ներող կլինես: - Ոչի՛նչ, - ասաց Վորոնցովը: Նրա ուռած դեմքի վրա մտքերը դժվարությամբ էին կարդացվում: - Եթե խոստացել եմ, ուրեմն կանեմ, - մռայլ ավելացրեց Լենդրուշը: - Շնորհակալ եմ, - ասաց Վորոնցովը: Մի երկու օր անց, Գագիկ ջան, Լենդրուշին հաջողվեց ճարել «Հայ արհմերի միության» հեռախոսի համարը: Մեղքի զգացում ապրելով ընկերոջ առջև, Լենդրուշը մի ամիս շարունակ զանգում էր արհմերի առաջնորդին ու հայտնում, թե Վորոնցովը մասուն է ու արվամուլ: Արհմերն արձագանքում էին չափազանց ծուլորեն՝ պատճառ բռնելով, թե մասուններն ու արվամուլները մեզանում չմից շատ են, իսկ իրենց պես իսկական հայրենասերները՝ մեկ-երկու, ու վերջ: Եստեղ Լենդրուշը հասկացավ, որ ինչպեսև Յուլիսիային Կորեան, դատապարտված է ապավինել միայն սեփական ուժերին, ու հենց նույն գիշերը Վորոնցովի դռան վրա իր ձեռքով նկարեց իսկայական ֆաշիստական սվաստիկա: Հետո, Գագիկ ջան, Լենդրուշը զանգեց դեմոկրատական

թերթերի խմբագրություններ ու պատմեց սվաստիկայի մասին: Բայց Վորոնցովի դռան սվաստիկայի մասին գրեց միայն «Հայկական ժամանակը»: Հրապարակումը տեղեկացնում էր նաև, որ Վորոնցովի տատիկը, դուրս գալով ներկի հոտի վրա, բռնաբարվել է ու անդամահատվել մանր կտորների: Ըստ որում Վորոնցովի անունը գրել էին Վարյան, իսկ հասցեն՝ շփոթել, ինչը արդեն բացարձակ անպիտանի էր դարձնում հրապարակումը դեսպանատուն ներկայացնելու համար: - Լսիր, - ասաց Վորոնցովը Լենդրուշին: Ասում եմ, Աստված դրա հետ՝ էդ փախստականի կարգավիճակի: Ավելի լավ է փող հավաքեմ ու Ամերիկայում պապիկ գտնեմ ինձ համար: - Գիտես ի՞նչ արժեն պապիկներն Ամերիկայում, - հարցրեց Լենդրուշը: - Ի՞նչ արժեն: - Զգիտեմ, - ասաց Լենդրուշը: - Բայց վաղը կասեմ: Լենդրուշին հաջողվեց, Գագիկ ջան, դուրս գալ պետքական մարդու վրա, և էդ մարդը նշեց ստույգ թիվը. քառասուն հազար դոլար: «Քառասուն հազար», - սարսափեց Լենդրուշը: «Կարելի է և ավելի էժան, - ասաց մարդը, - բայց այդ դեպքում պապիկը նեգր կլինի»: Պապիկի տարբերակը քոթից չորանում էր, բայց կանգ առնել Լենդրուշն այլևս չէր կարող: Նա խփնված էր Վորոնցովին Ամերիկա ուղարկելու գաղափարի վրա: Գիշերները Լենդրուշը զանգում էր ավտոմատ հեռախոսից ու Վորոնցովի անունից նախազուշացնում պատրաստվող ահաբեկչական գործողությունների մասին, հայտնում ոստիկանությանը, որ վերջինս իր տունը սարքել է անառականոց, նրա ստորազորությամբ հողվածները տպագրում հանցավոր վարչախմբի գազանությունների մասին: - Լենդրուշ, - մի ամիս անց ասաց ահագին նիհարած Վորոնցովը, - եթե չխախտնդվես, եղած-չեղածդ վրայից կպոկեմ: - Դու ինչ է, չե՞ս ուզում գնալ Ամերիկա, - զարմացավ Լենդրուշը: - Լսիր, ես մի հիանալի ծրագիր էլ ունեմ: Հարկավոր է, որ քեզ գազանաբար ծեծեն որևէ օլիգարխի թիկնապահները: ... Շատ Նոր Կյանքի գյուղամիջում հավաքվածները, Գագիկ ջան, տեսան, թե ոնց է առլետիկ կազմվածքով տղամարդը քարշ առնույն դիմադրող վրտի սուբյեկտին դեպի գյուղի ծայրին գտնվող ծորն ու, «կյանքս կերել էս, անիծված մասուն» գոռալով, ցած նետում դրան... ..Բուժվելուց հետո Լենդրուշը փախստականի կարգավիճակ ստացավ և հիմա ապրում է Լոսուս: Փռչելուների առևտուր է անում, իր տոկոսն ունի: Ասում է, թե չի հասկանում ո՞նց կարելի է ընդհանրապես ապրել Հայաստանում: Իսկ Վորոնցովը, Գագիկ ջան, առաջվա պես ապրում է Շատ Նոր Կյանքում, իսկայական սվաստիկայով դռան հետևում, ստանում 23 հազար դրամ աշխատավարձ ու փող հավաքում ամերիկյան պապիկ գնելու համար: Լավ մարդ է, բայց, մեր մեջ ասած, հեջ չի սիրում գյուղատնտեսներին:

Խորին հարգանքներով՝ Շատ Նոր Կյանք գյուղի ակումբի պահակ ժՅՈՒԿԵՌՆ ԶԻՐՈՒՄՉՅԱՆ

«ԿԱՏԱՂԱԾ ՑՈՒԼԻ» ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ



2000 թվականի Սիդնեյի օլիմպիադայից վաճառորդի բռնցքամարտիկ, հանրապետության վաստակավոր մարզիչ Վազգեն Բաղայանի սան Վախթանգ Դարչինյանն ուշ վերադարձավ հայրենիք, մասնակցեց Հայաստանի առաջնությանը և եզրափակիչում պարտվելով իրենից ավելի երիտասարդ բռնցքամարտիկի՝ կրկին գնաց Ավստրալիա...

«2001 թվականին մտածում էին, որ 2004 թվականի Աթենքի օլիմպիադայի ժամանակ Վախթանգը կդառնա 28 տարեկան, և լավ կլինի, որ նրա փոխարեն արդեն մեկ ուրիշը՝ ավելի երիտասարդը, մասնակցի միջազգային մրցաշարերի, ու հաղթանակը նվիրեցին Վախթանգի մրցակցին», - վրդովմունքով նշեց Վախթանգի մարզիչ, Վանաձորի ոստիկանապետի ծառայության գծով տեղակալ, միջազգային կարգի մրցավար Վազգեն Բաղայանը:

Ավստրալիայում Վախթանգը լրջորեն զբաղվեց պրոֆեսիոնալ բռնցքամարտով, 3 տարվա ընթացքում անցկացրեց 22 մենամարտ և բոլորն էլ ավարտեց հաղթանակով: Եվ ահա, 2004 թվականի վերջին միջազգային բռնցքամարտի ֆեդերացիայի (IBF) վարկածով աշխարհի չեմպիոնի կոչման համար պայքարում նրա մրցակիցը գործող չեմպիոն, կոլումբիացի Արիել Պաչեգոն էր: Իսկ մինչ այդ կոլումբիացին ու նրա ներկայացուցիչները տարբեր պատճառաբանություններով (մեկ Պաչեգոն հիվանդ էր, մեկ մենամարտի տեղը չէին կարողանում որոշել, մեկ...) հետաձգում էին հանդիպումը:

50,8 կգ քաշային կարգի աշխարհի չեմպիոնի համար մենամարտի 11-րդ ռաունդում Վախթանգ Դարչինյանը, որին լրագրողները «Կատաղած Ցուլ» մականուն են տվել, ձախ կողային հարվածով կոլումբիացուն դարձրեց էքս-չեմպիոն՝ տոնելով իր անընդմեջ 23-րդ հաղթանակը:

Հաղթանակից հետո Վախթանգը խոստացել էր գալ հայրենի

Վանաձոր, հանդիպել ընկերներին, մարզիչին, հարազատներին, բայց այնպես ստացվեց, որ շուտով ծնողներն են մեկնելու Ավստրալիա, և երևի միայն մի քանի ամիս հետո Վախթանգը գա հայրենիք: Հույս ունենանք, որ պրոֆեսիոնալ բռնցքամարտի հայ առաջին չեմպիոնին (ի դեպ, նա դեռևս ամուսնացած չէ) ըստ արժանվույն կգնահատեն ու կդիմավորեն նաև հայրենիքում: Չմոռանանք ավելացնել, որ Վախթանգի մարզահագուստին հայկական դրոշի նկարն է, նա ռինգ է դուրս գալիս Հայաստանի փոքր դրոշը ձեռքին, հաղորդավարը նշում է նրա հայաստանցի կիները...

Վազգեն Բաղայանն ուրախությամբ նշեց, որ մեկ ամիս հետո կվերաբացվի ավելի ընդարձակված ու վերանորոգված ակումբը, որը միջազգային կարգի սպորտի վարպետներ, Եվրոպայի և աշխարհի առաջնությունների մրցանակակիրներ Սուրեն Օհանյանի, Բաբկեն Սահրադյանի, Լեռնիկ Պալայանի և, վերջապես, Վախթանգ Դարչինյանի դարբնոց է եղել: Իսկ նոյեմբերի 16-ին քաղաքապետարանի որոշմամբ կայարանի նախկին ճաշարանի 20 տարի անգործության մատնված շենքը անհատույց օգտագործման է տրվել «Վազգեն Բաղայան մարզամշակութային ակումբ» հասարակական կազմակերպությանը: Այդտեղ կկառուցվի նոր մարզադահլիճ, իսկ 2-րդ հարկը Հայաստանի բռնցքամարտի հավաքականի համար կարող է ծառայել որպես հյուրանոցային համակարգ: «Շատերն են նշում, որ Վանաձորի կլիման, պայմանները հարմար են մարզումներ, մրցումներ անցկացնելու համար», - նշեց Վ. Բաղայանը:

Համոզված ենք, որ Վանաձորը կտա Վախթանգ Դարչինյանի նման բռնցքամարտիկներ, բայց լավ կլինի, որ նրանք մնան Հայաստանում, ու նրանց հաղթանակի պատվին հնչի մեր երկրի օրհներգը: Ու թող բռնցքամարտի, ընդհանրապես սպորտի մասնագետները խաչ չքաշեն դեռևս 30-ը չբոլորած մարզիկներին վրա:

Ռուսլան ԹԱԹՈՅԱԼ

Մինաս ԹԱՅՄԱԶՅԱԼ

ՄԱՅՐ ԾԱՌԸ

Կանգնած էր մայր ծառը ճամփաների ու փոթորիկների խաչմերուկում: Նրա հասակակից հարևան ծառերը վաղուց փտել, ընկել էին, իսկ նա դեռ պտուղ էր տալիս բուրունմապետ, անուշ չնայած նրա հինավուրց ճյուղերից շատերը վնասվել էին հողմերից:

Այգեպաններից մնանք նրա սերմը, մյուսները ճյուղ ու բողբոջ առան տարան, մատղաշ ծառ ու այգի տարածեցին ամենուրեք:

Նոր ծառերը ծաղկեցին գարնանը, ամռանը արևից, շող ու հողից հյութ առան, հասունացան, պտուղ տվեցին՝ մայր ծառի շուրջը և ամենուրեք, ուր տարել էին, տարածել այգեպանները՝ պատվաստելով օտար ու վայրի շիվերի վրա:

Քաղցր էին նոր ծառերի պտուղները, բայց մայր ծառին անծանոթ համ ու հոտ ունեին: Նրանք, որ մայր ծառից էին սերվել ու աճել, պարծեցան, ծիծաղեցին մայր ծառի ու նրա պտուղների վրա:

- Մենք քո պտուղներից էլ լավ, նոր համ ու հոտ ունենք, դու էլ մեզ պես փոխիր քո համն ու հոտը, - ասացին նոր ծառերը մայր ծառին դժվար հասկանալի, աղեղնավաճ լեզվով:

- Ապրել եմ այսպես ու կապրեմ, կհարատենեմ իմ նախնիների համ ու հոտով: Իսկ դուք, ինչքան էլ որ նոր համ ու հոտ բերեք վայրի, օտար տուններից, մայրականը չպիտի կորցնեք, չպիտի մոռանաք, որպեսզի այգեպանները ճանաչեն, թե որ սերնդից եք, որ տանեն, նոր այգի ձեր շիվերից էլ պատվաստեն:

- Ի՞նչ տարբերություն մերը, թե ուրիշինը...

- Ամտառի վայրի ծառերը, մոլախոտերը նույնիսկ չեն կորցնում իրենց համն ու հոտը, - ասաց մայր ծառը: - Մի՞թե դուք ապերախտ կգտնվեք դեպի ձեր բարի մայրը, ծնող ու սնողին կմոռանաք, - ասաց, և արտասվեց:

Տերևներից կաթիլ-կաթիլ թափվեցին այդ արտասուքները, արևի շողերի ջերմությունից գուրոշիացան, երկինք բարձրացան, խառնվեցին ամպերի հետ: Եվ այդ արցունքները որպես անձրև տեղացին մորից հեռացած ծառերի վրա, հագեցրին, ուժ տվեցին, որպեսզի նրանք չմոռանան մայր ծառին, նրա համն ու հոտը, լեզուն... չայլասերվեն:

Հայկազ ՕՐԱՆՅԱԼ

ԳԱՆԳԱՏՆԵՐ

Առաջին գիշերն Արտաշի հիվանդասենյակակիցները զանգատվեցին բժիշկներին, թե իրենք չեն կարող քնել նրա խոնավոցից: Եվ իրոք, այդ վիթխարի մարդը քնի ընթացքում այնպես էր խոռմփացնում, շփշփացող շրթունքների և ատամների արանքից կարծես ամպրոպախառն կայծակներ էին թռչում: Ամեն շունչ քաշելիս և արտաշնչելիս պատուհանի վարագույրները ձգվում էին Արտաշի ուղղությամբ և հետ շարտվում, քիչ էր մնում պոկվեին տեղերից:

Հետևյալ առավոտը հիվանդանոց այցելեց Արտաշի կինը: Հիվանդները զանգատվեցին, որ իրենք չեն կարողացել քնել Արտաշի խոնավոցի պատճառով և քնաթաթախ են: Իսկ կինն ասաց ծիծաղելով.

- Տղերք, ես էլ եմ քնաթաթախ, որովհետև սովոր եմ քնել միայն Արտաշի խոնավոցի ձայնի տակ:

ԱՆԳԼՈՒԽ ԳԱԶԱՆ

Քաղցած Տիգրանը ուշ գիշերով մտնում է ջաղաց և ջրաղաց-պանից խնդրում կլոճ: Ջրաղացպանը նրան, քացի տալով՝ վնդում է: Տիգրանը որոշում է ջրաղացպանին վախեցնել: Նա մերկանում է, մտնում ցեխի մեջ, տրորվում: Այդպիսի տեսքով չորքոտանի, ետընթաց մտնում է ջրաղացի դռնից ներս:

Ջրաղացպանը, տեսնելով այդ, վախից փախչում է: Տիգրանը վերցնում է կլոճը և անհետանում:

Ջրաղացպանը վազելով գալիս է գյուղ, արթնացնում հարևաններին և շնչակտուր պատմում, որ ինքը տեսել է մի գազան, որը գլուխ չունի, բայց գազանի ործ լինելը նկատել է:

Գագիկ ԵՐԻՑՅԱՆ

Նորից ու նորից նորերի ալիք

(Խոսք՝ արագ հերթափոխվող մեր իշխանիկներին)

Արհեստավարժ այրեր են՝ մեծ գործի կարոտ
Եռանդով լեցուն, ջախել ու խորոտ:
Չէ՛, գուցե հառնի հանց հավքը փյունիկ
Նորից շեն դառնաս, հայի հայրենիք:

Ես էլ ուրախ, կարոտս անծիր,
Խենթուկ թռններս դարձած տարագիր
Լեզուն ի՞նչ ասեմ, արդեն օտար գիր
Կարոտ բառերով գրեմ կանչի գիր.
«Տուն դարձեք, լա՛ո, իմ ու ձեր էրգիր,
Որ չմոռանանք լեզուն հայագիր...»:

Է՛հ, վախենում եմ բախտից խաբուսիկ
Յիշում ենք Լևոն, Բաբկեն ու Յուսիկ
Մեկ էլ տեսար հանց լափող ալիք
Իրար մեջ կիսած մեր ինչք ու բարիք
Թողնեն հեռանան նոր տարում գալիք:
Դե՛հ, մենք էլ ընտրող տիկնիկ-խաղալիք
Գնանք ընտրելու մի նոր արհավիրք:

ԲԱՆԱՎԵՃ ԵՐԿՆԱՎՈՐ ՏԻՐՈՋ ՀԵՏ

Բնության օրենք կա մարդ - ցեղին տրված,
Մենք՝ խոնարհ ծառա՝ օրենքին հանձնած,
Ուժեղն հագեցած, թույլը միշտ քաղցած.
Հարատևում ենք՝ գոյին բեռ դարձած:

Բայց ինչու՞, ինչու՞ հարցս զարմացած
Քեզ եմ ուղղում, բարեգութ՝ Աստված,
Դու՛, որ երկնել ես տիեզերքն արար
Եվ աշխարհի բերել օրենքներ արդար,
Ինչու՛, ինչու՛ ...
Մարդուն կերտել ես ուժեղ ու տկար.
Չորեղը թույլին իշխում տիրաբար
Գոյի կռիվ է, գոյության պայքար:

Գուցե չարը մեր հոգին գերել...
Չորեղն անզորից զատել, տարբերել
Սրբապիղծ Նեռն է օրենքն արարել:
Թու՛հ, չա՛ր սատանա, թեկուզ՝ անիծված
Նրա դեմ անզոր ես, տիրակալ՝ Աստված
Կամ էլ օրենքներդ եմ գրված անԱստված...
Ո՛վ դու՛՝ ներքևներին պաշտամունք դարձած,
Բարձրիկ տերերի մեծ խելքից ծնված,
Նրանց ուղեղի խաբկանքից սնված,
Միշտ տիրոջ սատար անարդար Աստված:

Ներում չեմ խնդրի, չսպասես հանկարծ,
Լծկան չեմ, գրաստ լկանված, թամբած
Ոչ էլ ծնկահար ամբոխի զանգված.
Չեմ ուզում դառնալ Բարձրյալից խաբված
Թեկուզ և կոչվեմ «ընթրստ անԱստված»:
Պարզ եմ, հասարակ, միշտ ճշտին կառչած:
(Կեսս մշեցի է, գեներ կան անասնձ):

ԾՆՆԴԱՎԱՅՐԻ ԿԱՆՉԵՐ

Վիրահայոց լեռների փեշերին փարված,
Գլուխդ հենած ամպոտ երկնքին
Մեր չքնաղ լռովա զովաշունչ գրկում
Մաքառում ես, նոր տունդ կերտում:
Մեր սուրբ էրգիր թուրքին թողած
Էրգրում ու վան ավար դարձած
Կարս, Ալաշկերտ... ծուռ մշեցին
Լեռներիդ հովտում նոր բույն հյուսեցին:

ԳՈՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐ

Նալբանդյանն է ինձ քարոզում,
Խրատ կարդում, գոյից՝ խոսում.
«Տե՛ս, գորշ կատուն թաքուն սպասում,
Սպասվող որսից փսլինքն հոսում,
Կեցցե՛ կատուն - թեկուզ մրսում,
Փորի համար մուկ է որսում»:

Թումանյանն էլ խեթ-խեթ լսում,
Ականջ դրել՝ բառն եմ որսում.
«Միամիտ դեմոկրատ, հեքիաթներ հյուսում,
Մեր վարչապետն է, աչքը չի տեսնում:
Մկանն հափռել, արդեն մարսում,
Չալտիկ կատուն դունչն է լիզում»:

Մարդ էակի գոյի սկիզբ օրից
Չորեղը միշտ էլ ուժեղ անզորից,
Թույլին, տկարին զրկել իր բարից,
Տիրակալ - տեր է արարման օրից:
Դարեր ուր դարեր ճնշող ու ճնշված
Քո կերտած գոյն ենք ո՛վ արդար Աստված:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ

Իմ հայոց աշխարհ, դու նորեն խաբված
Ամեն ինչ փոխվեց արագ ու հանկարծ
Գեփողն է տիրում խիղճը խոր թաղած
Ալան-թալան է, տանողն է տարած:

Իմ հայոց աշխարհ, խաբկանքով լցված
Լսիր, օտարական, դու աչքերդ բաց
Թե չէ հափ կանեն քսակդ է փախած
«Դիփի խաբում ինք», խեղճն է միշտ խաբված:

Իմ հայոց աշխարհ, խաբվելուց հոգնած
Այժմ էլ արդեն նոր անվամբ օծված
«Հայն հայասպան» դափնուն տեր դարձած
Անեծքի ծովն է մեջքիդ բեռ բարձած:

Իմ հայոց աշխարհ, նորեն որբացած
Դու հայի օրրան, խաբված ու խոցված
Թափառախմբերդ հայաշատ զանգված
Աշխարհն է ակոսում հայը մոլորված...
Ու խառն մտքերիս ալեկոծ ծովում
Հոգուս խռովքից տողերս ծնվում
Մտորում եմ լռիկ ու հոգնած
Գաղտնախորհուրդ ես ով հայի Աստված:
Նոյեմբեր 1999թ.

ԵԹԵ ԽԻՂՃ ՈՒՆԵՍ

(Հոկտեմբերի 27-ի ողբերգության առիթով)

Հե՛յ, լսիր ինձ, ով մարդ առեղծված,
Ասում եմ՝ չարք կա ներսդ բույն դրած
Մեղմիր քո բարկը, փականք դիր չարին
Ի՞նչ ես մեղք գործում, եթե կա բարին:

Մեր գոյն անցավոր, մենք՝ հյուր աշխարհին
Ապրողն հիշում է միշտ լավն ու բարին...
Թախծոտ տողերս իզուր չեն գրված
Մոռացել ենք խիղճ, վերն էլ, քեզ, Աստված:

Երբ կան տերեր, ծառաներ թամբված,
Արքա և ստրուկ, խաբող ու խաբված
Էլ ի՞նչ ճշմարիտ, ի՞նչ արդար Աստված.
Հավատս է մեռնում, վերադարձն անդարձ:

ՊՈԼՈՉ ՄՈՒԿՈՒՉԻ 4-րդ ԱՅՅԸ ՀԱՅԱՍՏԱՆ

- Իյա՛, ուստա Մուկուչ, դուրբանդ էղնիմ, էդ ի՞նչ է էղե, օր խորաթից կտրվել ես, էն անգամ գնացիր, գեշ խաբար բերեցիր, հասկցանք, ժածքը մեր վաթանը քար ու քանդ էր էրե, հիմի էլ հո ջրհեղեղ չի՞ էղե, օր ճակտեղ լուն ընգնի, հազար կտոր կեղնի:

- Է՛, Ծիտրո, իմ տեսածս օր դու տեսնեիր, առանց ճակատի ետ կուզայիր, լեզվիդ հետ աչքերդ էլ կչորանային:

- Պատմե, պատմե աչենք մեր քաղցրոց հալն ի՞նչն է, հազիվ մե անկախ պետություն են ստեղծե, էն էլ ամեն օր կավերվի:

- Աստուծո՛ղ կպիրես, էդ անկախից մի հարցնե, ի՞նչ անկախ, սաղ աշխարհեն կախման մեջ են, եղած զավոդները փչացրին, ժողովրդին գործից զրկեցին, հեշ բան չունին, ուզվորություն կենեն... իրանց համար: Միլիոնից անցե, միլիարդ կդիզեն իրանց համար... Թագավորն իրա նազիրվեզիրը հավաքած քաջնազարություն կենե, կսե՛ քահելներ, կռվեք թուրքի դեմ, ահելներ, դուք էլ մեռեք, քանի շուտ մեռնիք, էնքան լավ կեղնի, ձեր երկար տարիներու խնայած փողերը մեզի կման:

- Յավաշ, հլը, ուստա, էդիկ թագավորը կսե:

- Մենակ ըսելը չէ, գործն էլ հետն է, ժողովրդի ձեռեն ավանդները խլել է...

- Ուստա, չեն հասկնա, լավանդը ո՞րն է: - Լավանդ չէ՛ այ համբակ, ըսել է, թե հոգեպահուստ բանկերին պայ տված:

- Էդիկ հասկցա, ուստա, ըբը համբակը ի՞նչ բան է, ընծի կսես:

- Է՛, Ծիտրո, ես շա՛տ գիտեմ, որ քեզի ըսեն, ես էլ լսել եմ, էնտեղ նոր իշխանավորները իրար կսեին, ես էլ սորվա, իմանալովս իմաստուն կնշանակե...

- Էդպես էլ կեղնի, ուստա, համբակ որ

չեղնին, կրնա՞ն իրար ձեռից գահ ու թագ խլեն, որ ժողովուրդ ղեկավարեն, էս նեղ ժամանակ ճամփեքը փակ են, սնունդ, լուս ու վառելիք չունին, տերտերների մենձմենձ բանակը գիշեր-ցերեկ կքարոզե, թե շատ տառապեք, զրկվեք, որ ձեր հոգիները դրախտի արժանանան... Մենք խաբվանք, իրանք էլ մեր ետևից կուզան...

- Ծիտրո, բլբուլ կտրա՞ր, խաբարը ես եմ բերե, դուն տեղս կխոսի՞ս: Դուն գիտե՞ս, որ էրթըցածս իրեք օրը հաց չկար, հացն էլ որ կուզար, փարա չէր էղնի... Պատվավոր մարդիկ մուրացկանություն կենեն, որ տեսնիս՝ լացո՞ղ կուզա... շաբաթը առաջ Շահնազարենց Բեկոյին տեսա, մե «կնիժկեն» ձեռքին, քրվելով կերթար, ես ձեր էսպես-էնպես... ես ձեզի ավտոյիմ փարա տամ, երեսուն տարի բանցնեք ու հիմի միլիոն մտալու տեղը, «սպիչկեն» կուտա՞ք, տո թալանչիներ, անամոթներ... Ախր ես մենակ չեմ, հարուր - հազար ընծի պեսներ կան, որ գեղ կայնալ, գերան կկտորի...

Կոմունիստների էլ կփնտվեն, իթողիթները, թուրքը բիլա էդ բանը չի էնե, գառամյալ աղքատի ձեռքեն հացը չի խլե... Չէ, չէ, անպայման դատի բրի տամ, քթներից հանեն քրտինքով աշխատածս կոպեկները...

Ընկերն, օր կողքը կայնած էր, ըսեց՝ գործ չունիս, շունը շան միսը ի ուտե, օրենքն էլ է իրանցը, դատ ու դատաստանն էլ, մի էրա... է... Բեկոն գնաց, ես ետևից, մեկ էլ ավտոյի տակ քցին, մեռցրին...

- Իյա, ի՞նչ կսե, խեղճ Բեկո...

- Յբը, մինչև չգա ետինը, չի հիշվի առաջինը, Ծիտրո, ճակտես ընկնող լուն ոչ թե հազար, միլիոնեն ավել կտոր կեղնի:

Ենթ ՇԱԴԻԿՅԱՆ



Օտարերկրյա լրագրողը Միկոյանի և Մուրտուկի մոտ ընդունելության ժամանակ նկատում է, որ Միկոյանի բանաբանանը դրված է սեղանի տակ, իսկ Մուրտուկինը՝ պահարանի վրա: Նրա զարմացած հարցին երկուսն էլ նույն պատասխանն են տալիս: «Իմ բանաբանանն է, որտեղ ուզեմ՝ այնտեղ էլ կլնեմ»:

Յետո Ստալինի մոտ ընդունելության ժամանակ լրագրողը պատմում է նրան այդ մասին:

- Ավանակներ, - ասում է Ստալինը:

- Բայց ինչու եք այդ ժամանակ դուք նրանց այդքան կարևոր պետական պաշտոն տվել:

- Իմ ավանակներն են, ուր ուզեմ, այնտեղ էլ կնշանակեմ, - պատասխանեց Ստալինը:



Մարշալ Ժուկովը դուրս է գալիս Ստալինի առանձնասենյակից և զայրացած ասում. «Փռչոտ, բեղավոր սատանա»: Բերիան, որ ընդունարանում է լինում, մտնում է Ստալինի առանձնասենյակ և այդ մասին հայտնում Ստալինին:

Սա խնդրում է հետ կանչել Ժուկովին:

- Ընկեր Ժուկով, դուք ու՞մ ի նկատի ունեիք, երբ իմ առանձնասենյակից դուրս գալիս ասացիք՝ «Փռչոտ, բեղավոր սատանա»:

- Յիտերին, բա էլ ու՞մ, ընկեր Ստալին:

- Իսկ դուք ու՞մ նկատի ունեիք, ընկեր Բերիա:

ԳԻՏԵՔ ՈՐ

Սիբիրի առաջին «աքսորյալը» եղել է Ուզլիլ քաղաքի գանգը: Թագաժառանգ Դմիտրիին սպանելուց հետո այդ գանգի միջոցով ապստամբության կոչ է արվել: Բորիս Գոդունովը դաժանորեն խեղդեց ապստամբությունը, իսկ գանգին ծեծեցին մտրակներով, կտրեցին «լեզվակը» և աքսորեցին Տոբոլսկ:

Միայն 300 տարի անց, 1891 թվականին հատուկ պատգամավորություն մեկնեց Տոբոլսկ և վճարելով մեծ գումար, գանգը ազատեց աքսորից և ետ բերեց Ուզլիլ:



Պետրոս Առաջինի օրոք արգելված էր խարույկ վառել ծառից 2 սաժենից մոտիկ: Ջանցառուների ռունգերը կտրում էին, իսկ առանց թույլտվության ծառ կտրելու համար մեղավորներին ծեծում էին հաստ փայտերով:



1474 թվականին Բազելում տեղի ունեցավ մի տարօրինակ դատավորություն. ծու ածող աքլորը մեղադրվել էր կախարհության մեջ: Աքլորին և ծուն այրեցին խարույկի վրա:



Յնդկաստանի նահանգներից մեկում մինչև այժմ գոյություն ունի մի այսպիսի սովորություն. էթե աշակերտը ինչ-որ պատճառով բացակայում է դասերից, նրա փոխարեն դասերին պետք է ներկա գտնվի ծնողը:

ՌԵՊԼԻԿ

ՊԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ԴՐԱՄԸ ԼԱՎ ԵՆ ՃԱՆԱԶՈՒՄ

Երեկ Ալեք Մանուկյան փողոցում ՊԱՏ-ի ավտոտեսուչն առանց որևէ պատճառի կանգնեցրեց տաքսի մեքենան: Տաքսու վարորդն առանց վարանելու 500 դրամանոց մեկնեց նրան, որ գուլբն ազատի: Սակայն, այ քեզ զարմանք, ներկա էղա մի հետաքրքրական երկխոսության.

- Ես ի՞նչ ես տալիս. Թամանյանով էս հարցը չի լուծվի, Չարենցը հազիվ խախտումը կծածկի, - ասաց ավտոտեսուչը:

- Ի՞նչ Չարենց, ես Մռավյանով եմ բարձրացում, դեռ Չարենցի փողոց շատ կա, հետո էլ ո՞ր խախտման համար ես կանգնեցրել...

- Չգիտե՞ս, որ էս օրերին խախտում-մախտում չկա, որ ուզեմ էնքան բան կհմարեմ: Լսի, Չարենցով թե չես ուզում գնալ, մի քիչ էլ բալանուտ ամես, ստիպված թուամայանից կգրկվես:

- Բայց ես ո՞չ Չարենցի, ո՞չ էլ Թունանյանի փողոցներով չեմ գնացել ու չեմ էլ գնալու, ես իմ հաճախորդին Ալեք Մանուկյան

յան 9 հասցեն եմ տանում, չե՞ս հավատում՝ իրեն հարցրու:

Ես էլ պնդեցի, որ Յանրապետության հրապարակից վարորդի ասած հասցեն եմ պատվիրել և նա որևէ խախտում չի արել...

- Այ թույրիկ ջան, խախտում արե՞լ է, թե՞ չէ, դա ես եմ որոշում, հիմա մի հատ ակտ կգրեմ, այ էդ ժամանակ Իսահակյանով կամ Սարյանով հազիվ պրծնեք, բա...

Այդ բոլորից հետո նոր հասկացանք, որ խոսքը հայկական դրամների վրա եղած դեմքերին էր վերաբերում, և որ նրանց անունով էլ պայմանավորված է խախտման այսպես կոչված «տույժը»:

Ցավալի փաստ է, որ եթե մրցույթ անցկացվի, թե հայկական դրամների վրա ո՞նց դիմանկարն է պատկերված, այդ մրցույթն առաջինը կշահեն մեր քաղաքի փողոցների հատուկ աննկատ մասերում թաքցված ՊԱՏ-ի աշխատակիցները:

Մարիետա ՄԱԿԱՐՅԱՆ

ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ ԾԻԾԱՂՈՒՄ ԵՆ

ԼԱՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ

Հույն փիլիսոփա Դիոգենեսի անվան հետ են կապված մի շարք գավեշտապատումներ: Ահա նրանցից մեկը.

Աթենքում, հասարակության առջև ելույթ է ունենում մի ապաշնորհ երաժիշտ: Նա այնքան վատ է նվագում, որ բոլոր ունկնդիրները զայրանում և բարձրաձայն արտահայտում են իրենց դժգոհությունը: Ծափահարում է միայն Դիոգենեսը:

- Մի՞թե քեզ դուր եկավ նրա նվագը, - Դիոգենեսին է հարցնում կողքի մտասածը:

- Ամենևին ո՛չ: Բայց ես նրան խրախուսում եմ ոչ թե այն բանի համար, որ վատ է նվագում, այլ՝ որ գողությանը չի զբաղվում:

ԱՇԿԵՐՏՆԵՐԻ ՀՅՈՒՑՆ ԿԱՏԱԿՈՒՄ

Ալեքսանդր Մակեդոնացին վաղ պատանեկան տարիներին սովորում էր կիթառ նվագել:

Մի անգամ ուսուցիչը նրան թելադրում է խփել միայն մեկ լարին, ինչպես պահանջում էր տվյալ երգի մեղեդին: Իսկ Ալեքսանդրը, ցույց տալով մեկ այլ լար, ասում է.

- Ի՞նչը կփոխվի, եթե ես խփեմ այս լարին:

- Ով պատրաստվում է երկիր կառավարել, նրա համար՝ ոչինչ, իսկ ով ցանկանում է երաժիշտ դառնալ՝ շատ բան կփոխվի, - պատասխանում է ուսուցիչը:

Վերջինս հավանաբար սարսափեց Լիհնի ճակատագրից: Բանն այն է, որ Լիհը Հերակլի մանչուկին սովորեցնում էր կիթառ նվագել: Եվ երբ տղան վատ է նվագում, Լիհը զայրանում է: Ի պատասխան ուսուցչի զայրույթի, բարկացած Հերակլը կնոճոցով խփում և սպանում է ուսուցչին:

«ՉԷ՞ ՈՐ ԱՅՍ ԲՈՒՈՐԸ ԲԵՁ ՀԱՄԱՐ ՉԵՄ ՍՏԵՂՈՒՄ»

Մանտուից արտաքսվելուց հետո, օպերային դասական կոմպոզիտոր, հռչակավոր Կլաուդիո Մոնտեվերդին ժամանում է Վենետիկ, որտեղ գլխավորում է սուրբ Մարկոսի տաճարի երգչախումբը:

Այստեղ ևս, հավատարիմ մնալով թատերական իր արվեստին և եկեղեցական «գործին», այլ քաղաքների պատվիրատուների համար գրում է օպերաներ: Պարզ է, որ իր օպերային երաժշտության ազդեցությունը զգացվում էր նաև եկեղեցական ստեղծագործություններում: Մոսկվայի սրբապաշտությունը՝ Ավելին: Սակայն դա տաճարի զվարթ այցելուներին շատ էր դուր գալիս. պակաս դուր չէր գալիս նաև Վենետիկի այլ եկեղեցիների սպասավորներին, ովքեր որպեսզի մնան հետևյալ սկզբունքը. «Աշխարհիկ երաժշտության տակ՝ բարեպաշտական խոսքեր», որը, սակայն, երկար չէր կարող աննկատ մնալ:

Մի անգամ Մոնտեվերդին ժամերգություն է լսում մեկ այլ տաճարում: Լսելով իրեն ծանոթ երաժշտությունը՝ հիացած բացականչում է.

- Ասավա՛ծ իմ, մերի՛ր, չէ՞ որ այս բոլորը քեզ համար չեն ստեղծել:

ԻՆՉ ԱՐԱԾ

Վաղմջական ժամանակներում արքայի հոբինաձ երգերը գրադատելու համար քննադատ

տին բանտ են նետում: Պատժի ժամկետը լրանալուց հետո խեղճ քննադատը նորից է հրավիրվում «նորին մեծություն» հեղինակի մոտ:

- Դե՛, սիրելի՛ս, այս անգամ ի՞նչ կասեք իմ ստեղծագործության մասին, - հարցնում է արքան:

- Քննադատը խոր հոգոց հանելով, դառնում է արքային և ասում.

- Չեղո՞ մեծություն, խնդրում եմ կրկին բանտարկել ինձ:

ՀԵՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՍՍԱՏՈՒԹՅՈՒՆ

Կոմպոզիտոր Լյուլլիի խոստովանահայրը համաձայնում է նրա մեղքերին թողություն չնորհել, պայմանով, որ վերջինս «Աբիլլեսն ու Պոլիքսեն» իր նոր գրած օպերայի բոլոր նոտաներն այրի:

Լյուլլին քրիստոնեական բարեպաշտությամբ համաձայնում է: Նա կարգադրում է օպերայի պարտիտուրան հանձնել քահանային: Վերջինս այրում է «աստանայական» ձեռագիրը:

Կոմպոզիտորի հովանավորներից մեկը, այդ լսելով, դիմում է Լյուլլիին.

- Բատի՛ստ, ասում եմ, որ քո օպերան այրել ես: Սատանան տանի, դու խելագարվել՞ ես, ցնրած հոգևորականի լսելով, այրել սբանչելի երաժշտությունը:

- Հանգստացե՛ք, տե՛ր իմ, հանգստացե՛ք, - շշմջում է նրա ականջին Լյուլլին, - ես լավ գիտեմ, թե ինչ եմ անում, կրկնօրինակն ինձ մոտ է:

ՇԱՏ ՀԱՄԱՐԱԿ

Յոհանն Սերաստիան Բախը իրեն այցելության եկած աշակերտներից մեկի համար նվագում է իր պրելյուդներին:

Երբ մանստրոյի հիասքանչ նվագով տարված, աշակերտը ոգևորության բացականչություններով իր զգացմունքներն է արտահայտում, Բախն ընդհատելով նրան, ասում է.

- Այստեղ զարմանալու ոչինչ չկա. միայն հարկավոր է ժամանակին սեղմել համապատասխան ստեղծող, իսկ մնացածը՝ ինքը, երգեհոնը կանի:

ԹԱՆԿԱՐԺԵԸ ՄԵԾԱՐԱՆԸ

Օբսիդրոլի համալսարանը հռչակավոր կոմպոզիտոր Գեորգ Ֆրիդրիխ Հենդելին շնորհում է դոկտորի պատվավոր կոչում:

Այս մասին Հենդելին գրավոր հայտնում է համալսարանի քարտուղարը և միաժամանակ հաղորդում, որ դիպլոմի համար պետք է որոշակի գումար մուծել:

- Ի՞նչ, - կարդալով նամակը, զայրանում է կոմպոզիտորը, - այն բանի համար, որ ես պետք է դառնամ այդ դատարկաբանների պաշտոնակիցը, դեռ պետք է վճարե՞մ: Երբե՛ք:

ԱՎՈՒՍՏԻԿԱՅԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Հենդելի առաջին համերգը Լոնդոնում հաջողություն չունեցավ: Այդ բանը շատ անհանգստացրեց կոմպոզիտորի բարեկամներին: Սակայն ինքը՝ Հենդելը, հուզված չէր:

- Մի՛ հուզվեք, - հանգստացնում էր նա, - դատարկ դահլիճում երաժշտությունն ավելի լավ է հնչում:

«Горцарар»

Издается с июля 1999г.

АВТОР ПРОЕКТА-ВАГРАМ БЕКЧЯН

Зам. гл. редактора - **Роза ГУЛЯН**
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Ռոզա ԴՈՒԼՅԱՆ

ИЗДАТЕЛЬ

Издательский Дом

«ШАГАНЭ»

Лицензия серия ИД № 02313

Журнал зарегистрирован в Министерстве Российской Федерации по делам печати, телерадиовещания и средств массовых коммуникаций
Регистрационный номер

ПИ № 77-5015

Авторские материалы не рецензируются и не возвращаются. Переписку с читателями редакция не ведет. Мнение авторов может не совпадать с мнением редакции.

Материалы со знаком ♣ публикуются на правах рекламы.

Редакция не несет ответственности за содержание рекламных объявлений.

ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА - ЕЖЕМЕСЯЧНО

Отпечатано

ОАО «Калужская типография стандартов»
Формат А3, объём 5,5 п.л.
тираж 1500 экз. Зак. № 187

Территория распространения:
Российская Федерация, страны СНГ, зарубежные страны.

В номере использованы материалы «АЗГ», «АРАВОТ», «ГА», «ЕТЕР», «ԻԱԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ», «ԻՐԱՎՄՈՒՆԿ», «ՉԻ», «НОВОЕ ВРЕМЯ», «ВОЗНИ».

Цена свободная.

248001, г. Калуга, ул. Суворова, 160. тел.: (0842)-56-59-29, E-Mail: gortsarar@kaluga.ru факс: (0842) 565-929,

www.gortsarar.ru



E-Mail: bshahanev@kaluga.ru